ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ՝ ՈՐՊԵՍ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԵՎԱՆ 2017

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ... 6

ԳԼՈՒԽ 2. ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ 12

ԳԼՈՒԽ 3. ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 62

ԳԼՈՒԽ 4. ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐ 74

ԳԼՈՒԽ 5. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ..... 81

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Միավորված ազգերի կազմակերպության «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի՝ 1984 թվականի կոնվենցիայի 2002 թվականի դեկտեմբերի 18-ին ընդունած կամընտիր արձանագրությամբ (այսուհետ՝ Կամընտիր արձանագրություն) նախատեսվում է ստեղծել կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ, որը պետք է օժտված լինի լայն լիազորություններով, ունենա ազատ մուտքի և համապատասխան ուսումնասիրությունների անցկացման հնարավորություն բոլոր այն վայրերում, որտեղ մարդիկ կարող են զրկված լինել ազատությունից:

Կամընտիր արձանագրության վավերացումից հետո՝ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» 2003 թվականի հոկտեմբերի 21-ի ՀՀ օրենքում 2008 թվականին կատարված փոփոխությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ճանաչվեց Կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ: Այնուհետև, 2015 թվականի դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխություններով պայմանավորված 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքը, որի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին է վերապահված Կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակը (այսուհետ՝ Կանխարգելման մեխանիզմ): Նշված օրենքի 27-րդ հոդվածի համաձայն՝ Կանխարգելման մեխանիզմի կարգավիճակով Պաշտպանի գործունեության նպատակն է խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կանխարգելումը ազատությունից զրկման վայրերում: Այս մեխանիզմի գործառույթների իրականացումն ապահովվում է Պաշտպանի աշխատակազմի Խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչության միջոցով:

Օրենքով 2008 թվականին կանխարգելման մեխանիզմ ճանաչվելուց ի վեր ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին առընթեր գործել է Խոշտանգումների կանխարգելման փորձագիտական խորհուրդ (այսուհետ՝ Փորձագիտական խորհուրդ): Հաշվի առնելով խորհրդի կազմի վերաբերյալ իրավական ուժը կորցնելը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից 2016 թվականի ընթացքում ստեղծվել է նոր կազմով Փորձագիտական խորհուրդ: Փորձագիտական խորհրդի կազմում ընդգրկվել են հասարակական կազմակերպությունների՝ խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման ոլորտում մասնագիտացած ներկայացուցիչներ և նույն ոլորտի անկախ մասնագետներ (սոցիոլոգ, հոգեբան, բժիշկ և այլն):

Փորձագիտական խորհրդի նպատակն է աջակցել Պաշտպանին վեր հանելու ազատությունից զրկված անձանց պահման պայմաններին առնչվող խնդիրները և ներկայացնելու դրանց լուծմանն ուղղված առաջարկներ:

2016 թվականի ընթացքում կատարվել են այցեր ՀՀ արդարադատության նախարարության բոլոր քրեակատարողական հիմնարկներ, ՀՀ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրեր, ինչպես նաև հոգեբուժական հաստատություններ: Դրանց մասնակցել են նաև Փորձագիտական խորհրդի ներկայացուցիչները:

2016 թվականի ընթացքում այցերն իրականացվել են հստակ մեթոդաբանությամբ: ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներ կատարվել են 110 այցեր, որոնցից 10-ը՝ Պաշտպանի հաստատած ժամանակացույցով՝ պլանային կարգով, իսկ 100-ը՝ ըստ անհրաժեշտության: Պաշտպանի հաստատած ժամանակացույցով կատարվել է նաև 9 այց ՀՀ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրեր, 1 այց՝ ՀՀ առողջապահության նախարարության ենթակայության տակ գործող հոգեբուժական հաստատություն. միաժամանակ սույն հաստատություններ իրականացվել են նաև կրկնայցեր և ըստ անհրաժեշտության այցեր:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչությունն այցեր իրականացնելու հետ միասին քննարկել է նաև ազատությունից զրկման վայրերում պահվող անձանց իրավունքներին առնչվող անհատական բողոքներ:

Ազատությունից զրկման վայրեր կատարված այցերի ընթացքում ուսումնասիրվել են պահման պայմանները, տեղի են ունեցել առանձնազրույցներ ազատությունից զրկված անձանց և այդ վայրերի ծառայողների հետ: Վեր հանված խնդիրները քննարկվել են ազատությունից զրկման վայրերի վարչակազմի ներկայացուցիչների հետ, ուսումնասիրվել են ազատությունից զրկված անձանց վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը, իրականացվել է ստացված տեղեկությունների համադրում և վերլուծություն, վեր են հանվել օրենսդրական կարգավորման բացերը և թերությունները:

Այցերի, ինչպես նաև անհատական բողոքների քննարկման արդյունքում արձանագրված խնդիրների, դրանց արդյունավետ լուծումների վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում իրականացվել են քննարկումներ, կատարված այցերի վերաբերյալ իրավասու մարմիններից պահանջվել են պարզաբանումներ, կայացվել են մարդու իրավունքների կամ ազատությունների խախտում արձանագրելու մասին որոշումներ՝ մատնանշելով առկա խնդիրները, առաջարկելով դրանց լուծման իրավական և գործնական մեխանիզմներ: Ներկայացվել են ոլորտը կարգավորող իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններ:

Կանխարգելման մեխանիզմի համար տեղեկությունների աղբյուր են հանդիսացել նաև Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված անհատական բողոքները, ազատությունից զրկման վայրեր կատարված այցերը, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների, միջազգային կառույցների, հասարակական կազմակերպությունների և դիտորդական խմբերի հրապարակած նյութերն ու ուսումնասիրությունները:

Սույն զեկույցում ներկայացված են 2016 թվականի ընթացքում արձանագրված անհատական ու համակարգային խնդիրները, դրանց լուծման ուղղությամբ ձեռնարկված միջոցները, ինչպես նաև արձանագրված դրական զարգացումները:

ԳԼՈՒԽ 1. ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման ոլորտը բնույթով այնպիսին է, որ պահանջում է անընդհատ ու հետևողական աշխատանք՝ ոլորտում միջազգայնորեն ընդունված սկզբունքներին համապատասխան: Հարցը հատկապես զգայուն է այն պատճառով, որ վերաբերում է այնպիսի վայրերի, որտեղ անձինք պահվում են սեփական կամքին հակառակ, այսինքն՝ զրկված են ազատությունից: Այս վայրերը թե՛ իրավունքների ապահովման, թե՛ անվտանգության ապահովման տեսանկյունից ռիսկային են, ուստի պահանջում են աշխատանքի խիստ մասնագիտական մոտեցումներ, որոնք ուղղված լինելով կոնկրետ խնդիրների վեր հանմանը՝ պետք է հանգեն կոնկրետ արդյունքների:

Կանխարգելման մեխանիզմի գործունեության առանցքը կազմել են մի շարք հիմնարար մոտեցումներ: Խոսքն առաջին հերթին վերաբերում է **ազատությունից զրկված անձի նկատմամբ վստահության կանխավարկածի** արմատավորմանը: Սա նշանակում է, որ **ազատությունից զրկման վայրում պահվող յուրաքանչյուր անձի նկատմամբ պետք է ցուցաբերվի անհատական մոտեցում՝** անկախ ենթադրաբար կամ դատարանի դատավճռով հաստատված արարքի ծանրությունից կամ բնույթից: Այդ մոտեցումը պետք է հիմքում ունենա ազատությունից զրկված անձի **վարքագծի ռիսկային գնահատման մեթոդը**: Ընդ որում, հանցանքի համար արդեն իսկ դատապարտվածների պարագայում պետք է գործի նրանց **ազատ արձակվելուն աստիճանական նախապատրաստելու հիմնարար մեխանիզմը՝ ազատությունից զրկման վայր նրանց մուտք գործելու առաջին օրից սկսած**: Կանխարգելման մեխանիզմի գործունեության ելակետային սկզբունքներից է նաև ազատությունից զրկված անձանց ներգրավումն իրենց վերաբերող որոշումների կայացմանը. **ցանկացած անձ**, **այդ թվում՝ ազատությունից զրկված անձը**, **որ չի կարող օտարացած լինել իրեն վերաբերող որոշումների կայացման հարցում**:

Թվարկված ելակետային մոտեցումները բխում են նաև այն հիմնարար գաղափարից, որ **արդար դատաքննության պահանջներն ու վատ վերաբերմունքի բացարձակ արգելքը չեն դադարում գործելուց**, **երբ մարդը հայտնվում է ազատությունից զրկման վայրում**:

Կանխարգելման մեխանիզմի աշխատանքի կարևորագույն սկզբունքներից է նաև ազատությունից զրկման վայրում կատարած աշխատանքի արդյունքում **ձեռք բերած տեղեկության գաղտնիության պահպանումը**: Սա պետք է դիտարկել նաև մեկ այլ սկզբունքի համատեքստում, որն առնչվում է արդյունքի հասնելու հարցում **համատեղ աշխատանքին ու չվնասելուն**: Դրա հետ միասին, կանխարգելման մեխանիզմի ներկայացուցիչների կողմից գործադրվել է արձանագրված խնդիրների լուծմանն

ուղղված **առաջարկների՝ միջազգայնորեն ընդունված երկու հիմնական տեսակ՝ անմիջապես ներկայացվող առաջարկներ**, **ինչպես նաև անհրաժեշտ ուսումնասիրությունից հետո գրավոր ձևակերպմամբ իրավասու մարմնին ներկայացվող պահանջներ կամ առաջարկներ**:

Վերոգրյալով հանդերձ, ինչպես արդեն նշվել է սույն զեկույցի ներածությունում, Կամընտիր արձանագրության հիման վրա 2008 թվականին «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը[1] լրացվեց 6.1 հոդվածով, որով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ճանաչվեց կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ:

Այս միակ դրույթը, սակայն, չէր սահմանում Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործառույթների ու ազատությունից զրկման վայրերի շրջանակը, չէր կանխորոշում կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակում համագործակցությունը քաղաքացիական հասարակության հետ: Առկա չէին բավարար երաշխիքներ ինչպես կանխարգելման մեխանիզմի աշխատակից պետական ծառայողների, այնպես էլ հասարակական կազմակերպությունների ու անկախ փորձագետների համար: Բացակայում էին նրանց համատեղ աշխատանքի իրավական սկզբունքները: Առկա կարգավորումները հնարավորություն չէին տալիս նաև ապահովելու Կանխարգելման մեխանիզմի աշխատանքի արդյունքում ազատությունից զրկման վայրերում ձեռք բերած տեղեկությունների գաղտնիությունը: Ավելին, նախկին կարգավորումները հնարավորություն չէին տալիս վարձատրել Պաշտպանին կից Խոշտանգումների կանխարգելման խորհրդի անդամներին, չէին լուծում նրանց կողմից Կանխարգելման մեխանիզմի կարգավիճակի շրջանակներում ձեռք բերված տեղեկությունների գաղտնիության պահպանման խնդիրը:

ՄԱԿ-ի Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեի՝ կանխարգելման ազգային մեխանիզմին խորհրդատվական աջակցություն տրամադրելու նպատակով 2013 թվականի սեպտեմբերին կատարած այցի վերաբերյալ 2014 թվականի հոկտեմբերի 15-ին Հայաստանի Հանրապետությանը ներկայացված զեկույցում, ի թիվս այլնի, շեշտադրվել է նաև պետության պարտավորությունը՝ կանխարգելման ազգային մեխանիզմին անհրաժեշտ ռեսուրսների տրամադրման վերաբերյալ, ինչը ենթադրում է կանխարգելման ազգային մեխանիզմի աշխատանքներին ներգրավված քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների վարձատրություն:

Կանխարգելման մեխանիզմների գործունեության ֆինանսավորման, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների պատշաճ վարձատրության ապահովման հարցին անդրադարձել է նաև Խոշտանգումների կանխարգելման ասոցիացիան:

[1] Ուժը կորցրել է 2017 թվականի փետրվարի 4-ին:

Արդյունքում՝ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) 28-րդ հոդվածն արդեն սահմանում է ինչպես Պաշտպանի լիազորությունները՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմ, այնպես էլ տալիս է ազատությունից զրկման վայրերի հստակ շրջանակ:

Միաժամանակ, Սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակի շրջանակներում մասնագիտական աջակցություն ստանալու նպատակով այդ մասին պաշտոնական կայքում կամ հրապարակային այլ աղբյուրներով արված հայտարարությամբ առաջադրված պահանջների հիման վրա Պաշտպանի կողմից ներգրավվում են անկախ մասնագետներ և (կամ) հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ովքեր ձեռք են բերում կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետի կարգավիճակ: Սահմանադրական օրենքը սահմանում է նաև, որ այդ փորձագետների աշխատանքի վարձատրությունն իրականացվում է՝ պետական բյուջեի միջոցների հաշվին՝ այդ նպատակով Պաշտպանի աշխատակազմին հատկացված ֆինանսական միջոցներից: Ավելին, ի տարբերություն «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» նախկին օրենքի՝ գործող կարգավորումներն ամրագրում են Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության հատուկ ֆինանսավորման պահանջ *(տե՛ս Սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մաս)*:

Անկախ մասնագետները և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները կանխարգելման ազգային մեխանիզմի աշխատանքներին ներգրավվում են նրանց հետ կնքված պայմանագրի հիման վրա՝ անհատական կարգավիճակով, որն ապահովում է ինչպես նրանց վարձատրության, այնպես էլ փոխադարձ իրավունքների և պարտականությունների ամրագրման հնարավորությունը:

Միաժամանակ, կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետների վրա տարածվում է Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց համար Սահմանադրական օրենքով նախատեսված միայն Պաշտպանի գրավոր համաձայնությամբ բացատրություն տալու կամ հարցաքննվելու երաշխիքը *(տե՛ս Սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մաս)*:

Կանխարգելման մեխանիզմի գործառույթների իրականացումն 2016 թվականի ընթացքում ապահովել է Պաշտպանի աշխատակազմի Խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչությունը, որն ազատությունից զրկման վայրեր իրականացրել է ինչպես մոնիթորինգային այցեր, այնպես էլ զբաղվել է անհատական բողոքների քննարկմամբ, ինչպիսի մոտեցումը չի համապատասխանում կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության միջազգային չափանիշներին:

Այսպես, Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման

ենթակոմիտեի 2016 թվականի հունվարի 25-ի կանխարգելման ազգային մեխանիզմի վերլուծական գնահատման վերաբերյալ փաստաթղթի 8-րդ կետի համաձայն՝ կանխարգելման ազգային մեխանիզմի հիմնական գործառույթը պետք է լինի ազատությունից զրկման վայրեր պարբերաբար այցելությունների իրականացումը՝ ազատությունից զրկված անձանց նկատմամբ վերաբերմունքն ուսումնասիրելու նպատակով: Իսկ անհատական բողոքների քննարկումը, ըստ նույն փաստաթղթի չափանիշների, չի մտնում կանխարգելման ազգային մեխանիզմի մանդատի մեջ:

Սույն խնդրի լուծման նպատակով նախատեսվում է նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստեղծել առանձին ստորաբաժանում՝ ազատությունից զրկման վայրերում գտնվող անձանց կողմից ստացվող անհատական բողոքների քննարկման համար:

2016 թվականի ընթացքում սկզբունքային փոփոխության է ենթարկվել նաև Կանխարգելման մեխանիզմի կարգավիճակով Պաշտպանի Մարդու իրավունքների և ազատությունների խախտումները վերացնելու առաջարկ ներկայացնելու մասին որոշումների տրամաբանությունը: Մարդու իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտման մասին տեղեկություններից զատ որոշումներում շեշտադրվում են խախտում արձանագրելու համար նշանակություն ունեցող հանգամանքները: Որոշման պատճառաբանական հատվածում արդեն իսկ ձևավորվել են իրավական հստակ չափանիշներ՝ առաջարկելով բարձրացրած համակարգային խնդիրների լուծման ընդհանուր միջոցառումներ, իսկ խախտում արձանագրելուն զուգահեռ առաջարկվել են կոնկրետ բողոքի կապակցությամբ՝ դրանց վերացմանն ուղղված անհատական միջոցառումներ: Սրանք բոլոր այն կանոններն են, որոնք կիրառվում են նաև միջազգային դատական ատյանների, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից:

2016 թվականի ընթացքում **Կանխարգելման մեխանիզմի կարողությունների զարգացման** նպատակով ձեռք են բերվել մի շարք անհրաժեշտ սարքավորումներ, կազմակերպվել են միջոցառումներ, քննարկումներ և դասընթացներ, որոնք հակիրճ ներկայացվում են ստորև.

2016 **թվականի հուլիսի** 11-15-**ը** Եվրոպայի խորհրդի, Եվրոպական միության, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության համագործակցությամբ «Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի բանտերում» ծրագրի շրջանակներում կազմակերպվել են դասավանդողների վերապատրաստման դասընթացներ, որին մասնակցել են նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները:

Դասընթացներին մասնակցած ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներին հրավիրել են անցկացնել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության ծառայողների վերապատրաստումները 2017 թվականի ընթացքում: Դասընթացների

հիմնական նպատակներն են զարգացնել ծառայողների գիտելիքները բանտային բժշկության և ազատությունից զրկված անձանց իրավունքների վերաբերյալ, մասնավորապես՝ քննարկել քրեակատարողական հիմնարկներում բժշկական էթիկայի խնդիրները, խոցելի խմբերի առանձնահատկություններն ազատությունից զրկման վայրերում, խոշտանգումների և վատ վերաբերմունքի արգելքը, ինչպես նաև ազատությունից զրկված անձանց հիմնարար իրավունքներին առնչվող այլ թեմաներ:

2016 **թվականի սեպտեմբերի** 15-**ին** ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչության աշխատակիցների և Հայկական հոգեբուժական ասոցիացիայի աշխատանքային խմբի մասնակցությամբ քննարկվել է «**Հոգեբույժի մասնագիտական էթիկայի կոդեքսի**» **նախագիծը**, որն ավելի վաղ ուղարկվել էր Պաշտպանին՝ կարծիքի:

2016 **թվականի դեկտեմբերի** 6-**ին** տեղի է ունեցել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին առընթեր Խոշտանգումների կանխարգելման փորձագիտական խորհրդի ընդլայնված նիստ, որին մասնակցել են նաև ներկայացուցիչներ ՀՀ արդարադատության նախարարությունից, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունից, ՀՀ գլխավոր դատախազությունից, ՀՀ քննչական կոմիտեից, ՀՀ հատուկ քննչական ծառայությունից, ինչպես նաև մի շարք հասարակական կազմակերպություններից:

Քննարկման առանցքում են եղել պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի օրենսդրական փոփոխությունները՝ուղղված առկա օրենսդրական և գործնական խնդիրների լուծմանը: Անդրադարձ է կատարվել Հայաստանում ազատությունից զրկման վայրերում ինքնասպանության դեպքերին, դրանց վիճակագրությանը, ինչպես նաև կանխարգելման ուղղությամբ ձեռնարկվող և ձեռնարկվելիք միջոցառումներին:

Քննարկվել են նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի լիազորությունների իրականացման ընթացքում վեր հանված մի շարք օրենսդրական խնդիրներ և դրանց լուծման մեխանիզմներ, մասնավորապես՝ մերձավոր ազգականների հետ շփումներն ապահովելու նպատակով դատապարտյալին մեկ ուղղիչ հիմնարկից մեկ այլ հիմնարկ տեղափոխելու, դատապարտյալներին և կալանավորված անձանց կարճաժամկետ մեկնումներ տրամադրելու օրենսդրական սահմանափակումների, կալանավորված անձանց անձը հաստատող փաստաթուղթ տրամադրելու օրենսդրական կարգավորման բացակայության վերաբերյալ հարցեր:

Ներկայացված առաջարկները, դիտարկումները և կարծիքները գրավոր ներկայացվել են համապատասխան մարմիններին քննարկված ոլորտներում օրենսդրական փոփոխություններ կատարելու և իրավակիրառ պրակտիկայի հետագա բարելավման նպատակով:

Քննարկման ընթացքում հստակեցվել են «Հոգեբույժի մասնագիտական էթիկայի կոդեքսի» մի շարք հիմնական հասկացություններն ու դրույթները, ներկայացվել և քննարկվել են խնդրահարույց դրույթների վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմի նկատառումները և համապատասխան միջազգային փորձը:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և մի շարք միջազգային կազմակերպությունների համագործակցության շրջանակներում իրականացվել են վերապատրաստումներ և դասընթացներ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: Դասընթացներին մասնակցել են Պաշտպանի աշխատակազմի, Պաշտպանին առընթեր Խոշտանգումների կանխարգելման փորձագիտական խորհրդի անդամ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և անկախ փորձագետներ, ինչպես նաև Արդարադատության նախարարության քրեակատարողական համակարգի համապատասխան ոլորտի ծառայողները:

2016 **թվականի օգոստոսի** 27-**ին և** 28-**ին**, Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության աջակցությամբ «Աջակցություն քրեական արդարադատության ոլորտի բարեփոխումներին, ինչպես նաև վատ վերաբերմունքի և անպատժելիության կանխարգելումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում անցկացվել է «Բժշկական սպասարկումը փակ հաստատություններում» խորագրով երկօրյա դասընթաց՝ միջազգային փորձագետի մասնակցությամբ:

2016 **թվականի սեպտեմբերին** Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի միջև համագործակցության շրջանակներում անցկացվել է «Մարդու իրավունքների պաշտպանությունը քրեակատարողական հիմնարկներում» թեմայով երկօրյա դասընթաց:

2016 **թվականի դեկտեմբերի** 3-**ին և** 4-**ին** Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության աջակցությամբ անցկացվել է «Կանայք և անչափահասներն ազատությունից զրկման վայրերում» խորագրով երկօրյա դասընթաց՝ միջազգային փորձագետների մասնակցությամբ:

2016 **թվականի հոկտեմբերին** «**Միջազգային բանտային բարեփոխումներ**» կազմակերպության աջակցությամբ ձեռք են բերվել ազատությունից զրկման վայրերում ջերմաստիճանի և խոնավության, լույսի, տարածության և մակերեսի չափման հատուկ սարքավորումներ: Նշված սարքավորումներն օգտագործվել են քրեակատարողական հիմնարկներ, ձերբակալված անձանց պահման և ազատությունից զրկման այլ վայրերում մոնիթորինգ իրականացնելիս, ինչը բարձրացրել է խոշտանգումների կանխարգելման ոլորտում գործունեության արդյունավետությունը:

ԳԼՈՒԽ 2. ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ

Գերբնակեցում, խցերում անհավասարաչափ տեղաբաշխում

2016 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության կողմից քայլեր են ձեռնարկվել գերբնակեցման խնդիրը լուծելու ուղղությամբ, մասնավորապես՝ շահագործման են հանձնվել «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի վեց մասնաշենքերը (1240 լրակազմով), ինչը ստեղծել է ավելի մեծ թվով ազատությունից զրկված անձինք ունենալու հնարավորություն: Արդյունքում, ավելի քան 649 ազատությունից զրկված անձ, այդ թվում՝ ցմահ ազատազրկման դատապարտված 20 անձ տեղափոխվել են «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ:

Այնուամենայնիվ, 2016 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության որոշ քրեակատարողական հիմնարկներում արձանագրվել են գերբնակեցման և խցերում անհավասարաչափ բաշխման խնդիրներ:

Այսպես, այցերի ընթացքում «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի որոշ խցերում արձանագրվել են գերբնակեցման խնդիրներ, օրինակ՝ թիվ 6, 5, 4 և 04 խցերը, որոնց մակերեսը կազմում է մոտ 30-35 քառակուսի մետր տարածք, այցի ընթացքում բնակեցված են եղել մինչև 10 ազատությունից զրկված անձանցով:

Մեկ անձին հասանելի բնակելի տարածության չպահպանման խնդիրներ են արձանագրվել նաև նույն քրեակատարողական հիմնարկի այլ խցերում: Այսպես, քրեակատարողական հիմնարկի 3-րդ հարկի թիվ 45 խցի մակերեսը կազմում է մոտ 35 քմ, այցի ընթացքում այն կահավորված է եղել 12 մահճակալով, որտեղ պահվել են ազատությունից զրկված 12 անձինք: Ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ պատուհանի մոտ գտնվող 2 մահճակալները չեն օգտագործվում, որի հետևանքով առաջանում է հերթափոխով քնելու խնդիր: Պարզվել է նաև, որ խցում պահվող ազատությունից զրկված անձանց թիվը երբեմն հասնում է մինչև 15-ի:

Մեկ այլ՝ 35 քմ մակերես ունեցող խցում այցի պահին տեղադրված է եղել 12 մահճակալ, որտեղ բնակվել են 12 կալանավորված անձինք: Առանձնազրույցի ընթացքում կալանավորված անձանցից մեկը նշել է, որ շուրջ 10 օր քնելու տեղով ապահովված չի եղել. խցում պահվել են ազատությունից զրկված 14 անձ, և ինքն ու խցում բնակվող մեկ այլ կալանավորված անձ քնել են հերթով: Անձը նշել է, որ քնելու տեղով ապահովվելուց հետո, սակայն, ունեցել է նոր անկողնային պարագաների և սպիտակեղենի տրամադրման խնդիր:

Գերբնակեցման խնդիրներ են արձանագրվել նաև «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում: Յուրաքանչյուր խցում տեղաբաշխված է եղել 2-6 կալանավորված անձ: Այսպես՝ ազատությունից զրկված 2 անձի տեղաբաշխման

դեպքում օգտագործվել են ավելի փոքր չափերի խցեր՝ մոտ 7-8 քմ տարածքով (ներառյալ՝ սանհանգույցը), իսկ օրինակ՝ 17 քմ և 19 քմ խցերում (ներառյալ՝ սանհանգույցը) պահվել է մինչև 6 ազատությունից զրկված անձ: Կրկնայցերի ժամանակ նշված խնդիրները, սակայն, լուծված են եղել: Այցերի ընթացքում արձանագրվել է նաև, որ մեկ այլ՝ 15 քմ խցում պահվել է ազատությունից զրկված 5 անձ:

Քրեակատարողական հիմնարկներ կատարած այցերի արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ խցերում ազատությունից զրկված անձանց անհավասարաչափ բաշխումը ոչ միշտ է պայմանավորված եղել օրենսդրությամբ սահմանված պահանջներով կամ անվտանգության և համակեցության նկատառումներով:

Խցերում անհավասարաչափ տեղաբաշխման խնդիր արձանագրվել է նաև գերբնակեցում չունեցող քրեակատարողական հիմնարկներում, որի արդյունքում կրկին չի պահպանվել ՀՀ օրենսդրությամբ ամրագրված ազատությունից զրկված մեկ անձին հատկացվող բնակելի տարածության չափը: Այսպես, «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում այցի պահին գերբնակեցում չի արձանագրվել (լրակազմ՝ 373, փաստացի բնակվող՝ 353), սակայն տարբեր տեսակի ուղղիչ հիմնարկներում հավասարաչափ տեղաբաշխման խնդիրներ են արձանագրվել: Օրինակ՝ չնայած այն հանգամանքին, որ բոլոր դատապարտյալներն ապահովված են եղել քնելու տեղերով, այնուամենայնիվ կիսափակ տիպի ուղղիչ հիմնարկում նախատեսված 42 լրակազմի դեպքում պահվել է մինչև 83 դատապարտյալ: Բացի այդ, «Գորիս» քրեակատարողական հիմնարկի կալանավորված անձանց պահման համար լրակազմով նախատեսված է 35 տեղ, սակայն այցի պահին քրեակատարողական հիմնարկում պահվել է 51 կալանավորված անձ:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 73-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ ձերբակալված, կալանավորված, դատապարտված անձանց հատկացված բնակելի տարածության չափը ***չի կարող պակաս լինել չորս քառակուսի մետրից՝ յուրաքանչյուր անձի համար****:*

Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն (այսուհետ՝ ԽԿԿ) իր 2-րդ ընդհանուր հաշվետվության մեջ փաստել է, որ ազատությունից զրկման վայրում նախատեսվածից ավելի մեծ թվով անձանց պահելու անհրաժեշտությունը ծայրահեղ վատ է ազդում այնտեղ մատուցվող բոլոր ծառայությունների և իրականացվող միջոցառումների վրա. զգալիորեն նվազեցնում է կյանքի ընդհանուր մակարդակը: Ավելին, ազատությունից զրկման վայրի կամ նրա որևէ մասի գերբնակեցման աստիճանն ինքնըստինքյան կարող է լինել անմարդկային կամ նվաստացուցիչ (տե՛ս ԽԿԿ-ի գործունեության մասին 3-րդ ընդհանուր զեկույցը,

որն ընդգրկում է 1992 թվականի հունվարի 1-ից դեկտեմբեր 31-ն ընկած ժամանակահատվածը, կետ 46):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում հետևողականորեն արտահայտվում է այն սկզբունքային իրավական դիրքորոշումը, որի համաձայն՝ ազատությունից զրկված անձանց գերբեռնվածության պայմաններում պահելն ինքնին կարող է որակվել անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք, եթե անգամ իրավասու մարմինները նման նպատակ չեն հետապնդել (տե՛ս Լաբզովն ընդդեմ Ռուսաստանի գործով 2005 թվականի հունիսի 16-ի վճիռը, գանգատ թիվ 62208/00, կետ 44, Նովոսելովն ընդդեմ Ռուսաստանի 2005 թվականի հունիսի 2-ի վճիռը, գանգատ թիվ 66460/01, կետ 41, Մայզիտն ընդդեմ Ռուսաստանի 2005 թվականի հունվարի 20-ի վճիռը, գանգատ թիվ 63378/00, կետ 39, Նովոսելովն ընդդեմ Ռուսաստանի 2005 թվականի հունիսի 2-ի վճիռը, գանգատ թիվ 66460/01, կետ 41, Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի 2002 թվականի հունիսի 15-ի վճիռը, գանգատ թիվ 47095/99, կետ 97, Պիրսն ընդդեմ Հունաստանի 2001 թվականի ապրիլի 19-ի վճիռը, գանգատ թիվ 28524/95, կետ 69 և այլն):

Հարկ է նշել, որ անձնական նվազագույն տարածքի բացակայության առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա) 3-րդ հոդվածի խախտում է արձանագրվել նաև Հայաստանի վերաբերյալ կայացված մի շարք վճիռներով (Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի գործով 2008 թվականի դեկտեմբերի 2-ի վճիռ, գանգատ թիվ 31237/03, կետեր 40-59 և Կարապետյանն ընդդեմ Հայաստանի գործով 2009 թվականի հոկտեմբերի 27-ի վճիռ, գանգատ թիվ 22387/05, կետեր 33-47):

ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական տվյալների համաձայն՝ 2017 թվականի փետրվարի 1-ի դրությամբ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատությունից զրկված անձանց թվաքանակը և սահմանված լրակազմն ունեն հետևյալ պատկերը (*<u>գերբնակեցված քրեակատարողական հիմնարկներն ընդգծված են</u>*)՝

ՔԿ հիմնարկ	Բուժական ուղղիչ հիմնարկ (ըստ լրակազմի)	Բաց ՈՒՀ (ըստ լրակազմի)	Բաց ՈՒՀ 01.02.17թ. դրությամբ	Կիսաբաց ՈՒՀ (ըստ լրակազմի)	Կիսաբաց ՈՒՀ 01.02.17թ. դրությամբ	Կիսափակ ՈՒՀ (ըստ լրակազմի)	Կիսափակ ՈՒՀ 01.02.17թ. դրությամբ	Փակ ՈՒՀ (ըստ լրակազմի)	Փակ ՈՒՀ 01.02.17թ. դրությամբ	Կալանավոր. պահելու վայր (ըստ լրակազմի)	Կալանավոր. պահելու վայր 01.01.17թ, դրությամբ	ԸՆԴԱՄԵՆԸ (ըստ լրակազմի)	ԸՆԴԱՄԵՆԸ 01.02.17թ. դրությամբ
«Նուբարաշեն» ՔԿՀ	-	20	6	62	40	50	24	138	85	550	662	820	817
«Գորիս» ՔԿՀ	-	50	3	10	7	20	16	100	41	35	52	215	119
«Արթիկ» ՔԿՀ	-	25	3	141	128	42	82	115	83	50	56	373	352
«Սևան» ՔԿՀ	-	15	4	484	468	50	10	-	-	-	-	548	486
«Կոշ» ՔԿՀ	-	25	-	50	272	465	172	100	4	-	-	640	448
«Աբովյան» ՔԿՀ	-	29	7	81	84	40	21	15	7	100	40	265	159
«Վարդաշեն» ՔԿՀ	-	200	38	70	121	25	22	10	5	34	50	339	236
«Վանաձոր» ՔԿՀ	-	10	3	15	5	30	86	110	63	80	45	245	202
«Դատ. հիվ.» ՔԿՀ	424	10	2	14	24	5	27	5	33	6	32	464	118
«Հրազդան» ՔԿՀ	-	-	-	4	1	24	67	107	81	80	54	215	203
«Երևան-Կենտրոն» ՔԿՀ	-	-	-	5	-	3	1	7	6	45	39	60	45
«Արմավիր» ՔԿՀ	-	5	-	83	11	550	294	402	173	200	171	1240	649
ԸՆԴԱՄԵՆԸ՝	424	389	66	1018	1161	1304	822	1109	581	1180	1201	5424	3831

Ամփոփելով հարկ է ընդգծել, որ պետությունը պետք է շարունակական քայլեր ձեռնարկի ազատությունից զրկված անձանց ներպետական և միջազգային չափանիշներին համահունչ անձնական տարածությամբ ապահովելու ուղղությամբ: Խնդիրը պետք է դիտարկել ինչպես ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի՝ նվազագույն բնակելի տարածության (չորս քառակուսի մետր), այնպես էլ մարդկային արժանապատվության հետ համատեղելի պայմաններով անձնական տարածության ապահովման տեսանկյունից:

<u>Ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման իրավունքի ապահովման հետ կապված խնդիրներ</u>

2016 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներ իրականացված մոնիթորինգային այցերի, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված անհատական դիմումների ուսումնասիրման արդյունքում վեր են հանվել ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման իրավունքի ապահովման հետ կապված մի շարք համակարգային խնդիրներ: Դրանք, մասնավորապես, հանգում են հետևյալին.

<u>Խնամքի ապահովումը քրեակատարողական հիմնարկներում</u>

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների և իրականացված այցերի արդյունքում արձանագրվել է, որ ազատությունից զրկված հիվանդ անձանց տրամադրվող խնամքի ծավալները ոչ միշտ են բավարար լինում: Միջազգային չափանիշները պահանջում են, որ այսպիսի դեպքերում ազատությունից զրկված անձինք տեղափոխվեն մասնագիտացված բժշկական կենտրոն: Մինչդեռ, քրեակատարողական հիմնարկներում կատարված ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ բավարար ծավալով խնամքի տրամադրման անհնարինության դեպքում անձանց խնամքը քաղաքացիական բուժական հիմնարկում չի կազմակերպվել: Խնամքի ապահովման հետ կապված՝ ուսումնասիրվել է նաև հատուկ մասնագիտական պատրաստվածություն չունեցող անձի կողմից խնամքը կազմակերպելու հարցը: Մասնավորապես, իրականացված մոնիթորինգային այցերի ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ անձի խնամքը կազմակերպվել է ազատությունից զրկված այլ անձանց (խցակիցների) կողմից: Այս առումով, հարկ է նկատել, որ միջազգային պահանջներին համապատասխան՝ պետությունը պարտավոր է ապահովել ազատությունից զրկված՝ հատուկ կարիքներ ունեցող անձանց մշտական խնամքը հատուկ պատրաստում ունեցող մասնագետների կողմից: Հետևաբար, խցակցի կողմից ազատությունից զրկված անձի խնամքն իրականացնելն ինքնին կարող է խնդրահարույց չլինել, եթե այդ խնամքն իրականացվում է ազատությունից զրկված այնպիսի անձի կողմից, ով ունեցել է համապատասխան վերապատրաստում:

<u>Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության ապահովումը</u>

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ հիմնականում պետական միջոցների հաշվին անհրաժեշտ բժշկական միջամտությունը չի կազմակերպվում համապատասխան ֆինանսական հատկացումների ոչ բավարար լինելու պատճառով: Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված այդպիսի բողոքների քննարկման

շրջանակներում պարզվել է, որ խնդիրը մեծամասամբ պայմանավորված է պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում պետական ծրագրերով առաջացած գերակատարումներով, որոնց համար պետք է նախատեսվի լրացուցիչ ֆինանսավորում: Մինչդեռ, հարկ է նկատել, որ թեև առողջության պահպանության իրավունքի լիարժեք ապահովումն ուղղակիորեն կախված է պետության ֆինանսական հնարավորություններից, այդ հանգամանքը (որպես հիմնավորում մատնանշվող հատկացումների անբավարարությունը) չի ազատում ոլորտի պատասխանատու մարմիններին գործուն քայլեր ձեռնարկելու և առաջին իսկ հնարավորության դեպքում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն տրամադրելուց՝ անձի առողջական վիճակով պայմանավորված առաջնահերթությունների հաշվառմամբ:

2016 թվականի ընթացքում վեր են հանվել նաև «Մեթադոնային փոխարինող բուժման» ծրագրի շրջանակներում ազատությունից զրկված անձանց ներգրավվածության ապահովման հետ կապված խնդիրներ, որոնք ևս պայմանավորված են ծրագրի շարունակականության ապահովման և բավարար ֆինանսական միջոցների անհրաժեշտությամբ:

<u>Քրեակատարողական հիմնարկների բժշկական անձնակազմի կադրային համալրվածությունը, բժշկական տեխնիկայի բավարար հագեցվածությունն ու դեղորայքային ապահովվածությունը</u>

Բժշկական անձնակազմերի համալրվածության վերաբերյալ կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս վեր հանել կադրային հագեցվածության հետ կապված այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ ատամնաբուժական և հոգեբուժական ծառայությունների հասանելիությունը, ընդհանուր մասնագիտացման բժշկի և համապատասխան հմտություններ ունեցող որակավորված բուժաշխատողների անբավարարությունը, անհետաձգելի և առաջին բժշկական օգնության շուրջօրյա ապահովման հետ կապված խնդիրները: Այսպես, օրինակ, կատարված անմիջական դիտարկումների արդյունքներով պարզվել է, որ որոշ քրեակատարողական հիմնարկներում ատամնաբուժական ծառայություններ չեն մատուցվում: Նման պայմաններում ազատությունից զրկված անձինք ստիպված են հրավիրել իրենց նախընտրած բժշկին՝ սեփական միջոցների հաշվին (օրինակ՝ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկ): Կատարված անմիջական դիտարկումներով արձանագրվել է նաև, որ «Գորիս», «Սևան» և «Արմավիր» քրեակատարողական հիմնարկներում ապահովված չէ հոգեբուժական ծառայությունների հասանելիությունը, և հոգեբուժական խնդիրներ ունեցող անձի բուժման ընթացքը որոշվում է հեռախոսակապի միջոցով հոգեբույժի հետ խորհրդակցելով, որպիսի պրակտիկան ևս անընդունելի է: Խնդիրներ են արձանագրվել նաև ընդհանուր

մասնագիտացման բժշկական հաստիքների ոչ բավարարության, ինչպես նաև շուրջօրյա բժշկական օգնության ապահովման հետ:

Ինչ վերաբերում է տեխնիկական հագեցվածությանը, կատարված անմիջական դիտարկումները, ինչպես նաև հանրային առողջապահության ոլորտը կարգավորող օրենսդրության ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ քրեակատարողական հիմնարկներում առկա բժշկական սարքավորումներն ու գործիքները խիստ սահմանափակ են, հնամաշ, անգամ բացակայում են առաջնային բժշկական օգնության համար անհրաժեշտ սարքավորումներ և գործիքներ:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որ քրեակատարողական հիմնարկներում առկա են նաև դեղորայքային ապահովվածության հետ կապված խնդիրներ: Մասնավորապես, բողոքներում նշվել են, որ քրեակատարողական հիմնարկներն ապահովված չեն բավարար քանակության անհրաժեշտ դեղատեսակներով (օրինակ՝ արյան բարձր ճնշման բուժման համար անհրաժեշտ դեղամիջոցներ): Անհրաժեշտ դեղերի բացակայության պատճառով էլ նշանակվում են դրանց ոչ արդյունավետ փոխարինող դեղամիջոցներ: Հարկ է նկատել, որ դեղորայքային ապահովման պետական քաղաքականության՝ օրենքով ամրագրված հիմնական ուղղություններն ու սկզբունքները պետք է կիրառելի լինեն նաև քրեակատարողական հիմնարկներում առողջապահական համակարգի կազմակերպման գործընթացների նկատմամբ: Բացի այդ, քրեակատարողական հիմնարկներում այլ անձանց միջոցներով ապահովվող և սահմանված ընթացակարգերի չպահպանմամբ դեղորայքային բուժման կազմակերպման այդպիսի պրակտիկան վկայում է ոչ միայն անհրաժեշտ քանակությամբ դեղորայքի չապահովման մասին, այլև կարող է հանգեցնել պետության՝ իր հսկողության ներքո գտնվող անձանց պատշաճ բուժօգնության, մասնավորապես՝բժշկի հսկողությամբ և բժշկական ցուցման հիման վրա ճիշտ դեղորայքային բուժման ապահովման պարտականության չկատարմանը:

<u>Քրեակատարողական հիմնարկների բժշկական անձնակազմի անկախության, բժշկական գաղտնիքի պահպանման սկզբունքի գործնականում չապահովումը</u>

Կատարված ուսումնասիրության արդյունքները հիմք են տալիս եզրակացնելու, որ գործող ինստիտուցիոնալ ենթակայության պայմաններում բժշկական անձնակազմի կողմից մատուցվող ծառայությունների բավարարության և որակի նկատմամբ վերահսկողությունը ևս իրականացվում է քրեակատարողական ծառայության ղեկավարության կողմից՝ այսպիսով չապահովելով բժշկական անձնակազմի անկախությունն ու անկաշկանդվածությունը: Մինչդեռ, հարկ է ընդգծել, որ Պաշտպանի գործունեության ընթացքում վեր հանված խնդիրները՝ կապված ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման իրավունքի

ապահովման հետ, ի թիվս այլնի, պայմանավորված են բժշկական անձնակազմի մասնագիտական սկզբունքների և էթիկայի հետևողական պահպանման համար ոչ բավարար երաշխիքների առկայությամբ:

Բժշկական գաղտնիքի առնչությամբ իրականացված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ անձի առողջական վիճակի, վերջինիս նկատմամբ իրականացրած բժշկական հետազոտությունների վերաբերյալ տվյալները հասանելի են քրեակատարողական հիմնարկի ոչ բժշկական անձնակազմին, որպիսի պայմաններում ուղղակիորեն խաթարվում է բժշկական գաղտնիքի պահպանման սկզբունքը:

Ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման իրավունքի ապահովման ոլորտում առկա խնդիրները դիտարկելով որպես հասարակական հնչեղություն ունեցող առանձին հարցեր՝ դրանք հատուկ ուսումնասիրության առարկա են դարձել և ներկայացվելու են հատուկ զեկույցով:

<u>Սանիտարահիգիենիկ և պահման ընդհանուր պայմաններ</u>

2016 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներ կատարած այցերի ընթացքում արձանագրվել են անբավարար սանիտարահիգիենիկ և նյութակենցաղային պայմաններին առնչվող մի շարք խնդիրներ:

Մասնավորապես՝ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջին հարկի բոլոր խցերի պայմանները եղել են անբավարար. բոլոր խցերի խոնավության աստիճանը եղել է բարձր, պատերը՝ թրջված, ինչից առաստաղի և պատերի ծեփամածիկը մի շարք հատվածներում թափված է եղել: Խցերում առկա խոնավության բարձր աստիճանը պայմանավորված է եղել ձյան հալվելու արդյունքում խցերի պատուհաններից ջրի ներթափանցմամբ:

«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պայմաններին Պաշտպանն անդրադարձել է նաև մի շարք բողոքների կապակցությամբ, որոնք, ընդհանուր առմամբ, վերաբերում են կոյուղաջրերի ներթափանցմանը խուց, միջատների առկայությանը, խոնավությանը, սանհանգույցների անսարքությանը, բաց հոսանքալարերի առկայությանը և այլն:

Այսպես, «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի 3-րդ խցում պահվող ազատազրկված անձանց կողմից Պաշտպանին հասցեագրված բողոքում նշվել է, որ վթարի պատճառով կոյուղու ջրերը լցվում են խուց, որի արդյունքում բարձրացել է խցի խոնավության աստիճանը, ինչի հետևանքով այնտեղ անհնար է բնակվել: Նշված խնդիրներն արձանագրվել է նաև Կանխարգելման մեխանիզմի կողմից իրականացված այցի ընթացքում:

Խցերի և սանհանգույցների անբավարար սանիտարական պայմանների մասին բողոքներ են ստացվել նաև նույն քրեակատարողական հիմնարկի այլ խցերից: Խցի խոնավության պատճառ է լոգասենյակի հետ ընդհանուր պատ ունենալը: Նշվածից բացի, արձանագրվել է նաև խցում միջատների առկայություն, սանհանգույցի անսարքություն, առկա են եղել նաև հոսանքի բաց լարեր, խոնավության հետևանքով խցի որոշ հատվածներում պատերի ծեփամածիկը եղել է թափված: Հատակը բետոնապատ է եղել, իսկ լուսավորությունը՝ աղոտ:

Նշվածի կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած պարզաբանումների համաձայն՝ քրեակատարողական հիմնարկի 6-րդ հարկում տեղակայված զբոսահրապարակի տանիքը 2016 թվականի հունիս-օգոստոս ամիսներին էներգախնայողության միջոցառումների ծրագրի շրջանակներում ծածկվել է օրգանական ապակիով: Տանիքով անցնող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր առկա չեն և ներկայում տանիքը պաշտպանված է մթնոլորտային տեղումներից, ինչի արդյունքում նվազել է 5-րդ հարկի խցերի խոնավությունը:

Անբավարար են նաև «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջին հարկի միջանցքի սանիտարահիգիենիկ պայմանները: Մասնավորապես՝ այցի ընթացքում պատերն ու առաստաղը խոնավ են եղել, առաստաղից կոյուղաջուր է կաթացել: Առաջին հարկի խցերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ժամանակ առ ժամանակ միջանցքի հատակին ջուր է հավաքվում և ներթափանցում խցեր, ինչը կանխելու նպատակով ազատությունից զրկված անձինք ստիպված են լինում անկողնային պարագաներով ծածկել խցի դռան ներքևի բաց հատվածը: Միջանցքի պայմանների կապակցությամբ իրենց դժգոհությունն են հայտնել նաև քրեակատարողական հիմնարկի վարչակազմի աշխատակիցները:

«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի անբավարար պայմանների հարցը բարձրացրել է նաև ԽԿԿ-ն Հայաստանի վերաբերյալ 2016 թվականի զեկույցում՝ անդրադառնալով առաջին հարկի խցերի խոնավությանը, անբավարար օդափոխությանը և լուսավորությանը, մշտական ջրամատակարարման բացակայությանը, մի շարք խցերում սանհանգույցներն ամբողջությամբ առանձնացված չլինելուն և այլն (տե՛ս ԽԿԿ-ի 2015 թվականի հոկտեմբերի 5-ից 15-ը Հայաստան կատարած այցի վերաբերյալ 2016 թվականի զեկույցը, կետ 63):

Ի պատասխան՝ ՀՀ արդարադատության նախարարությունը պարզաբանել է, որ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջին հարկի խցերում պահվող ազատությունից զրկված անձինք տեղափոխվել են այլ հարկերում գտնվող խցեր: Միաժամանակ նշվել է, որ թիվ 7, 8, 9 կարանտինային խցերի և պատժախցերի տեղափոխման հարցը քննարկման փուլում է:

Ազատությունից զրկված անձանց կողմից բողոքներ են ներկայացվել նաև սանհանգույցների ջրամատակարարման, դրանց ոչ բարվոք վիճակի և սահմանափակ թվաքանակի վերաբերյալ: Արձանագրվել են նաև մշտական

ջրամատակարարման, ինչպես նաև երկրորդ հարկում տեղակայված սանհանգույցներում ջրի հասանելիության խնդիրներ: Ազատությունից զրկված անձինք ստիպված են ջուրն առաջին հարկից բերել տարաներով: Լվացարանները նույնպես եղել են անբավարար քանակությամբ, և, դատապարտյալների պնդմամբ, շատերը նույնիսկ ձմռան ցուրտ ամիսներին ստիպված են լինում լվացվել դրսում:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկի մեկ այլ մասնաշենք նախատեսված է անչափահաս դատապարտյալների համար, որը, սակայն, այցի ժամանակ չի շահագործվել: Խցերում տեղադրված են եղել երկհարկանի մահճակալներ, չնայած ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման 85-րդ կետի համաձայն՝ «Անչափահաս կալանավորված անձանց կամ դատապարտյալների համար նախատեսված խցերում կամ կացարաններում տեղադրվում են միահարկ մահճակալներ»:

Հարկ է նշել, որ անչափահասների պահման համար նախատեսված խցերը նախկինում օգտագործվել են որպես պատժախցեր և այդտեղ դեռևս պահպանվել են պատժախցի համար նախատեսված երկաթյա մահճակալները:

«Գորիս» քրեակատարողական հիմնարկում ևս արձանագրվել են անբարենպաստ շենքային պայմաններ: Քրեակատարողական հիմնարկի պետի հավաստմամբ՝ «Գորիս» քրեակատարողական հիմնարկը՝ որպես ազատությունից զրկման վայր շահագործվում է 19-րդ դարի վերջերից:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ ուղղիչ հիմնարկում դատապարտյալին հատկացված բնակելի տարածքը պետք է համապատասխանի ընդհանուր բնակելի տարածքների համար սահմանված շինարարական և սանիտարահիգիենիկ չափանիշներին, ինչպես նաև ապահովի նրա առողջության պահպանումը:

Եվրոպական բանտային կանոնների[2] 19.1-րդ կանոնի համաձայն՝ անազատության մեջ պահելու վայրերի տարածքները պետք է մշտապես պահվեն մաքուր և պատշաճ վիճակում:

Արդարադատության նախարարության պարզաբանումների համաձայն՝ Քրեակատարողական վարչության և «Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ-ի միջև 2016 թվականի ապրիլի 19-ին կնքված՝ «Պետության կարիքների համար ախտահանման և մակաբույծների ոչնչացման ծառայությունների մատուցման» պայմանագրի շրջանակներում, նշված ընկերության կողմից քրեակատարողական հիմնարկներում ամիսը 3-4 անգամ իրականացվում են ախտահանման և մակաբույծների ոչնչացման աշխատանքներ: Նշված աշխատանքները վերահսկվում

[2] Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Եվրոպական պենիտենցիար կանոնների մասին» թիվ (2006)2 հանձնարարական:

են քրեակատարողական հիմնարկների տնտեսական ապահովման բաժինների պետերի կողմից:

Այնուամենայնիվ, 2016 թվականին իրականացված մշտադիտարկումների ընթացքում գրեթե բոլոր քրեակատարողական հիմնարկներում առկա են եղել միջատներ (փայտոջիլներ, խավարասերներ և այլն):

Ազատությունից զրկված անձանց հետ առանձնազրույցներում վերջիններս նշել են, որ միջատների դեմ պայքարելու համար դեղանյութերը բերում են նաև իրենց ազգականները:

Ուսումնասիրությունների ընթացքում որոշ դեպքերում ազատությունից զրկված անձանց մարմնի տարբեր հատվածներում արձանագրվել են միջատների խայթոցների հետքեր:

ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշմամբ սահմանված «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգ»-ի 29-րդ կետի համաձայն՝ հիմնարկներում կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական աշխատանքների ապահովումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության սանիտարական օրենսդրությամբ սահմանված սանիտարական կանոնների և հիգիենիկ նորմատիվների պարտադիր պահպանմամբ, ինչպես նաև սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների իրականացմամբ:

Այսպիսով, **ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պետք է հսկողություն սահմանել սանիտարական կանոնների և հիգիենիկ նորմատիվների պահպանման նկատմամբ՝ առանձնակի ուշադրություն դարձնելով խցերի պատշաճ վերանորոգմանը** (**խոնավությունը նվազեցնելու նպատակով**), **սանհանգույցների և լվացարանների վիճակին ու քանակին**, **ախտահանման և մակաբույծների ոչնչացման ուղղությամբ իրականացվող աշխատանքների բավարար որակին**:

<u>Լոգանքի ապահովում</u>

2016 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում կատարված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել են ազատությունից զրկված անձանց լոգանքի հետ կապված խնդիրներ: Մասնավորապես՝ լոգասենյակների ոչ բավարար պայմաններ, տեղաշարժման սահմանափակումներ ունեցող ազատությունից զրկված անձանց լոգանքի կազմակերպման, ինչպես նաև նշված անձանց լոգասենյակների և խցերի սանհանգույցների հասանելիության խնդիրներ:

Լոգասենյակների ոչ բավարար պայմաններ են արձանագրվել «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի նարկոլոգիական բաժանմունքում:

Պարզվել է, որ նարկոլոգիական բաժանմունքի սանհանգույցում սարքավորված են եղել երկու գործող ասիական զուգարաններ և լվացարան: Սանհանգույցի մի մասն առանձնացված է եղել լոգանք կազմակերպելու համար, որը չի շահագործվել և ունեցել է վերանորոգման կարիք:

Պաշտպանի միջնորդության հիման վրա «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի նարկոլոգիական բաժանմունքի սանհանգույցում իրականացվել են վերանորոգման աշխատանքներ՝ փոխարինվել և վերանորոգվել են զուգարանակոնքը, լվացարանը և լոգասենյակի հոսակը:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկի լոգասենյակում արձանագրվել է սանիտարական անբավարար վիճակ: Լոգանքը կազմակերպվել է բետոնե հատակի վրա: Ըստ ազատությունից զրկված անձանց հայտնած տեղեկությունների՝ երկու տարի է առաստաղից ջուր է կաթում, սակայն քրեակատարողական հիմնարկի կողմից վերանորոգման ուղղությամբ միջոցներ չեն ձեռնարկվում, բացի այդ, առկա է մշտական ջրամատակարարման բացակայության խնդիր:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկի մեկուսարանում պահվող կալանավորված անձինք լոգանքի հնարավորությունից օգտվում են շաբաթը մեկ անգամ՝ ի տարբերություն կանանց տեղամասի, որտեղ լոգանքը կազմակերպվում է չորս օրը մեկ անգամ՝ ըստ գրաֆիկի:

«Գորիս» քրեակատարողական հիմնարկում կատարված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է, որ մասնաշենքի տարբեր հարկերում սարքավորված են լոգասենյակներ: Ազատազրկված անձանց հետ առանձնազրույցներում վերջիններս նշել են, որ լոգանքի տրամադրման հետ կապված խնդիրներ առկա չեն. լոգանքը կազմակերպվում է շաբաթվա ընթացքում մեկ անգամ՝ չորեքշաբթի օրերին, սակայն որոշ խցերի սանհանգույցների տարածքում իրենց միջոցներով լոգանք ընդունելու հնարավորություն են ստեղծել ազատությունից զրկված անձինք:

Հարկ է ընդգծել, որ 2016 թվականին հերթական այցի ժամանակ ընթացքի մեջ էին վերանորոգման աշխատանքները. կառուցման փուլում էր արտաքնոցի և լոգարանի համար նախատեսված քարից շինությունը, տանիքին տեղադրվել էր ջրի բաք, որում սարքավորված էր տաքացուցիչ, տեղադրվել էր նաև դուռը: Ներքին հարդարման աշխատանքները դեռևս չէին սկսվել: Վերանորոգման աշխատանքներն իրականացվում էին դատապարտյալների կողմից, վերջիններիս միջոցներով:

«Սևան» քրեակատարողական հիմնարկի մասնաշենքերում կառուցված լոգասենյակներից զատ, բուժմասի, ճաշարանի և լվացքատան մասնաշենքի տարածքում գործում է նաև ընդհանուր լոգասենյակ, որի պայմաններն այցի պահին անբավարար են եղել. օդափոխման համակարգ և ջեռուցում չի եղել, ցնցուղները

բացակայել են: Այն ազատազրկված անձինք, ովքեր չեն բնակվում բնակելի մասնաշենքերում, օգտվում են վերոնշյալ լոգասենյակից: Դրանից օգտվում են նաև այն դեպքերում, երբ կացարաններում տեղադրված բաքերի ջուրը սպառվում է:

ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգ»-ի (այսուհետ՝ Ներքին կանոնակարգ) 36-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր կալանավորված անձ կամ դատապարտյալ լոգանք կամ ցնցուղ պետք է ընդունի կլիմային համապատասխան ջերմաստիճանի պայմաններում՝ առնվազն յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ, իսկ հնարավորության դեպքում՝ ավելի հաճախակի, եթե դա անհրաժեշտ է ընդհանուր հիգիենայի պահպանման համար:

Այս կապակցությամբ ԽԿԿ-ն նշել է, որ ազատազրկված անձինք պետք է ունենան համապատասխան հնարավորություն օգտվելու ցնցուղներից կամ լոգանքի այլ հնարավորություններից: Ցանկալի է նաև, որ խցերում լինի հոսող ջուր (տե՛ս ԽԿԿ-ի գործունեության մասին 2-րդ ընդհանուր զեկույցը, որն ընդգրկում է 1991 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածը, կետ 49):

Բացի այդ, ԽԿԿ-ն Հայաստան, ինչպես նաև մի շարք այլ երկրներ կատարած այցերի ընթացքում իշխանություններին բազմիցս կոչ է արել ավելացնել անազատության մեջ պահվող անձանց լոգանք ընդունելու հաճախականությունը՝ հիմք ընդունելով Եվրոպական բանտային կանոնների 19.4-րդ կանոնը: Ըստ այդ կանոնի՝ պետք է համարժեք հնարավորություններ ստեղծել, որպեսզի ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ կարողանա կլիմային համապատասխան ջերմաստիճանի պայմաններում ցնցուղ ընդունել կամ լողանալ, ընդ որում՝ հնարավորության դեպքում ամեն օր, սակայն շաբաթն առնվազն երկու անգամ (իսկ անհրաժեշտության դեպքում՝ ավելի հաճախ)՝ ելնելով ընդհանուր հիգիենայի պահպանության նպատակից:

ԽԿԿ-ի Հայաստանի վերաբերյալ 2016 թվականի զեկույցում ներկայացված առաջարկների համաձայն՝ **լոգանք ընդունելու հնարավորություն պետք է ընձեռվի առնվազն շաբաթը երկու անգամ** (տե՛ս ԽԿԿ-ի 2015 թվականի հոկտեմբերի 5-ից 15-ը Հայաստան կատարած այցի վերաբերյալ 2016 թվականի զեկույցը, կետ 73):

Այսպիսով, **ազատությունից զրկված անձանց լոգանքի պատշաճ կազմակերպման նպատակով անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում լոգասենյակների վերանորոգման աշխատանքներ իրականացնելու ուղղությամբ**, **իսկ «Սևան» քրեակատարողական հիմնարկի բաց տիպի ուղղիչ հիմնարկն ապահովել լոգարանով**:

Միաժամանակ, **ազատությունից զրկված անձանց ընդհանուր հիգիենայի պահպանման անհրաժեշտությունից ելնելով՝ Ներքին կանոնակարգում պետք է կատարել փոփոխություն՝ ազատությունից զրկված անձանց համար նախատեսելով շաբաթական առնվազն** 2 **անգամ լոգանքի հնարավորություն**:

2016 թվականի ընթացքում արձանագրվել են բողոքներ տեղաշարժման սահմանափակումներ ունեցող ազատությունից զրկված անձանց լոգանքի կազմակերպման հարցերում: Նշված անձանց խնամքը հիմնականում կազմակերպվում է քրեակատարողական հիմնարկների տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում ներգրավված ազատությունից զրկված անձանց կողմից: Տեղաշարժման սահմանափակումներ ունեցող անձինք ունեն լոգասենյակների և սանհանգույցների հասանելիության խնդիր:

Ազատությունից զրկված անձանց լոգանքի կազմակերպման կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ, **որ միջազգային չափանիշներն արգելում են ազատությունից զրկված անձի խնամքը կազմակերպել ազատությունից զրկված այլ անձի կողմից**: **Պետությունը պարտավոր է ապահովել ազատությունից զրկված՝ հատուկ կարիքներ ունեցող անձանց մշտական խնամքը հատուկ պատրաստվածություն ունեցող մասնագետների կողմից**:

Ներկայացված հետևությունն ամրապնդվում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներով:

Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը պատշաճ չի համարել այն, որ հատուկ կարիքներ ունեցող ազատությունից զրկված անձի խնամքի համար պատասխանատվության զգալի բեռը դրվել է պատշաճ որակավորում չունեցող մեկ այլ ազատազրկված անձի վրա՝ նույնիսկ սահմանափակ ժամանակահատվածով (Օրինակ՝ Ֆարբթուհսն ընդդեմ Լատվիայի գործով 2004 թվականի դեկտեմբերի 2-ի վճիռ, գանգատ թիվ 4672/02, կետ 73):

Նշված խնդրի կապակցությամբ ԽԿԿ-ն, օրինակ, կոչ է արել զգուշություն ցուցաբերել ազատությունից զրկված հատուկ կարիքներ ունեցող անձանց խնամքն ապահովելու համար անազատության մեջ պահվող այլ անձանց ներգրավելիս (տե՛ս ԽԿԿ-ի 2012 թվականի մայիսի 13-ից մայիսի 25-ն Իտալիա կատարած այցի վերաբերյալ զեկույցը, կետ 75):

Այսպիսով, **անհրաժեշտ է բացառել տեղաշարժման սահմանափակումներ ունեցող ազատությունից զրկված անձանց խնամքը համապատասխան որակավորում չունեցող ազատությունից զրկված այլ անձանց կողմից կազմակերպելը**, **ինչպես նաև պետք է միջոցներ ձեռնարկել լոգասենյակներն ու խցերի սանհանգույցները նրանց հասանելի դարձնելու ուղղությամբ**:

<u>Պատժախցերի պահման պայմաններ</u>

2016 թվականի ընթացքում անբավարար պահման պայմաններ են արձանագրվել նաև որոշ քրեակատարողական հիմնարկների պատժախցերում:

Այսպես, «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի պատժախցերի պատերը եղել են խոնավ, իսկ խցերն ունեցել են վերանորոգման կարիք:

Ոչ բավարար պայմաններ են արձանագրվել նաև «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պատժախցերում (թիվ 01, 02, 03), որտեղ պատերը և առաստաղը նույնպես թաց են եղել, իսկ ծեփամածիկը՝ որոշ հատվածներում թափված: Նշված խցերում սանհանգույցներն առանձնացված են եղել ոչ ամբողջությամբ, տեղադրված պատուհանների դիմաց պատի առկայության պատճառով բնական լույսը չի ներթափանցել: Արհեստական լուսավորությունն իրականացվել է լամպերի միջոցով:

Հարկ է նշել, որ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պատժախցերի պայմաններին անդրադարձել է նաև ԽԿԿ-ն Հայաստանի վերաբերյալ 2016 թվականի զեկույցում՝ նշելով, որ դրանք վատ են լուսավորված, խոնավ են, կիսաքանդ, աղտոտված և հեղեղված միջատներով: ԽԿԿ-ն ընդգծել է, որ անհրաժեշտ է դադարեցնել «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պատժախցերի շահագործումը, իսկ մյուս քրեակատարողական հիմնարկների պատժախցերում ապահովել մարդու նորմալ կենսագործունեության համար անհրաժեշտ պայմաններ՝ հատուկ ուշադրություն դարձնելով բնական լուսավորության ապահովմանը, ինչպես նաև սանհանգույցների առանձնացմանը (տե՛ս ԽԿԿ-ի 2015 թվականի հոկտեմբերի 5-ից 15-ը Հայաստան կատարած այցի վերաբերյալ 2016 թվականի զեկույցը, կետեր 63 և 65):

Այսպիսով, անհրաժեշտ է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների պատժախցերը պատշաճ վերանորոգել, ինչպես նաև ապահովել դրանց բնական լուսավորությունը և սանհանգույցների առանձնացվածությունը:

<u>Կարանտինային բաժանմունքների պահման պայմաններ</u>

2016 թվականի ընթացքում արձանագրել են կարանտինային խցերի պայմաններին, այդ թվում՝ սանիտարահիգիենիկ վիճակին առնչվող խնդիրներ: Մասնավորապես, «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջին հարկում գտնվող երեք կարանտինային բոլոր խցերի խոնավության աստիճանը եղել է բարձր, պատերը՝ թրջված:

Պաշտպանը բարձրացրել է նշված խցերի հետագա շահագործման հարցը, որի կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարությունը տեղեկացրել է, որ նշված խցերի տեղափոխման հնարավորության հարցը քննարկման փուլում է:

«Սևան» քրեակատարողական հիմնարկի 5 կարանտինային խցերից երկուսը այցի պահին չեն օգտագործվել՝ վերանորոգման աշխատանքների պատճառով:

Վերանորոգման կարիք ունի նաև «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի կարանտինային բաժանմունքը, որի խցերը երբեմն օգտագործվում են որպես պատժախուց:

Ներքին կանոնակարգի 12-րդ կետի համաձայն՝ կալանավորված անձը կամ դատապարտյալը կարանտինային բաժանմունքում պահվում է նվազագույնը նույն պայմաններում, ինչպիսի պայմաններում կալանավորված անձը կամ դատապարտյալը պահվում է կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի այլ խցում կամ կացարանում:

Հարկ է նշել, որ «Երևան-Կենտրոն» և «Կոշ» քրեակատարողական հիմնարկներում նախատեսված չեն առանձին կարանտինային բաժանմունքներ: Այդ իսկ պատճառով կալանավորված անձինք կամ դատապարտյալներն անմիջապես տեղավորվում են բնակելի գոտում՝ փաստացի չենթարկվելով պատշաճ բժշկական զննության, ինչպես նաև զրկվելով ուղղիչ հիմնարկի պայմաններին ծանոթանալու և հարմարվելու օրենսդրությամբ նախատեսված հնարավորությունից: Մինչդեռ, ըստ *ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ուղղիչ հիմնարկ փոխադրված դատապարտյալը բժշկական զննություն անցնելու և ուղղիչ հիմնարկի պայմաններին հարմարվելու նպատակով մինչև յոթ օր ժամկետով տեղավորվում է կարանտինային բաժանմունքում:*

Այս կապակցությամբ հարկ է ընդգծել, որ անհրաժեշտ է ՀՀ արդարադատության նախարարության բոլոր քրեակատարողական հիմնարկներում ապահովել մարդու նորմալ կենսագործունեության համար անհրաժեշտ պայմաններով կարանտինային բաժանմունքներ՝ հաշվի առնելով հատկապես առաջին անգամ ազատազրկման դատապարտվելու պարագայում ուղղիչ հիմնարկի պայմաններին հարմարվելու կարևորությունը:

<u>Վերանորոգման աշխատանքների կազմակերպում</u>

2016 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության կողմից զգալի քայլեր են ձեռնարկվել քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատությունից զրկված անձանց պահման պայմանները բարելավելու ուղղությամբ, մասնավորապես՝ վերանորոգման աշխատանքներ են իրականացվել ինչպես բնակելի գոտիների մասնաշենքերում, այդ թվում՝ խցերում, ճաշարաններում և խոհանոցներում, երկարատև և կարճատև տեսակցության սենյակներում, բուժմասերում, հանձնուքների ընդունման սենյակներում, սանհանգույցներում և բնակելի գոտիների այլ մասերում, այնպես էլ քրեակատարողական հիմնարկների ծառայողների աշխատանքային սենյակներում և վարչական մասնաշենքերում:

Այնուամենայնիվ, 2016 թվականին իրականացված այցերի ընթացքում, ինչպես և նախորդ տարիներին, գրեթե բոլոր («Արթիկ», «Գորիս», «Սևան», «Աբովյան», «Արմավիր») քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատությունից զրկված անձինք նշել են, որ իրենց պահման պայմանների բարելավման և վերանորոգման աշխատանքներն իրականացվել են իրենց անձնական միջոցներով:

Այսպես, օրինակ՝ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի բաց ուղղիչ հիմնարկում բնակելի կացարանները վերանորոգվել են դատապարտյալների միջոցներով:

«Գորիս» քրեակատարողական հիմնարկի բաց ուղղիչ հիմնարկի տեղամասը տեղակայված է Նռնաձոր համայնքում: Դեպի տեղամաս տանող ճանապարհը դժվարանցանելի է (մոտ 20 կմ): Գյուղի հետ կապը կազմակերպվում է միայն անհատների մեքենաների միջոցով: Շինությունը, որտեղ բնակվում են դատապարտյալները, հիմնովին վերանորոգվել է դատապարտյալների միջոցով և ուժերով: Սենյակները ձմռանը ջեռուցվում են փայտի վառարաններով:

ՀՀ արդարադատության նախարարության պարզաբանումների համաձայն՝ քրեակատարողական հիմնարկներում 2016 թվականի ընթացքում կապիտալ վերանորոգման աշխատանքներ չեն իրականացվել, այնուամենայնիվ, որոշ քրեակատարողական հիմնարկներում իրականացվել են վերանորոգման աշխատանքներ, որի հետևանքով որոշ չափով բարելավվել են պահման պայմանները:

Անդրադառնալով ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացված վերանորոգման աշխատանքներին՝ հարկ է նշել, քրեակատարողական հիմնարկներում պահման պայմանների բարելավման և վերանորոգման աշխատանքների զգալի մասն այդուհանդերձ շարունակում է իրականացվել ազատությունից զրկված անձանց անձնական միջոցների հաշվին, ինչպիսի պրակտիկան անընդունելի է, քանի որ հանգեցնում է կոռուպցիոն ռիսկերի աճի, ինչպես նաև ազատությունից զրկված անձանց պահման պայմանների անհավասարության:

<u>Ազատությունից զրկված անձանց անհրաժեշտ պարագաներով ապահովում</u>

2016 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատությունից զրկված անձանցից ստացվել են մի շարք բողոքներ վերջիններիս անհրաժեշտ իրեր և պարագաներ չտրամադրելու վերաբերյալ:

Որոշ քրեակատարողական հիմնարկներում արձանագրվել են դեպքեր, երբ օրինակ՝ խցերն ապահովված չեն եղել ռադիոընդունիչով: Ներքին կանոնակարգի 46-րդ կետի համաձայն՝ կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի

խուցն ի թիվս այլ անհրաժեշտ պարագաների՝ առնվազն պետք է ապահովված լինի նաև ռադիոընդունիչով:

Նշված խնդիրը, սակայն ՀՀ արդարադատության նախարարության կողմից ստացել է պատշաճ լուծում:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկի ազատությունից զրկված կանայք նշել են, որ ամսվա կտրվածքով քրեակատարողական հիմնարկի կողմից իրենց տրամադրվում է 2 դատապարտյալի համար 1 տուփ ատամի մածուկ, օճառ և քիչ քանակով հիգիենայի այլ պարագաներ:

Առանձին դեպքերում Կանխարգելման մեխանիզմի կողմից արձանագրվել են նաև կարանտինում պահվող ազատությունից զրկված անձանց անհրաժեշտ իրերի և պարագաների տրամադրման հետ կապված խնդիրներ (օրինակ՝ անկողնային պարագաներ, ջրի բաժակներ), որոնց չտրամադրումը քրեակատարողական հիմնարկի աշխատակիցները պատճառաբանել են նախորդող տոնական և ոչ աշխատանքային օրերով (օրինակ՝ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ):

Ներքին կանոնակարգի 43-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ կալանավորված անձին կամ դատապարտյալին անհատական օգտագործման նպատակով տրամադրվում են անձնական հիգիենայի պարագաներ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափաբաժիններով: 233-րդ կետը սահմանում է, որ կալանավորված անձին և դատապարտյալին արգելվում է պատժախցում իր մոտ պահել անձնական իրեր, բացառությամբ անձնական հիգիենայի պարագաների, ինչպես նաև կրոնական գրականության և նկարների:

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում արձանագրվել են նաև տրամադրվող հագուստների և անկողնային պարագաների անորակության, անկողնային պարագաների չտրամադրման, սակավության և հնամաշությանն առնչվող խնդիրներ, ինչպես նաև, որոշ դեպքերում հանձնուքներով դրանք ստանալու արգելքներ:

Այսպես, «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի ազատությունից զրկված անձինք իրենց տրամադրվող անկողնային պարագաների առնչությամբ նշել են, որ իրենց տրամադրվում է մեկ բարակ վերմակ, որը ցուրտ եղանակին բավարար չէ, հատկապես պատշաճ ջեռուցման բացակայության պարագայում, իսկ տանից բերվող վերմակները չեն թույլատրվում: Դժգոհություններ են հնչել նաև ներքնակների հնամաշության և բարակության վերաբերյալ: Դատապարտյալները նշել են, որ տանից բերված գունավոր սպիտակեղենը չի թույլատրվում օգտագործել՝ դրանք պետք է լինեն սպիտակ:

Անկողնային պարագաների որակի և քանակի վերաբերյալ դժգոհություններ են հնչել նաև «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում պահվող ազատությունից զրկված անչափահասների կողմից: Այսպես, այցի ընթացքում ազատությունից զրկված անչափահասները նշել են, որ խցերում ջերմաստիճանը ցածր է, իսկ իրենց

տրամադրվում է միայն մեկ ծածկոց, լրացուցիչ ծածկոց չի տրամադրվում՝ յուրաքանչյուրի համար միայն մեկը նախատեսված լինելու պատճառաբանությամբ:

Այցի ընթացքում ազատությունից զրկված անչափահասներից երկուսը չեն ունեցել սպիտակեղեն և քնել են ներքնակների վրա: Հարկ է նշել, որ օրեր անց կատարված կրկնայցին արձանագրվել է, որ վերջիններս ապահովվել են սպիտակեղենով:

Անկողնային պարագաների չտրամադրման խնդիրներ են արձանագրվել նաև «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում:

Եվրոպական բանտային կանոնների համաձայն՝ ազատությունից զրկված այն անձինք, ովքեր իրենց հետ չունեն բավարար հագուստ, պետք է ապահովվեն կլիմայական պայմաններին համապատասխան հագուստով: Միաժամանակ, ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի, պետք է տրամադրվի պատշաճ անկողնային պարագաներով առանձին մահճակալ. մաքրությունն ապահովելու համար դրանք պետք է հաճախակի փոխվեն (տե՛ս կանոններ 20.1, 21):

Գրեթե բոլոր քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատությունից զրկված անձանց համար անհրաժեշտ թույլատրված ապրանքներ և պարագաներ ձեռք բերելու համար հնարավորություն ստեղծված է: Այնուամենայնիվ, «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում պահվող ազատությունից զրկված անձինք դժգոհություն են հայտնել «կրպակ»-ի աշխատակցից՝ նշելով, որ վերջինս այցելում է լավագույն դեպքում ամիսը մեկ անգամ (ինչպիսի անհրաժեշտությունը, սակայն, ավելի հաճախ է առաջանում), իսկ խանութից բերվող ապրանքները հիմնականում անորակ են լինում:

Ամփոփելով հարկ է նշել, որ պետությունը պետք է քայլեր ձեռնարկի.

- **խցերում Ներքին կանոնակարգի** 46-**րդ կետով սահմանված անհրաժեշտ առարկաներն ապահովելու ուղղությամբ**,
- **ազատությունից զրկված անձանց կլիմայական պայմաններին համապատասխան վերմակներով**, **պատշաճ որակի հագուստով**, **անկողնային պարագաներով և սպիտակեղենով ապահովելու ուղղությամբ**,
- **ազատությունից զրկված կանանց անհրաժեշտ քանակի և որակի հիգիենայի**, **այդ թվում՝ կանացի խնամքի պարագաներով ապահովելու ուղղությամբ**,
- **ազատությունից զրկված անձանց՝ իրենց իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով**, **բողոքներով համապատասխան մարմիններին դիմելու իրավունքի պատշաճ ապահովման նպատակով անհրաժեշտ առարկաներ տրամադրելու ուղղությամբ**:

<u>Ազատությունից զրկված անձանց պատշաճ սննդով ապահովում</u>

2016 թվականի ընթացքում ազատությունից զրկման վայրեր կատարած մոնիթորինգային այցերի ընթացքում վեր են հանվել մի շարք գործնական և օրենսդրական խնդիրներ, որոնք կապված են ազատությունից զրկված անձանց տրամադրվող սննդի հետ:

Այս տեսանկյունից հարկ է առանձնացնել.

1. ազատությունից զրկված հատուկ սննդակարգի կարիք ունեցող անձանց դիետիկ սնունդով ապահովելու հետ կապված խնդիրը,
2. կրոնական համոզմունքներից և մշակութային առանձնահատկություններից ելնելով՝ որոշակի սնունդ չընդունող ազատությունից զրկված անձանց հետ կապված խնդիրը,
3. ազատությունից զրկված հղի կանանց հավելյալ սննդով ապահովելու հետ կապված խնդիրը,
4. իրենց մոտ մինչև 3 տարեկան երեխա ունեցող անձանց, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկներում պահվող անչափահաս անձանց հատուկ սննդակարգով ապահովելու հետ կապված խնդիրը:

Անդրադառնալով առաջին խնդրին՝ հարկ է նշել, որ *ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասի, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ պարբերության և ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 1182-Ն որոշմամբ հաստատված № 1 հավելվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ ազատությունից զրկված հիվանդ անձինք ապահովվում են հավելյալ սննդով, այն է՝ բուսական յուղ՝ 20 գրամ, կարագ՝ 25 գրամ, կաթ (կաթի փոշի)՝ 100 (14.3) գրամ և հավի ձու՝ 1 հատ:*

Քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատությունից զրկված անձինք հաճախ ունեն այնպիսի հիվանդություններ (օրինակ՝ շաքարային դիաբետ), որոնք պահանջում են ոչ թե հավելյալ սնունդ, այլ ընդհակառակը՝ հատուկ սննդակարգ: Հատուկ սննդակարգով ապահովված չեն նաև ազատությունից զրկված տարեց անձինք:

Այսպիսով, քրեակատարողական օրենսդրությունը չի նախատեսում ազատությունից զրկման վայրերում պահվող հատուկ սննդակարգի կարիք ունեցող անձանց համար դիետիկ սնունդ նշանակելու և այն կազմակերպելու հնարավորություն:

Հատկանշական է, որ նման հնարավորություն ընձեռվում է զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողների, տուն-ինտերնատներում գտնվող տարեցների համար[3]:

---

[3] Ավելի մանրամասն տե՛ս ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության հատուկ սպառողների սննդի օրական միջին նորմաների մասին» թիվ 706 որոշմամբ հաստատված № 1 հավելվածի («Խաղաղ ժամանակ հայաստանի հանրապետության այլ

ՄԱԿ-ի առաջին կոնգրեսի կողմից 1955 թվականի օգոստոսի 30-ին ընդունված «Ազատությունից զրկված անձանց հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններ»-ի 20.1-ին կետի՝ քրեակատարողական հիմնարկը պետք է սովորական ժամին ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի ապահովի նրա առողջությունը (...) պահպանելու համար բավականաչափ սննդարար, որակյալ, լավ պատրաստված ու մատուցված սնունդով:

Եվրոպական բանտային կանոնների 22.6-րդ կանոնում ուղղակիորեն սահմանվում է, որ բժշկական անձնակազմը պետք է ապահովի հատուկ սննդակարգ այն ազատությունից զրկված անձանց համար, ովքեր առողջապահական նկատառումներից ելնելով՝ ունեն դրա կարիքը:

ԽԿԿ-ն ընդգծել է Պետության՝ առողջական խնդիրներ ունեցող անձանց առողջական վիճակով պայմանավորված հատուկ սննդակարգ տրամադրելու պարտավորությունը (տե՛ս ԽԿԿ-ի գործունեության մասին 3-րդ ընդհանուր զեկույցը, որն ընդգրկում է 1992 թվականի հունվարի 1-ից դեկտեմբեր 31-ն ընկած ժամանակահատվածը, կետ 38):

Խնդրահարույց է նաև կրոնական համոզմունքներից և մշակութային առանձնահատկություններից ելնելով՝ որոշակի սնունդ չընդունող ազատությունից զրկված անձանց տրամադրվող սննդի հարցը: Այսպես, քրեակատարողական հիմնարկներում պահվում են Քրիստոնեություն դավանող անձինք, ովքեր Պահքի շրջանում պետք է սնվեն հատուկ սննդակարգով կամ մահմեդականություն դավանող անձինք, ում կրոնական համոզմունքները թույլ են տալիս ընդունել բացառապես այնպիսի սնունդ, որը չի արգելում Իսլամը:

Նշված խնդիրը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրացվել է դեռևս 2010 թվականին[4]:

Քննարկվող խնդրին անդրադարձ է կատարվել նաև ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի 2014-2015 թվականների գործունեության հաշվետվությունում[5]:

զորքերում զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողների սննդի օրական միջին նորման») 11-րդ կետը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 18-ի նիստի թիվ 39 արձանագրային որոշմամբ հաստատված № 1 հավելվածի 5-րդ կետի 5.1-ին ենթակետը:

[4] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ. զեկույց անձի իրավունքների և օրինական շահերի ապահովումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում, Եր. 2010թ., էջ 17:

[5] Տե՛ս http://pmg.am/images/2014-2015_PMG_Annual_report.pdf կայքէջում՝ 30.03.2017թ. դրությամբ, էջ 43:

Շարունակում է բաց մնալ նաև մշակութային առանձնահատկություններից ելնելով՝ որոշակի սնունդ չընդունող ազատությունից զրկված անձանց համապատասխան սննդով ապահովելու հարցը: Ազատությունից զրկման վայրերում պահվում են բուսական սնունդ ընդունող անձինք, ովքեր իրենց սննդակարգում չեն օգտագործում կենդանական ծագման սննդամթերք: Արդյունքում, մշակութային առանձնահատկություններից ելնելով՝ հատուկ սնունդ ընդունող ազատությունից զրկված անձինք ստիպված են լինում իրենց անհրաժեշտ սննդամթերքը ստանալ հանձնուքների միջոցով: Ազատությունից զրկված անձինք առանձնազրույցների ընթացքում նշել են, որ իրենց չի թույլատրվում հանձնուքներով ստանալ կամ ձեռք բերել մրգեր և հում սնունդ:

Օրենսդրորեն կարգավորված չէ նաև ազատությունից զրկված հղի կանանց հավելյալ սննդի տեսքով թարմ մրգերից և բանջարեղենից բաղկացած սննդի տրամադրման հարցը:

Այս կապակցությամբ ԽԿԿ-ն նշել է, որ ամեն ջանք պետք է գործադրվի, որպեսզի բավարարվեն ազատազրկված հղի կանանց սննդի յուրահատուկ դիետիկ պահանջմունքները: Նրանք պետք է ստանան պրոտեինով հարուստ և թարմ մրգերից ու բանջարեղենից բաղկացած սնունդ (տե՛ս ԽԿԿ-ի գործունեության մասին 10-րդ ընդհանուր զեկույցը, որն ընդգրկում է 1999 թվականի հունվարի 1-ից դեկտեմբեր 31-ն ընկած ժամանակահատվածը, կետ 26):

Կարգավորված չէ նաև իրենց մոտ մինչև 3 տարեկան երեխա ունեցող անձանց, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկներում պահվող անչափահաս անձանց համար նախատեսված հատուկ սննդատեսակների հարցը:

Ի տարբերություն քրեակատարողական ոլորտի՝ *ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի «Մանկապանը, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում (անկախ դրա կազմակերպական-իրավական ձևից) խնամվող, ինչպես նաև հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորող երեխայի խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 815-Ն որոշումը սահմանում է մանկապանը խնամվող 5 օրականից մինչև 7 ամսական, 7 ամսականից մինչև 12 ամսական, 1 տարեկանից մինչև 1,5 տարեկան և 1,5 տարեկանից մինչև 3 տարեկան երեխաների սննդի տեսականին և քանակը (մեկ խնամվողի հաշվարկով), ինչպես նաև մանկապանը, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում խնամվող 3 տարեկանից մինչև 18 տարեկան երեխայի սննդի տեսականին և քանակը (մեկ խնամվողի հաշվարկով) և այլն:*

Նշված իրավական ակտով կարգավորվում է նաև մանկատանը խնամվող մինչև 3 տարեկան, ինչպես նաև 3-ից մինչև 18 տարեկան երեխաների հագուստի, կոշկեղենի ու փափուկ գույքի տեսականին և քանակը (մեկ խնամվողի հաշվարկով) և խնդրո առարկային վերաբերող մի շարք այլ հարցեր:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ 2016 թվականի հոկտեմբերին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կարծիքին էր ուղարկվել նաև «**Հայաստանի Հանրապետության կառավարության** 2015 **թվականի հոկտեմբերի** 15-**ի թիվ** 1182-**Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**» **ՀՀ կառավարության որոշման նախագիծը**:

Նախագծի ուսումնասիրության արդյունքում Պաշտպանի աշխատակազմի կողմից ներկայացվել են մի շարք նկատառումներ ու առաջարկներ, որոնք, ընդհանուր առմամբ, հանգում են հետևյալին.

- **սահմանել ազատությունից զրկման վայրերում պահվող հատուկ սննդակարգի կարիք ունեցող անձանց համար դիետիկ սնունդ նշանակելու և այն կազմակերպելու հնարավորություն**,
- **նախատեսել կրոնական համոզմունքներից**, **ինչպես նաև մշակութային առանձնահատկություններից ելնելով՝որոշակի սնունդ չընդունող**, **ազատությունից զրկված անձանց սննդի ապահովման առանձնահատկությունները**,
- **կարգավորել ազատությունից զրկված հղի կանանց հավելյալ սննդի տեսքով թարմ մրգերից և բանջարեղենից բաղկացած սննդի տրամադրման հարցը**,
- **սահմանել ազատությունից զրկման վայրերում իրենց մոտ մինչև** 3 **տարեկան երեխա ունեցող անձանց**, **ինչպես նաև քրեակատարողական հիմնարկներում պահվող անչափահաս անձանց համար նախատեսված հատուկ սննդատեսակներ**:

Ներկայացված և մի շարք այլ առաջարկներ աշխատանքային կարգով քննարկվել են նաև ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության ներկայացուցիչների հետ:

<u>Հանձնուքներով սննդամթերքի, թերթերի և ամսագրերի, ինչպես նաև հագուստի և այլ պարագաների ստացման հետ կապված խնդիրներ</u>

2016 թվականի ընթացքում որոշ քրեակատարողական հիմնարկներում արձանագրվել են հանձնուքներին առնչվող խնդիրներ, մասնավորապես՝ հում սննդի որոշ տեսակներ, հագուստի որոշ տեսակներ, թերթեր, ամսագրեր և բացիկներ ստանալու արգելքներ: Հատկապես շեշտադրվել են դրանք հանձնուքներով փոխանցելու ոչ միանշանակ օրենսդրական պահանջները և հանձնուքների փոխանցման հարցում վարչակազմի դրսևորած տարբերակված մոտեցումը:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկում պահվող ազատությունից զրկված կանանց հետ առանձնազրույցներից պարզվել է, որ քրեակատարողական

հիմնարկում հանձնուքներ ստանալու և դրանց պարունակության վերաբերյալ վարչակազմը ցուցաբերում է տարբերակված մոտեցում:

Ներքին կանոնակարգի արգելված իրերի, առարկաների և սննդամթերքի ցանկը սահմանող ձևի 16-րդ կետը նախատեսում է բացառություն մի շարք առարկաների, իրերի և սննդամթերքի համար, որոնք կալանավորված անձինք և դատապարտյալները կարող են ունենալ իրենց մոտ, ստանալ կամ ձեռք բերել հանձնուքներով, ծանրոցներով և փաթեթներով:

Նշված ցանկը, ի թիվս այլնի, ներառում է նաև անկողնային պարագաները, ներքնազգեստը, հիգիենայի պարագաները, գրականությունը, թերթերը, ամսագրերը, բացիկները, բանջարեղենը և մրգերը:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է հանձնուքներ ստանալու արգելքների նկատմամբ սահմանել խիստ հսկողություն քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից ցանկացած տարբերակված մոտեցում բացառելու նպատակով:

<u>Հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի կամ մարմնամարզությամբ զբաղվելու իրավունքի ապահովումը</u>

2016 թվականի ընթացքում ազատությունից զրկման վայրեր կատարած մոնիթորինգային այցերի ընթացքում վեր են հանվել մի շարք գործնական և օրենսդրական խնդիրներ, որոնք կապված են ազատությունից զրկված անձանց հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի կամ մարմնամարզությամբ զբաղվելու իրավունքի ապահովման հետ:

Այս տեսանկյունից հարկ է առանձնացնել.

1. ազատությունից զրկված անչափահաս անձանց զբոսանքի կամ մարմնամարզությամբ զբաղվելու իրավունքի ապահովման խնդիրը,
2. իգական սեռի ձերբակալված, կալանավորված անձանց և դատապարտյալների զբոսանքի տևողություն տարբերակման խնդիրը,
3. զբոսանքի վայրերի անհարմարավետության խնդիրը:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված անչափահաս անձանց համար նախատեսված զբոսանքի վայրերում մարմնամարզությամբ զբաղվելու համար չկան պայմաններ: Թեև հիմնարկում այդ նպատակով առանձնացված մարզասրահում առկա են մարզասարքեր, սակայն դրանք գտնվում են անսարք վիճակում:

Այս առումով հատկանշական է, որ Ներքին կանոնակարգի 87-րդ կետի համաձայն՝ կալանավորվածներին պահելու վայրում կամ ուղղիչ հիմնարկում անչափահաս կալանավորված անձանց կամ դատապարտյալների համար

նախատեսված զբոսանքի վայրերը պետք է հարմարեցված լինեն ֆիզիկական վարժությունների, զանազան խաղերով ու սպորտով զբաղվելու համար:

Զբոսանքի ընթացքում ազատությունից զրկված անձանց մարմնամարզությամբ զբաղվելու հնարավորության տրամադրման կարևորությանն անդրադարձ է կատարվել նաև մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում: Այսպես, Եվրոպական բանտային կանոնների 27.3-րդ և 27.4-րդ կանոնները նախատեսում են, որ ֆիզիկական պատրաստվածության մակարդակի բարձրացմանն ուղղված համապատասխան միջոցառումները, մարզվելու և ժամանցի համար հնարավորությունների ապահովումը պետք է կազմեն ազատությունից զրկման վայրի ռեժիմի մի մասը, իսկ ազատությունից զրկման վայրի ղեկավարությունը պետք է նպաստի դրան՝ ապահովելով համապատասխան սարքերով և սարքավորումներով:

Այսպիսով, միջազգային և ներպետական իրավական կարգավորումների ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ ազատությունից զրկված անձանց առօրյան պետք է ներառի մարմնամարզությունը, սպորտը, ժամանցային ծրագրերը: Այս առումով պետությունը պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք ուղղված կլինեն վերը նշված միջոցառումների ապահովմանը:

Խնդրահարույց է նաև ազատությունից զրկված անչափահաս անձանց հետ առանձնազրույցների ընթացքում ստացած այն տեղեկությունը, որ իրենք չեն օգտվում օրենսդրությամբ նախատեսված առնվազն երկու ժամ տևողությամբ ամենօրյա զբոսանքի իրավունքից: Վերջիններիս պնդմամբ՝ զբոսանքի տևողությունը որոշում է վարչակազմը և այն, որպես կանոն, չի գերազանցում մեկ ժամը:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 56-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ (…) անչափահաս դատապարտյալն օգտվում է առնվազն երկու ժամ տևողությամբ ամենօրյա զբոսանքի իրավունքից:

Նման կարգավորում նախատեսված է նաև անչափահաս ձերբակալված և կալանավորված անձանց համար *(տե՛ս «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը):* Նշված դրույթը տարածվում է նաև իգական սեռի ձերբակալված կամ կալանավորված անձանց վրա: *Այսպես, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ ձերբակալված կամ կալանավորված կանայք (…) օգտվում են ամենօրյա՝ երկու ժամից ոչ պակաս տևողությամբ զբոսանքի իրավունքից, որի ընթացքում հնարավորություն է տրվում զբաղվել մարմնամարզությամբ:*

Վերոգրյալի համատեքստում հարկ է նշել նաև, որ օրենսդիրը շեղվել է օրենքում առկա վերոշարադրյալ ընդհանուր տրամաբանությունից՝ ՀՀ քրեակատարողական օրենսգրքում չնախատեսելով իգական սեռի դատապարտյալների համար երկու ժամյա զբոսանքի հնարավորություն:

ՀՀ արդարադատության նախարարության մի շարք քրեակատարողական հիմնարկներում *(օրինակ՝ «Նուբարաշեն», «Արմավիր», «Գորիս» քրեակատարողական հիմնարկներ)* զբոսաբակերը փոքր և առանձնացված տարածքներ են, որոնք որոշ դեպքերում ապահովված չեն ծածկով:

Զբոսանքի ոչ պատշաճ կազմակերպման պատճառ է նաև քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների ոչ բավարար քանակը:

Հարկ է նշել, որ նշված խնդիրները բարձրացվել է նաև ԽԿԿ-ի Հայաստանի վերաբերյալ 2016 թվականի զեկույցում, որտեղ, մասնավորապես, նշված է, որ. «…«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում բացօթյա զբոսանքները ոչ աշխատանքային օրերին շարունակվում են մնալ ոչ հասանելի, իսկ նման հնարավորության դեպքում միշտ չէ, որ տևում են մեկ ժամ: Դատապարտյալների մեծ մասը հարկադրված է օգտվել միևնույն փոքր և ոչ պատշաճ զբոսաբակերից, որոնք տեղակայված են շինության տանիքին:» (տե՛ս ԽԿԿ-ի 2015 թվականի հոկտեմբերի 5-ից 15-ը Հայաստան կատարած այցելության արդյունքում կազմված զեկույցը, կետ 63):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում բացօթյա զբոսանքի համար պիտանի և բավականաչափ ընդարձակ տարածքներ նախատեսելու ուղղությամբ: **Միաժամանակ**, **զբոսանքի համար նախատեսված տարածքները պետք է ապահովել անբարենպաստ եղանակից պաշտպանող պատշաճ ծածկերով**, **ֆիզիկական վարժություններով ու սպորտով զբաղվելու համար անհրաժեշտ հիմնական մարզասարքերով**, **իսկ մարզասարքերի առկայության դեպքում պետք է ապահովել դրանց սարքինությունը**:

Քննարկվող հարցի առնչությամբ չափազանց կարևոր է օրենսդրությամբ սահմանված զբոսանքի նվազագույն տևողության պահպանումը, **իսկ միասնական մոտեցումն ապահովելու տեսանկյունից հարկ է երկու ժամյա զբոսանքի հնարավորություն նախատեսել նաև իգական սեռի դատապարտյալների համար**:

Զբաղվածություն

2016 թվականի ընթացքում կատարված այցերի ընթացքում ուսումնասիրվել է կալանավորված անձանց և դատապարտյալների զբաղվածության խնդիրը:

Փակ և կիսափակ ուղղիչ հիմնարկներում պատիժը կրող դատապարտյալները, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձինք օրվա մեծ մասը գտնվում են խցում և փաստացի չեն կարող ներգրավվել քրեակատարողական հիմնարկներում առկա կենցաղային սպասարկման հետ կապված տարբեր աշխատանքներում: Փաստացի նշված աշխատանքներին

ներգրավվում են հիմնականում կիսաբաց կամ բաց ուղղիչ հիմնարկների դատապարտյալները: Բացի դրանից, վերջիններս հիմնականում չեն մասնակցում նաև ժամանցային միջոցառումներին և գրեթե զրկված են մարմնամարզությամբ և սպորտով զբաղվելու հնարավորությունից:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկի կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ 165 դատապարտյալների և 100 կալանավորված անձանց լրակազմի դեպքում սահմանված է ընդամենը 15 հաստիք, որոնք նախատեսված են տեխնիկատնտեսական սպասարկման և այլ աշխատանքներում (մաքրման աշխատանքներ, կրակայրիչի արտադրամաս ու անասնապահական ֆերմա): Դրանցից որոշ հաստիքներ բաժանված են ոչ ամբողջական դրույքաչափերի, ուստի փաստացի աշխատում է 32 կին դատապարտյալ, այդ թվում նաև՝ բաց ուղղիչ հիմնարկում պահվող 3 դատապարտյալներ: Եվս 24 հաստիք հատկացված է «Աջակցություն դատապարտյալներին» հիմնադրամի կողմից, ուր աշխատում են 3 դատապարտյալ կանայք: Հիմնական հաստիքները մակարոնի, կարի արտադրամասում են, իսկ զբաղմունքները՝ նկարչություն, գորգագործություն և այլն:

«Գորիս» քրեակատարողական հիմնարկում 180 դատապարտյալների և 35 կալանավորված անձանց լրակազմի դեպքում սահմանված է 13 հաստիք միայն դատապարտյալների համար, որից 7-ը (կիսաբաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալներ) համալրված են՝ տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներով:

Գործնականում, փակ և կիսափակ ուղղիչ հիմնարկներում ազատությունից զրկված անձանց հիմնական զբաղմունքը սահմանափակվում է հեռուստացույցի դիտումով, գրականության ընթերցմամբ, որոշ դեպքերում թույլատրված սեղանի խաղերով (օրինակ՝ դոմինո): Կիսափակ ուղղիչ հիմնարկի դատապարտյալները, բացի վերոնշյալից, մասնակցում են մասնաշենքերի բակային տարածքների բարեկարգմանը՝ բույսերի և ծաղիկների մշակման աշխատանքներին:

2016 թվականի ընթացքում այցելած որոշ քրեակատարողական հիմնարկներում ստեղծված են վարսահարդարման, համակարգչային, նկարչական, խեցեգործական և այլ խմբակներ («Աբովյան», «Արթիկ» և այլ քրեակատարողական հիմնարկներ):

Բոլոր քրեակատարողական հիմնարկներում առկա են գրադարաններ: Այնուամենայնիվ, գրադարաններից օգտվում են ազատությունից զրկված ոչ բոլոր անձինք: Օրինակ՝ «Գորիս» քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված անձանց մոտ 30 տոկոսն է օգտվում գրադարանից: Գրադարանում առկա է մոտ 1200 գիրք, իսկ թարմացված գրականությունը հիմնականում կրոնական է: Քրեակատարողական հիմնարկի վարչակազմը քայլեր է ձեռնարկում գրադարանը համալրելու ուղղությամբ: Այսպես, օրինակ՝ վարչակազմը կապ է հաստատել Գրողների միության հետ և վերջինս քրեակատարողական հիմնարկի գրադարանին նվիրաբերել է մեծածավալ գեղարվեստական գրականություն: Այնուհանդերձ,

գրադարանը համալրված չէ օտարալեզու գրականությամբ, բացակայում է նաև թարմացված իրավաբանական գրականությունը:

«Սևան» քրեակատարողական հիմնարկի գրադարանը համալրված է հիմնականում խորհրդային տարիների գրականությամբ, նոր գրքեր հազվադեպ են ստացվում, այն էլ՝ առանձին անհատներից: Գրքերի համալրման նպատակով գնումներ չեն իրականացվում, գրադարանը չունի ընթերցասրահ: Գրադարանից մշտապես օգտվում են 40-50 դատապարտյալ (դատապարտյալների մոտ 10 տոկոսը): Համակարգչային սենյակ քրեակատարողական հիմնարկում առկա չէ:

Խնդրահարույց է ՀՀ քրեակատարողական համակարգի որոշ հիմնարկներում դպրոցների հարցը: Ուսումնասիրությունների ընթացքում արձանագրվել է, որ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի դպրոցն այլևս չի գործում, իսկ հիմնարկում պահվող ազատությունից զրկված անչափահաս անձանցից շատերն ուսումը չեն ավարտել:

Խնդիր է արձանագրվել նաև «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի տարածքում գործող ՀՀ Շիրակի մարզի «Արթիկի երեկոյան դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն կատարած այցի ընթացքում: Մասնավորապես, ՊՈԱԿ-ում սովորող ազատությունից զրկված անձանց, ինչպես նաև դասավանդող անձնակազմի հետ առանձնազրույցներից պարզվել է, որ ուսումնական հաստատությունում առկա է 9-ից 12-րդ դասարանների համար նախատեսված դասագրքերի պակաս: Ըստ դասավանդող անձնակազմի՝ բավարար քանակով դասագրքեր չլինելու պատճառով նվազում է առարկաների դասավանդման արդյունավետությունը: Դրա հետ մեկտեղ առկա է եղել նաև ռուսաց և անգլերեն լեզուների ուսուցիչների պակաս: Բացի այդ, դասավանդող անձնակազմը նշել է, որ ՊՈԱԿ-ի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը կարիք ունեն լրամշակման և կատարելագործման: Բանն այն է, որ դրանք չեն բովանդակում ուսումնական հաստատության գործունեության առանձնահատկությունները: Ներկայացված խնդիրները լուծելու խնդրանքով ՊՈԱԿ-ը դիմել է ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչներին, սակայն՝ ապարդյուն:

Այս կապակցությամբ ՀՀ կրթության և գիտության նախարարությունում տեղի է ունեցել քննարկում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցչի և ՊՈԱԿ-ի տնօրենի մասնակցությամբ: Քննարկման արդյունքում տնօրենին առաջարկվել է ՀՀ Շիրակի մարզպետարանի միջոցով ՀՀ կրթության և գիտության նախարարություն ներկայացնել հայտ՝ պահանջվող դասագրքերի վերաբերյալ, որին ՀՀ օրենսդրության սահմաններում հանրակրթության վարչության կողմից կտրվի համապատասխան լուծում:

ՀՀ կրթության և գիտության նախարարությունն իր պատրաստակամությունն է հայտնել «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի «Արթիկի երեկոյան դպրոց»

պետական ոչ առևտրային կազմակերպությանն աջակցելու և վերջինիս գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը լրամշակելու հարցում:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ դատապարտյալի ուղղման հիմնական միջոցներն են (…) դատապարտյալի աշխատանքային, կրթական, մշակութային, մարզական և նման այլ զբաղվածությունը, ինչպես նաև հասարակական ներգործությունը:

Ներքին կանոնակարգի 107-րդ կետով սահմանվում է, որ կալանավորվածներին պահելու վայրերում, ինչպես նաև փակ և կիսափակ ուղղիչ հիմնարկներում կազմակերպվում են աշխատանքային զբաղվածության խցեր՝ կալանավորված անձին խցային պայմաններում աշխատանքներում ներգրավելու նպատակով: Կիսաբաց և բաց ուղղիչ հիմնարկներում կարող են կազմակերպվել արդյունաբերական կամ գյուղատնտեսական նշանակության աշխատանքային զբաղվածության խցեր կամ գոտիներ (տե՛ս կետ 108):

ԽԿԿ-ն նշել է, որ. «…ազատազրկված անձանց նորմալ կեցության համար ծայրահեղ կարևոր է իրագործել միջոցառումների բավարար ծրագրեր (աշխատանք, կրթություն, սպորտ և այլն): Այս ծրագրերի իրականացումը կարևոր է բոլոր հիմնարկների համար անկախ նրանից, թե ում համար են նրանք նախատեսված՝ դատապարտյալների, թե կալանավորվածների» (տե՛ս ԽԿԿ-ի գործունեության մասին 2-րդ ընդհանուր զեկույցը, որն ընդգրկում է 1991 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածը, կետ 47):

Ազատությունից զրկված անձանց զբաղվածության ծրագրերի սակավաթիվ լինելը նշվել էր դեռևս ԽԿԿ-ի Հայաստան կատարած այցի վերաբերյալ 2010 թվականի զեկույցում: ԽԿԿ-ն Հայաստանի վերաբերյալ 2016 թվականի զեկույցում ևս մտահոգություն է հայտնել այն մասին, որ քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձինք փակված են իրենց խցերում օրական 21-23 ժամ՝ մատնված հարկադիր պարապուրդի: Սա հատկապես լուրջ խնդիր է երկար ժամկետով ազատազրկման (այդ թվում՝ ցմահ ազատազրկման) դատապարտված անձանց դեպքում (տե՛ս ԽԿԿ-ի 2015 թվականի հոկտեմբերի 5-ից 15-ը Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույցը, կետ 48):

Ազատությունից զրկված անձանց օգտակար բնույթի բավարար աշխատանքով ապահովելու, ժամանցի հնարավորություն ընձեռելու (սպորտ, խաղեր, մշակութային միջոցառումներ և ժամանցի այլ ձևեր), կրթական ծրագրերը հասանելի դարձնելու վերաբերյալ մանրամասն չափանիշներ են պարունակում նաև Եվրոպական բանտային կանոնները (տե՛ս կանոններ 26.1-26.3, 26.6, 26.9, 26.10, 27.3, 27.6, 28.1-28.5 և այլն):

Եվրոպական բանտային կանոնների 28.7-րդ կանոնի համաձայն՝ ազատությունից զրկված անձանց կրթությունը պետք է գործնականում հնարավորին չափ ներհյուսված լինի երկրում առկա կրթական և մասնագիտական վերապատրաստման համակարգի

մեջ, որպեսզի ազատ արձակվելուց հետո նրանք կարողանան առանց դժվարությունների շարունակել իրենց կրթությունը և մասնագիտական վերապատրաստումը:

ՀՀ արդարադատության նախարարության պարզաբանումների համաձայն՝ 2016 թվականի ընթացքում քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց 34,8%-ը ընդգրկվել են տարբեր բնույթի աշխատանքներում, մասնավորապես՝ ներկայում թվով 165 դատապարտյալներ ընդգրկված են քրեակատարողական հիմնարկի տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում: «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի հետ համատեղ տարաբնույթ աշխատանքներում ներգրավվել են 626 դատապարտյալներ, այդ թվում՝ 223 դատապարտյալ իրենց համաձայնությամբ ներգրավվել են ոչ վճարովի աշխատանքներում: Դատապարտյալների զբաղվածությունն ապահովելու, սոցիալական վերականգնման արդիական և արդյունավետ միջոցառումներ ձեռնարկելու նպատակով 2016 թվականի ընթացքում 12 քրեակատարողական հիմնարկներում կազմակերպվել են 342 միջոցառումներ, որոնց մասնակցել են 8327 կալանավորված անձինք և դատապարտյալներ: Ինքնագործ միավորումներում ներգրավված է 276 անձ: 2016 թվականի ընթացքում քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց օգտակար զբաղվածությունն ապահովելու նպատակով պարբերաբար իրականացվել են մի շարք մշակութային, լուսավորչական, մարզական և կրոնական միջոցառումներ:

Միաժամանակ, իրացվել է 187 դատապարտյալի ինչպես հանրակրթական, այնպես էլ բարձրագույն և հետբուհական կրթության իրավունքը:

Չնայած ՀՀ արդարադատության նախարարության կողմից քրեակատարողական հիմնարկներում զբաղվածության ապահովման ուղղությամբ ձեռնարկված միջոցներին՝ շարունակում է արդիական մնալ ինչպես դատապարտյալների, այնպես էլ կալանավորված անձանց համար զբաղվածության բավարար ծրագրեր մշակելու հարցը: Անհրաժեշտ է ազատությունից զրկված անձանց համար ապահովել օրվա զգալի մասը խցերից դուրս անցկացնելու հնարավորություն՝ հաշվի առնելով ազատությունից զրկված անձանց առանձին խմբերի կարիքները (կալանավորված կամ դատապարտված չափահաս անձինք, ցմահ ազատազրկման դատապարտված անձինք, ազատությունից զրկված իգական սեռի ներկայացուցիչներ, անչափահասներ և այլն), վերջիններիս ներգրավելով տարբեր բնույթի նպատակային զբաղմունքներում (աշխատանք, կրթություն, սպորտ և այլն):

<u>Կապն արտաքին աշխարհի հետ</u>

2016 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում կատարված ուսումնասիրությունների

արդյունքում արձանագրվել են ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապն ապահովելու իրավունքի իրացման հետ կապված խնդիրներ: Մասնավորապես՝ քրեակատարողական հիմնարկների տաքսոֆոններից օգտվելու, Մարդու իրավունքների պաշտպանի թեժ գծի 1-16 հեռախոսահամարին անվճար զանգահարելու, կարճատև և երկարատև տեսակցությունների, ինչպես նաև ազատությունից զրկված անձանց կարճատև մեկնումների տրամադրման, նամակների գրաքննության հետ կապված խնդիրներ: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ բնակության վայրից հեռու գտնվող քրեակատարողական հիմնարկում տեղաբաշխվելու արդյունքում ազատությունից զրկված անձինք զրկված են եղել ընտանիքի անդամների և ազգականների հետ հաղորդակցվելու հնարավորությունից:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկում մի շարք բողոքներ են արձանագրվել կարճատև տեսակցությունների սենյակի անհարմարավետության վերաբերյալ, մասնավորապես՝ սենյակը եղել է ցուրտ, չի ջեռուցվել, առկա չեն եղել առանձնացման հարմարություններ: Դատապարտյալները նշել են նաև, որ տեսակցության եկած ազգականները մինչև դրա տրամադրումը ստիպված են լինում ամեն անգամ սպասել 4-5 ժամ:

Ըստ դատապարտյալների՝ երկարատև տեսակցության սենյակներում բացակայում են պատշաճ պայմանները. սանիտարական վիճակն անբավարար է, որի պատճառով վերջիններս հրաժարվում են օգտվել երկարատև տեսակցության իրավունքից: Դատապարտյալներն առաջարկել են նաև հնարավորություն ստեղծել հեռավոր բնակավայրերում ապրող ազգականների հետ կարճատև տեսակցությունները տեսազանգի միջոցով կազմակերպելու ուղղությամբ:

«Սևան» քրեակատարողական հիմնարկում երկարատև տեսակցության եկած ազգականները զբոսանքի դուրս գալու հնարավորություն չունեն, քանի որ առկա չէ զբոսանքի համար նախատեսված առանձնացված վայր:

Հարկ է նշել, որ նշված քրեակատարողական հիմնարկի տարածքում կառուցվել են երկարատև տեսակցության համար հավելյալ ավելի ընդարձակ սենյակներ, ինչպես նաև՝ մեկ մանկական սենյակ:

2016 թվականի ընթացքում էլ «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում երկարատև տեսակցությունների սենյակների խնդիրը լուծում չի ստացել:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկում դատապարտյալներն իրենց դժգոհությունն են արտահայտել տաքսոֆոնների վերաբերյալ՝ նշելով, որ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի քարտերով տրամադրվող հեռախոսային կապի սակագները թանկ են:

Պարզվել է, որ ավելի քան 5 ամիս քրեակատարողական հիմնարկը, բացի «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից տեղադրված տաքսոֆոներից, ապահովված է նաև «Crossnet» կազմակերպության կողմից տրամադրված հեռախոսակապով: Դատապարտյալները նշել են, որ «Crossnet»-ի տրամադրված հեռախոսակապը

«ԱրմենՏել» ՓԲԸ-ից ավելի մատչելի սակագներ է առաջարկում (բջջային 1 րոպեն՝ 19 ՀՀ դրամ, քաղաքային՝ 4-5 ՀՀ դրամ):

Կանանց տեղամասում՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի 2 տաքսոֆոնները, տեղադրված են աշխատակիցների աշխատասենյակում, որից օգտվելու ընթացքում դատապարտյալները, իրենց իսկ պնդմամբ, խանգարում են վարչակազմի աշխատանքը:

«Հրազդան» քրեակատարողական հիմնարկում կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ այնտեղ պահվող որոշ անձինք չեն կարողանում զանգահարել Պաշտպանի թեժ գծի 1-16 հեռախոսահամարին՝ սոցիալապես անապահով լինելու և տաքսոֆոնի քարտ ձեռք բերելու հնարավորություն չունենալու պատճառով: Չնայած «Հրազդան» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից հնարավորություն է ընձեռվել զանգահարել Պաշտպանի թեժ գծի հեռախոսահամարին, սակայն նշված համարին հնարավոր չի եղել զանգահարել տեխնիկական խնդիրների պատճառով:

Պաշտպանի թեժ գծի հեռախոսահամարին անվճար զանգահարելու խնդիր է առաջացել նաև «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում:

Նշված հարցի կարգավորման նպատակով Պաշտպանի միջնորդության հիման վրա ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը հայտնվել է, որ ձեռնարկված օպերատիվ աշխատանքների արդյունքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի թեժ գծի 1-16 հեռախոսահամարին քրեակատարողական հիմնարկներում տեղադրված տաքսոֆոններից զանգեր կատարելու անհնարինության հարցն ստացել է լուծում:

Մինչդեռ, ներկայումս ոչ բոլոր քրեակատարողական հիմնարկների տաքսոֆոններից է հնարավոր զանգահարել Պաշտպանի թեժ գծի հեռախոսահամարին. դա պայմանավորված է տաքսոֆոնների հին և նոր մոդելներով:

Այցի պահին «Սևան» քրեակատարողական հիմնարկի երկու տաքսոֆոններից էլ Մարդու իրավունքների պաշտպանի թեժ գծին զանգահարել հնարավոր չի եղել: Ուսումնասիրվել են քրեակատարողական հիմնարկում գործող երկու տաքսոֆոնները և դրանցից օգտվողների հաշվառման մատյանը: 2016 թվականի հունվարից մինչև նոյեմբեր ամիսների ընթացքում, ըստ համապատասխան մատյանի գրառումների, կատարվել է ընդամենը 28 զանգ:

«Աբովյան» և «Արմավիր» քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձինք բողոքներ են ներկայացրել իրենց նամակագրությունը գրաքննության ենթարկելու վերաբերյալ (նամակները վարչակազմին ներկայացվում են առանց ծրարի):

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկում արձանագրվել են կարճատև մեկնում չտրամադրելու դեպքեր: Ազատությունից զրկված անձանց պնդմամբ՝

կարճատև մեկնում չի տրամադրվել նույնիսկ մերձավոր ազգականների մահվան դեպքերում:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝ դատապարտյալն ունի արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու իրավունք, այդ թվում՝ վարելու նամակագրություն, ունենալու տեսակցություններ, օգտվելու հեռախոսակապից, գրականությունից և հնարավոր լրատվական միջոցներից:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ուղղիչ հիմնարկի վարչակազմը ստեղծում է համապատասխան պայմաններ՝ ընտանիքի և արտաքին աշխարհի հետ դատապարտյալի կապն ապահովելու նպատակով: Այդ նպատակով ուղղիչ հիմնարկում ստեղծվում են կարճատև և երկարատև տեսակցությունների սենյակներ, կապի հնարավոր միջոցների հանգույցներ, լրատվական միջոցներից օգտվելու հնարավոր պայմաններ:

Մասնավոր և ընտանեկան կյանքի իրավունքն իր ամրագրումն է ստացել նաև միջազգային մի շարք իրավական փաստաթղթերում: *Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի (…) նկատմամբ հարգանքի իրավունք:*

Եվրոպական բանտային կանոնների 24.1-րդ կանոնի համաձայն՝ ազատությունից զրկված անձանց պետք է թույլատրվի հնարավորին չափ հաճախ նամակով, հեռախոսով կամ կապի այլ միջոցներով հաղորդակցվել կամ տեսակցել իրենց ընտանիքի անդամների, այլ անձանց և կազմակերպությունների հետ:

2016 թվականի ընթացքում ազատությունից զրկված անձանցից ստացվել են նաև բողոքներ այն մասին, որ մերձավոր ազգականների բնակության վայրից հեռու գտնվող քրեակատարողական հիմնարկներ տեղաբաշխվելու և տեղաբաշխված հիմնարկից այլ քրեակատարողական հիմնարկ չտեղափոխվելու արդյունքում զրկվել են իրենց մերձավոր ազգականների հետ շփվելու հնարավորությունից: Նշվածը պատճառաբանվել է ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 69-րդ հոդվածում նման հիմքի բացակայությամբ:

Մասնավորապես, դիմումատուն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել էր, որ դիմել է ՀՀ արդարադատության նախարարին և նախարարության քրեակատարողական վարչության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովին՝ ամուսնուն՝ ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող դատապարտյալին «Գորիս» քրեակատարողական հիմնարկ տեղափոխելու խնդրանքով:

Դիմումատուն նշել է նաև, որ ամուսինը «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ է տեղաբաշխվել՝ առանց հաշվի առնելու այն, որ նրա ընտանիքը բնակվում է Սյունիքի մարզում և այդ պայմաններում ընտանիքի անդամները զրկված են լինելու դատապարտյալին կանոնավոր այցելելու հնարավորությունից:

Վերոգրյալի կապակցությամբ Պաշտպանի կողմից կայացվել է մարդու իրավունքների և ազատությունների խախտումները վերացնելու առաջարկ ներկայացնելու մասին որոշում: Արդյունքում, դատապարտյալը տեղաբաշխվել է ՀՀ արդարադատության նախարարության «Գորիս» քրեակատարողական հիմնարկ:

Եվրոպական բանտային կանոնների 17.1-րդ կանոնի համաձայն՝ ազատությունից զրկված անձինք պետք է հնարավորության սահմաններում տեղաբաշխվեն իրենց բնակության վարին (...) մոտ գտնվող ազատազրկման վայր:

Վերոնշյալ չափորոշիչներն իրենց ամրագրումն են գտել նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում, համաձայն որի՝ ուղղիչ հիմնարկներում սահմանված կանոնակարգի նպատակն է ապահովել կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ:

Բացի այդ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների համաձայն՝ ազատազրկման մեջ գտնվող անձանց հեռավոր ազատությունից զրկման վայրում պահելը հանդիսանում է միջամտություն կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորվող իրավունքների իրացմանը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն այսպիսի դիրքորոշում արտահայտելիս, մասնավորապես, հաշվի է առել ազատությունից զրկման համապատասխան վայրերի երկար հեռավորությունն ազատազրկված անձանց մերձավոր ազգականների բնակության վայրից, աշխարհագրական տեղադրությունը, տրանսպորտային համակարգի վիճակը և այլն (տե՛ս Խոդորկովսկին և Լեբեդևն ընդդեմ Ռուսաստանի վճիռը, գանգատներ թիվ 11082/06 և 13772/05, կետ 838, տե՛ս նաև Վինթմանն ընդդեմ Ուկրաինայի վճիռը, գանգատ թիվ 28403/05, կետ 79): Այսպիսով, ազատազրկման մեջ գտնվող անձանց ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի անքակտելի մաս է բանտային իշխանությունների կողմից նրանց տրամադրվող օգնությունը՝ մերձավոր ազգականների հետ շփումները պահպանելու հարցում (տե՛ս Մեսսինան ընդդեմ Իտալիայի (թիվ 2) վճիռը, գանգատ թիվ 25498/94):

ԽԿԿ-ի իրավաբանության համաձայն՝ ազատությունից զրկված անձանց համար շատ կարևոր է բավարար շփումն արտաքին աշխարհի հետ: Առաջին հերթին կալանավորված անձը պետք է հնարավորություն ստանա պահպանելու հարաբերություններն իր ընտանիքի և մտերիմ բարեկամների հետ (տե՛ս 1991 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ԽԿԿ-ի գործունեության մասին 2-րդ ընդհանուր հաշվետվությունը, կետ 51):

Ստացվել են նաև բողոքներ այն մասին, որ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում կարճատև տեսակցությունների ընթացքում ազատությունից զրկված անձինք առանձնացված են եղել ապակե միջնորմով և հաղորդակցվել են ներքին հեռախոսակապով:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է, որ կարճատև տեսակցությունների սենյակներում հանվել են ապակե միջնորմերը և նախատեսվում

է դրանց վերակառուցում, ինչը հնարավորություն կստեղծի տեսակցությունների տրամադրման համար ապահովել ավելի բարենպաստ պայմաններ: Ապակե բաժանարարով հաղորդակցվելու «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում խնդիրը շարունակում է չլուծված մնալ:

Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն քննարկվող հարցի կապակցությամբ 2014 թվականի սեպտեմբերի 22-ից հոկտեմբերի 1-ն Ավստրիա կատարած այցի վերաբերյալ զեկույցում ընդգծել է, որ անազատության մեջ գտնվող անձանց տեսակցություններն իրենց ընտանիքի անդամների հետ, որպես կանոն, պետք է տրամադրվեն առանց ֆիզիկական առանձնացման: Միջնորմով տրամադրվող տեսակցությունը պետք է բացառություն լինի, և կիրառվի առանձին դեպքերում, երբ առկա է անվտանգության խնդիր:

Վերոնշված հարցին է վերաբերում նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից քննության առնված Մոիսեևն ընդդեմ Ռուսաստանի գործը, որտեղ գանգատաբերը տեսակցությունների ընթացքում ազգականներից առանձնացված է եղել ապակե միջնորմով և նրանց հետ հաղորդակցվել է ներքին հեռախոսակապով: Ընդ որում, հեռախոսազրույցը տեղի է ունեցել վարչակազմի աշխատակցի ներկայությամբ: Տվյալ գործով Եվրոպական դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի խախտում (տե՛ս Մոիսեևն ընդդեմ Ռուսաստանի գործով 2008 թվականի հոկտեմբերի 9-ի վճիռ, գանգատ թիվ 62936/00, կետեր 80, 257-259):

2016 թվականի ընթացքում ստացվել են նաև բողոքներ կարճաժամկետ մեկնում տրամադրելու հետ կապված, որը պայմանավորված է եղել օրենսդրական կարգավորումներում անձի անհատական ռիսկայնությունը հաշվի չառնելու և կարճատև մեկնումը միայն անձի կատարած հանցագործության ծանրության աստիճանի հետ կապելու հանգամանքներով:

Այսպես, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատապարտյալին, բացառությամբ առանձնապես վտանգավոր ռեցիդիվի կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտվելու դեպքի, կարող է տրամադրվել կարճաժամկետ մեկնում անձնական բացառիկ հանգամանքների (մերձավոր ազգականի մահ կամ կյանքին սպառնացող ծանր հիվանդություն, տարերային աղետ, որը զգալի նյութական վնաս է պատճառել դատապարտյալին կամ նրա ընտանիքին) դեպքում, ինչպես նաև սոցիալական վերականգնման նպատակով:

Համանման կարգավորում է պարունակում նաև «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ պարբերությունը՝ սահմանելով, որ կալանավորված անձանց, ***բացառությամբ առանձնապես ծանր հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձանց****, մերձավոր*

ազգականի մահվան կամ կյանքին սպառնացող ծանր հիվանդության, կալանավորված անձին կամ նրա ընտանիքին զգալի նյութական վնաս պատճառած տարերային աղետի դեպքում կարող են տրամադրվել կարճաժամկետ մեկնումներ:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ԽԿԿ-ն Հայաստանի վերաբերյալ 2016 թվականի զեկույցում կրկին ընդգծել է, որ հիմնավորապես սխալ է այն համակարգը, որի համաձայն արտաքին աշխարհի հետ ազատությունից զրկված անձանց կապի սահմանները որոշվում են որպես նշանակված պատժի մի մաս (և ըստ այն ռեժիմի, որով նա կրում է իր պատիժը) (ԽԿԿ-ի կողմից 2015 թվականի հոկտեմբերի 5-ից 15-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետություն կատարած այցի արդյունքների հիման վրա կազմված զեկույցը, կետ 107):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Վարնասն ընդդեմ Լիտվայի գործով արձանագրվել է Թոմաս Վարնասի՝ իր անձնական և ընտանեկան կյանքի հանդեպ հարգանքի իրավունքից օգտվելու հարցում խտրականության չենթարկվելու իրավունքի խախտում (տե՛ս նշված գործով 2013 թ-ի հուլիսի 9-ի վճիռ, գանգատ թիվ 42615/06, կետ 104): Տվյալ գործով լիտվական իշխանությունները պարոն Վարնասին, երբ նա գտնվում էր մեկուսարանում՝ չէին թույլատրել իր կնոջ հետ երկարատև տեսակցություններ ունենալ, չնայած, որ այդպիսի հանդիպումները նրան թույլատրվել էին քրեակատարողական հիմնարկում, որտեղ պատիժ էր կրում քննչական մեկուսարան տեղափոխվելուց անմիջապես առաջ:

Միաժամանակ, Թոմաս Վարնասի՝ իր կնոջ հետ հանդիպումների սահմանափակումը ոչ մի կապ չի ունեցել անվտանգության ապահովման խնդրի հետ և տեսակցության տարբերակված պայմանների նախատեսումը որևէ օբյեկտիվ արդարացում չի ունեցել: Կնոջ հետ առանձին երկարատև տեսակցություն ունենալու միջնորդության մերժումը տեղական իշխանությունները հիմնավորել են ոչ միայն նախաքննության շահերի պաշտպանության վերաբերյալ տեսական դատողություններով, այլ նաև քննչական մեկուսարանում նման բնույթի հանդիպումների համար անհրաժեշտ պայմանների բացակայությամբ, ինչը Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդունելի արդարացում չի համարել (տե՛ս կետ 121):

Անհրաժեշտ է արձանագրել, որ ազատությունից որևէ կերպ զրկված անձի մասնավոր և ընտանեկան կյանքի իրավունքը՝ որպես անձի արժանապատվության և ֆիզիկական անձեռնմխելիության երաշխավորման պայման, ենթադրում է պետության պարտականությունը՝ ձեռնարկել այնպիսի անհրաժեշտ միջոցներ, որոնք ուղղված են ազատությունից զրկված անձի նշված իրավունքի իրացմանը:

Մասնավոր և ընտանեկան կյանքի իրավունքի հարգումը պատժի ենթարկված անձի վերասոցիալականացման էական երաշխիք է: Ազատությունից զրկված անձանց վերասոցիալականացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ են պատժի կրման այնպիսի պայմաններ, որոնք բավարար կլինեն, որպեսզի պատժի կրման ընթացքում

դատապարտյալը չկորցնի հասարակությունում նախկինում ձեռք բերած վարքի կանոնները և հմտությունները: Այն պետք է նպաստի դատապարտյալների կենցաղի և աշխատանքի հարցերի կարգավորմանը, ընտանեկան և սոցիալական կապերի ամրապնդմանը:

Բարձրացված խնդիրների մի մասը պայմանավորված է օրենսդրական թերի կարգավորումներով, որոնց լուծման նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից մշակվել է համապատասխան իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ օրենքի նախագիծ:

Այսպիսով, ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապի իրավունքի պատշաճ կազմակերպման նպատակով անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ.

- **սահմանված կարգին համապատասխան ազատությունից զրկված անձանց տաքսոֆոններից անարգել և առանց լրացուցիչ խոչընդոտների օգտվելու պայմաններն ապահովելու ուղղությամբ**,
- **ապահովել Մարդու իրավունքների պաշտպանի թեժ գծի** 1-16 **հեռախոսահամարին անարգել զանգահարելու հնարավորություն**,
- **ապահովել ազատությունից զրկված անձանց կարճատև և երկարատև տեսակցությունների համար նախատեսված սենյակների բավարար պայմաններ (պատշաճ առանձնացում, սանիտարահիգիենիկ պայմաններ, ջերմաստիճան և կահավորանք)՝ երկարատև տեսակցությունների համար ապահովելով զբոսանքի հնարավորություն**,
- **բացառել ազատությունից զրկված անձանց բողոքները և նամակները գրաքննության ենթարկելու ցանկացած դեպք**,
- **օրենսդրական մակարդակով լուծել մերձավոր ազգականների բնակության վայրից հեռու գտնվող քրեակատարողական հիմնարկներ տեղաբաշխման խնդիրը**,
- **վերանայել կալանավորված և դատապարտված որոշակի խումբ անձանց կարճատև մեկնումներ տրամադրելու օրենսդրական արգելքը**,
- **ՀՀ արդարադատության նախարարության «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում ապահովել երկարատև տեսակցությունների կազմակերպման հնարավորություն**,
- **հնարավորություն ստեղծել հեռավոր բնակավայրերում կամ արտերկրում ապրող մերձավոր ազգականների հետ կարճատև տեսակցությունները տեսազանգի միջոցով կազմակերպելու համար**:

<u>ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներ տրանսպորտային հաղորդակցման բացակայություն</u>

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի կալանավորված անձանց և դատապարտյալներին տեսակցության եկած անձանցից ստացել է բանավոր և գրավոր բողոքներ այն մասին, որ Արմավիրի մարզի Չոբանքարա գյուղի ուղղությամբ, որի մերձակայքում գործում է քրեակատարողական հիմնարկը, հասարակական տրանսպորտի երթուղի նախատեսված չէ: Վերջիններս նշել են նաև, որ իրենք Վաղարշապատ (Էջմիածին) - Մարգարա խճուղուց դեպի «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ ձգվող ճանապարհով ստիպված են լինում ոտքով մոտ 3.5 կմ անցնել կամ տաքսի վարձել: Վիճակն ավելի է բարդանում ամռան և ձմռան ամիսներին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը հարցում է ուղարկել ՀՀ արդարադատության նախարարություն՝ առաջարկելով քննարկել Վաղարշապատ (Էջմիածին) - Մարգարա խճուղուց դեպի «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ տրանսպորտային հաղորդակցման միջոց նախատեսելու հարցը:

Հարցմանն ի պատասխան՝ ՀՀ արդարադատության նախարարությունը 2016 թվականի նոյեմբերի 25-ի գրությամբ տեղեկատվություն է տրամադրել այն մասին, որ Քրեակատարողական վարչությունը բարձրացված հարցի վերաբերյալ 2016 թվականի նոյեմբերի 16-ին գրություն է ուղարկել ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն, որն էլ իր հերթին նշված գրությունն ուղարկել է ՀՀ Արմավիրի մարզպետարանի քննարկմանը:

Հարցի առնչությամբ ԽԿԿ-ն նշել է, որ այն դեպքում, երբ ազատազրկման վայրը հեռու է տեղակայված տրանսպորտային կանգառներից, քրեակատարողական ծառայությունը պետք է քայլեր ձեռնարկի դեպի ազատազրկման վայր կանոնավոր և հասանելի տրանսպորտային հաղորդակցություն ապահովելու ուղղությամբ (տե՛ս ԽԿԿ-ի 2008 թվականի փետրվարի 11-ից 20-ը Դանիա կատարած այցելության վերաբերյալ զեկույցը, կետ 63):

Միջազգային այսպիսի դիրքորոշման հիմքում ընկած է պետության պոզիտիվ պարտավորության հայեցակարգը: Մասնավորապես, այդ հայեցակարգի համաձայն՝ ազատությունից զրկման վայրում անձի պահպանությունն իրականացնող մարմինն է կրում առաջնահերթ պատասխանատվություն այդ անձի իրավունքների ապահովման հարցում:

Վերոգրյալի հետ մեկտեղ «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» ենթակետի համաձայն՝ ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինն (...) ապահովում է ավտոմոբիլային տրանսպորտի հաղորդակցության ուղիների, ճանապարհային ցանցի կատարելագործման և ներդաշնակեցման ռազմավարության քաղաքականության մշակումը և իրականացումը:

Այսպիսով, անհրաժեշտ է ազատությունից զրկման դժվարհասանելի վայրի ուղղությամբ ապահովել տրանսպորտային հաղորդակցման միջոց:

<u>Քրեակատարողական հիմնարկների ծառայողների աշխատանքային պայմաններ</u>

Քրեակատարողական հիմնարկների ծառայողների աշխատանքային պայմաններին Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է նաև 2015 թվականի բռնությունների կանխարգելման ազգային մեխանիզմի տարեկան զեկույցում[6] (տե՛ս տարեկան հաղորդման 392-394 էջեր): Բարձրացված խնդիրները շարունակել են արդիական մնալ նաև 2016 թվականին:

Այսպես, «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի կալանավորված անձանց և դատապարտյալների պահման մասնաշենքերը միմյանցից անջատ են և վարչակազմի ներկայացուցիչներից ոչ բոլորն ունեն միմյանց հետ կապ պահպանելու համար անհրաժեշտ ռադիոսարքեր կամ այլ կապի միջոցներ:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկում կալանավորված անձանց պահման մասնաշենքում շուրջօրյա ծառայություն իրականացնող հերթապահ ծառայողների համար առկա չեն առանձնացված սանհանգույցներ:

Անբավարար վիճակ է արձանագրվել «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջին հարկի միջանցքում. պատերը, առաստաղը և հատակն այցերի ժամանակ մշտապես խոնավ են եղել, որ բավարար նորմալ աշխատանքային պայմաններ ապահովելու համար:

Աշխատանքային ոչ պատշաճ պայմաններ են արձանագրվել նաև «Սևան» քրեակատարողական հիմնարկում, որտեղ վարչական շենքը, մասնավորապես՝ սանհանգույցը, ունեցել են բարեկարգման կարիք: Քրեակատարողական հիմնարկում ծառայողների համար ճաշարան նախատեսված չէ, իսկ հիմնարկի մոտակայքում հասանելի չէ նաև որևէ մթերային խանութ կամ սննդի օբյեկտ:

Արձանագրվել են նաև խնդիրներ քրեակատարողական հիմնարկ հասարակական տրանսպորտային միջոցների հասանելիության հետ կապված: Այսպես, օրինակ՝ «Սևան» քրեակատարողական հիմնարկ կատարած այցի ընթացքում պարզվել է, որ ծառայողական նպատակով տրամադրված ավտոբուսը տևական ժամանակ գտնվում է անսարք վիճակում և չի շահագործվում:

Բացի այդ, «Սևան» քրեակատարողական հիմնարկից հեռու բնակավայրերում ապրող ծառայողները չեն ապահովվում քրեակատարողական հիմնարկի տարածքին

---

[6]Տե՛սhttp://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/a42b07b145e69f9193cda108ef262d7c.pdf կայքէջը, 30.03.2017թ. դրությամբ, էջեր 392-394:

մոտ գտնող ծառայողական բնակարաններով: Նման հնարավորություն, սակայն, ստեղծված է «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի ծառայողների համար:

ՀՀ արդարադատության նախարարության պարզաբանմամբ՝ մի շարք քրեակատարողական հիմնարկներում իրականացվել են վերանորոգման աշխատանքներ, որի արդյունքում որոշ չափով բարելավվել են նաև քրեակատարողական հիմնարկների ծառայողների աշխատանքային պայմանները: Այսպես, «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում վերանորոգման և հարդարման աշխատանքներ են իրականացվել հերթապահ մասում և վարչական մասնաշենքում. վերանորոգվել են երեք աշխատասենյակներ: «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչական մասնաշենքում նույնպես իրականացվել են վերանորոգման աշխատանքներ: «Հրազդան» քրեակատարողական հիմնարկում վերակառուցվել և հարդարվել է քննչական գործողությունների և փաստաբանների հետ հանդիպման համար 2 աշխատասենյակ:

Վերանորոգվել և հարդարվել են «Սևան» և «Գորիս» քրեակատարողական հիմնարկների ծառայողների հանգստի սենյակները, ինչպես նաև «Սևան» քրեակատարողական հիմնարկի նախասրահը և հսկիչ անցագրային կետը:

«Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում ծառայողների համար վերակառուցվել է սանհանգույցը:

Նշված խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ է բարեկարգել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների վարչական շենքերը: Քրեակատարողական ծառայողների համար պետք է ապահովել բավարար պայմաններով աշխատասենյակներ, **ներքին կապի միջոցներ**, **առանձնացված ճաշարան և բավարար սանիտարահիգիենիկ պայմաններով սանհանգույցներ**: **Հատուկ ուշադրություն պետք է դարձնել տրանսպորտի հասանելիության և անհրաժեշտության դեպքում ծառայողական բնակարանների տրամադրման խնդիրներին**:

<u>Ինքնասպանություններ և ինքնավնասումներ. կանխարգելման միջոցներ</u>

ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած վիճակագրական տվյալների համաձայն՝ 2011 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց շրջանում գրանցվել է ինքնասպանության 26 դեպք (տե՛ս գրաֆիկական պատկերը ստորև), որոնցից 7-ը՝ 2016 թվականի ընթացքում:

2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում քրեակատարողական հիմնարկներում արձանագրվել է ինքնավնասման 879 դեպք (տե՛ս գրաֆիկական պատկերը ստորև):



Խորապես մտահոգված լինելով ազատությունից զրկման վայրերում ինքնասպանության և ինքնավնասման դեպքերի աճով և խիստ կարևորելով դրանք բացառելու անհրաժեշտությունը՝ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի[7] նորմերին համապատասխան սեփական նախաձեռնությամբ սկսվել են քննարկման ընթացակարգեր: Իրավասու պետական մարմիններից պահանջվել են համապատասխան գրավոր պարզաբանումներ:

Մարդու իրավունքների պաշտպանին ՀՀ արդարադատության նախարարության տեղեկությունների համաձայն՝ 2015-2016թթ. դեկտեմբեր-հունվար ամիսների ընթացքում «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում արձանագրված ինքնասպանության երեք դեպքերից յուրաքանչյուրով ՀՀ արդարադատության

[7] Ուժը կորցրել է 2017 թվականի փետրվարի 4-ին:

նախարարության իրավասության սահմաններում ձեռնարկված միջոցների, վերհանված խնդիրների և դրանց լուծման ուղղությամբ նախանշված քայլերի մասին: Նշվել է, որ քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանության յուրաքանչյուր դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ և իրականացվել նախաքննություն:

«Արմավիր» քրեակատարողական հիմնարկում 2016 թվականի հունվարի 4-ին և 6-ին գրանցված ազատությունից զրկված անձանց ինքնասպանության դեպքերի հետ կապված քրեակատարողական ծառայության պետի 2016 թվականի հունվարի 6-ի թիվ 1-Լ հրամանով հարուցվել են ծառայողական քննություններ՝ քրեակատարողական ծառայողների կողմից իրենց պարտականությունների կատարման ընթացքում հնարավոր խախտումներ թույլ տված լինելու հիմքով: Սակայն հարուցված ծառայողական քննությունները դադարեցվել են՝ ծառայողների մասնակցությունը կարգապահական խախտման կատարմանն ապացուցված չլինելու և նոր փաստական տվյալներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները սպառված լինելու հիմքով:

Ըստ ՀՀ արդարադատության նախարարության՝ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում իրականացված ծառայողական քննության շրջանակում քրեակատարողական հիմնարկի պետին տրվել են համապատասխան հանձնարարականներ՝ ներքին պահակակետերում ծառայություն իրականացնող տեսչական անձնակազմի թվաքանակը՝ առկա հաստիքային միավորների շրջանակներում համալրելու, կարանտինային, պատժախցային բաժանմունքներում, ինչպես նաև մեկուսացված կալանավորված անձանց և դատապարտյալների խցերի մոտ հսկողությունն ուժեղացնելու և դատապարտյալների հետ տարվող սոցիալ-հոգեբանական աշխատանքներն ակտիվացնելու վերաբերյալ:

Ներկայացված տվյալների համաձայն՝ կալանավորված անձանց և դատապարտյալների հետ տարվող հոգեբանական աշխատանքների արդյունավետության բարձրացման նկատառումներից ելնելով, քրեակատարողական ծառայությունում իրականացվող բարեփոխումների շրջանակում 2015-2016թթ. ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկները համալրվել են լրացուցիչ 4 հոգեբանի հաստիքային միավորներով, ինչը ևս կարևոր նշանակություն ունի ինքնասպանությունների կանխարգելման գործում:

Ըստ ՀՀ արդարադատության նախարարության՝ ինքնավնասումները կատարվում են միևնույն անձանց կողմից: Մասնավորապես՝ ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում արձանագրված շուրջ 250 ինքնավնասումներն իրականացվել են ընդամենը 2 անձի կողմից, ինչն ըստ վերջիններիս պնդման՝ կապված է իրենց նկատմամբ հարուցված քրեական գործերի քննության ընթացքի նկատմամբ ունեցած դժգոհությունների հետ: Ինքնավնասումները դրսևորվել են հիմնականում՝ աջ և ձախ նախաբազուկների, որովայնի, պարանոցի վնասումով, երբեմն ոտքերը հատակին գամելով:

Հիմք ընդունելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կյանքի իրավունքի վերաբերյալ ձևավորած իրավական դիրքորոշումները՝ Պաշտպանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ կալանավորված, դատապարտված կամ այլ կերպ պետության իրավասության ներքո գտնվող անձանց մահվան համար պետությունը կրում է պատասխանատվություն: Իրավասու պետական մարմինները պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար:

Ազատությունից զրկման վայրերում պահվող անձանց մահվան, այդ թվում՝ ինքնասպանություն կատարելու, ինչպես նաև ինքնավնասման կամ ինքնախեղման կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազությունը հայտնել է, որ 2016 թվականի ընթացքում արձանագրվել է մահվան 57 դեպք, որից 8-ը եղել են ինքնասպանություն: Մահվան 49 դեպքերից 3-ով, իսկ ինքնասպանության 8 դեպքերից 5-ով հարուցվել են քրեական գործեր: Մահվան դեպքերով հարուցված քրեական գործերից 2-ը կարճվել են՝ հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ, իսկ 1 դեպքով հարուցված քրեական գործով նախաքննությունը շարունակվում է:

Ինքնասպանության հասցնելու դեպքերով հարուցված քրեական գործերից 3-ը կարճվել են, 2 դեպքի առթիվ հարուցված քրեական գործերով վարույթը կասեցվել է որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձի հայտնի չլինելու պատճառաբանությամբ:

Քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանության դեպքերի կանխարգելման կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազությունը նշել է, որ հատուկ այդ ուղղությամբ կոնկրետ գործողություններ ձեռնարկելու մասին իրավական ակտ առկա չէ: Հետևաբար, կարելի է եզրահանգել, որ Գլխավոր դատախազության կողմից ինքնասպանությունների և ինքնավնասումների կանխարգելման ընդհանուր ծրագիր առկա չէ, և միջոցներ ձեռնարկվում են միայն կոնկրետ գործերով:

Վերոգրյալի համատեքստում հարկ է նշել, որ ՀՀ գլխավոր դատախազի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնակարգը սահմանելու մասին» թիվ 59 հրամանի 27-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ Գլխավոր դատախազությունը, պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ իրականացվող հսկողության ոլորտում, օրենքով իրեն վերապահված լիազորությունների իրացման սահմաններում՝ (…) նախապատրաստում է պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման հարցերին վերաբերող մեթոդական հանձնարարականների նախագծեր: Վերոգրյալ կարգավորումը լայն հնարավորություն է ընձեռում Գլխավոր դատախազությանն ինքնասպանության և ինքնավնասման դեպքերի կանխարգելման ուղղությամբ հստակ հանձնարարականներ պարունակող մեթոդական ծրագրեր, որը քննարկման առարկա կդարձներ ինքնասպանության և ինքնավնասման կատարմանը նպաստող

հանգամանքները, կբովանդակեր հստակ միջոցառումներ դրանք վերացնելու ուղղությամբ:

Չնայած ինքնասպանության, ինչպես նաև ինքնավնասման կամ ինքնախեղման կանխարգելմանն ուղղված իրավասու մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումներին, հարկ է նշել, որ դրանք անբավարար են. պետք է կոնկրետ քայլեր ձեռնարկել միջազգային, այդ թվում՝ ԽԿԿ չափանիշների համահունչ իրավական և գործնական կառուցակարգեր ներդնելու ուղղությամբ:

Մասնավորապես, ըստ ԽԿԿ չափանիշների՝ ազատությունից զրկման վայրեր ընդունվելուց բժշկական զննություն անցնելը, կարանտինային բաժանմունքում ուղղիչ հիմնարկի պայմաններին հարմարվելու ուղղությամբ տարվող աշխատանքը պետք է կարևոր դեր խաղան ինքնասպանությունների կանխարգելման հարցում. կանոնավոր կերպով կատարված բուժզննումը կարող է ի հայտ բերել այդպիսի վտանգի ենթակա ազատությունից զրկված անձանց մի մասին և մասնակիորեն թեթևացնել անհանգստության զգացումը, որն ունենում են ազատությունից զրկման վայրեր նոր մուտք գործած բոլոր անձինք:

Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այն, որ դատական նիստից առաջ ու հետո, ինչպես նաև ազատմանը նախորդող շրջանում դիտվում է ինքնասպանության վտանգի աճ:

Ինքնասպանության ռիսկի խմբին դասվող անձինք պետք է հատուկ հսկողության տակ գտնվեն այնքան ժամանակ, որքան դա անհրաժեշտ է: Բացի այդ, կյանքից զրկելու միջոցները (պատուհանավանդակի ձողերը, կոտրված ապակին, գոտիները, փողկապները և այլն) չպետք է մատչելի լինեն նման անձանց համար:

Նշված միջոցառումների ապահովման հարցում մեծ է ազատությունից զրկելու վայրերի վարչակազմի դերը: Վարչակազմը պետք է ծանոթ լինի ինքնասպանության վտանգի նախանշաններին, իսկ դա ենթադրում է նախնական ուսուցում:

Այս տեսանկյունից հարկ է նշել, որ Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները ՀՀ արդարադատության նախարարության «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ում հրավիրվել են անցկացնել քրեակատարողական ծառայողների համար կազմակերպված դասընթացները, որոնք շարունակվելու են նաև 2017 թվականին: Դասընթացների շրջանակում, ի թիվս այլ հարցերի, քննարկման առարկա են դառնում սահմանային վիճակում գտնվող ազատությունից զրկված անձանց, այդ թվում՝ ինքնասպանության և ինքնավնասման նկատմամբ հակում դրսևորող անձանց պահելու պայմանների առանձնահատկությունները, իրականացման համար անհետաձգելի գործողությունները:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է վեր հանել ինքնասպանության և ինքնավնասման ռիսկային խմբին դասվող ազատությունից զրկված անձանց, **նրանց նկատմամբ սահմանել հատուկ հսկողության**, **ապահովել որպեսզի**

կյանքից զրկելու միջոցները (պատուհանավանդակի ձողեր, կոտրված ապակի, գոտիներ, փողկապներ և այլն) մատչելի չլինեն նման անձանց համար, իրականացնել վարչակազմի՝ ինքնասպանության վտանգի նախանշանների և այդ կապակցությամբ ձեռնարկվող անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ նախնական ուսուցում:

<u>Վերաբերմունքը ազատությունից զրկված անձանց նկատմամբ</u>

Քրեակատարողական հիմնարկներ այցերի ընթացքում ազատությունից զրկված անձանց կողմից իրենց նկատմամբ քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների կողմից վատ վերաբերմունքի վերաբերյալ բողոքները նախորդ տարիների համեմատ զգալիորեն նվազել են:

Այդուհանդերձ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ինչպես առանձին գրավոր բողոքների, այնպես էլ ազատությունից զրկման վայրեր մոնիթորինգային այցերի ընթացքում ներկայացվել են բողոքներ ազատությունից զրկված անձանց նկատմամբ բռնության կամ սպառնալիքների գործադրման վերաբերյալ:

Ստացած գանգատներից մեկի համաձայն՝ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում պահվող մի շարք անձինք վարչակազմի կողմից ենթարկվել են բռնության: Ստացած հաղորդման հիման վրա նույն օրը Կանխարգելման մեխանիզմի աշխատակիցներն այցելել են «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ:

Անազատության մեջ պահվող նշված անձինք, մասնավորապես, տեղեկացրել են, որ հսկիչի հետ ունեցած տարաձայնության պատճառով քրեակատարողական հիմնարկի աշխատակիցների կողմից ենթարկվել են ծեծի, որի հետևանքով բոլորն էլ ստացել են մարմնական տարբեր վնասվածքներ:

Քրեակատարողական հիմնարկի աշխատակիցները ֆիզիկական ուժի գործադրումը պատճառաբանել են նրանով, որ դատապարտյալները դրսևորել են ագրեսիվ վարքագիծ, չեն ենթարկվել իրենց օրինական պահանջներին, ինչեցրել են հայհոյանքներ, խանգարել են ծառայության բնականոն ընթացքը:

Այցի ընթացքում ձեռք բերված տեղեկությունների և նյութերի ուսումնասիրության արդյունքում Մարդու իրավունքների պաշտպանը համապատասխան գրություններ է հասցեագրել ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ հատուկ քննչական ծառայություն, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարություն:

«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալների նկատմամբ քրեակատարողական հիմնարկի աշխատակիցների կողմից ֆիզիկական ուժ գործադրելու փաստի առթիվ նույն օրը նյութեր են նախապատրաստվել ՀՀ քննչական կոմիտեի կողմից և հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից՝ 309-րդ հոդվածի 2-րդ մասով:

Մեկ այլ դեպքով՝ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի ազատությունից զրկված անձանցից մեկը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով, ինչպես նաև Կանխարգելման մեխանիզմի աշխատակիցների հետ քրեակատարողական հիմնարկում առանձնազրույցի ընթացքում հայտնել է, որ իրեն բերման են ենթարկել ՀՀ ոստիկանության համապատասխան բաժին, որտեղ իրենից ցուցմունքներ են կորզել բռնության, սպառնալիքի, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով: Հավելել է, որ համապատասխան բաժնում գտնվելու ընթացքում իրեն պարբերաբար ծեծի են ենթարկել, հայհոյանքներ հնչեցրել իր հասցեին, ստորացրել և սպառնացել են նույն կերպ վարվել իր ընտանիքի անդամների հետ: Դիմումատուի պնդմամբ՝ իրեն չի թույլատրվել ծխել, օգտվել սանհանգույցից, չի տրամադրվել նաև ջուր և սնունդ:

Մարդու իրավունքների պաշտպանի գրության հիման վրա ՀՀ հատուկ քննչական ծառայությունը նախապատրաստել է նյութեր, որոնց հիման վրա որոշում է կայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով քրեական գործ հարուցելու մասին:

ՀՀ հատուկ քննչական ծառայությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ հարուցված քրեական գործով որոշում է կայացվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի (արարքի մեջ հանցակազմի բացակայության) հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին:

«Հելսինկյան Ասոցիացիա» իրավապաշտպան հասարակական կազմակերպության ահազանգով Կանխարգելման մեխանիզմի աշխատակիցներն այցելել են «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ և առանձնազրույց ունեցել նշված քրեակատարողական հիմնարկի ազատությունից զրկված անձի հետ, ով ահազանգի համաձայն քրեակատարողական հիմնարկում տեղի ունեցած միջադեպի արդյունքում ստացել է մարմնական վնասվածք:

Առանձնազրույցի ընթացքում պարզվել է, որ ազատությունից զրկված անձին չեն տրամադրվել անհրաժեշտ դեղամիջոցները: Նշվածի կապակցությամբ վիճաբանություն է առաջացել քրեակատարողական հիմնարկի աշխատակցի հետ, իսկ քաշքշուկի արդյունքում ազատությունից զրկված անձն ընկել և ստացել է մարմնական վնասվածքներ:

Այցի ժամանակ ազատությունից զրկված անձին դեռևս բուժօգնություն տրամադրված չի եղել, իսկ վերջինիս ռենտգեն հետազոտությունը կազմակերպվել է Կանխարգելման մեխանիզմի աշխատակիցների միջամտությամբ:

Միջադեպի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ձեռք բերված տեղեկությունները փոխանցվել են ՀՀ հատուկ քննչական ծառայությանը, որի կողմից որոշում է կայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով քրեական գործ հարուցելու մասին: Ազատությունից զրկված անձը

ճանաչվել է տուժող և հարցաքննվել փաստաբանի մասնակցությամբ: Քննարկվող քրեական գործի նախաքննությունը դեռևս չի ավարտվել:

ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կարգապահական կանոնակարգը հաստատելու մասին թիվ 999-Ն որոշման 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ կարգապահությունը պարտավորեցնում է յուրաքանչյուր քրեակատարողական ծառայողի ծառայողական պարտքը կատարել հմտորեն և արիաբար, դատապարտյալների և կալանավորված անձանց նկատմամբ ցուցաբերել մարդասիրական վերաբերմունք, չնվաստացնել նրանց արժանապատվությունը:

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետի 2014 թվականի թիվ 3 ցուցման 1-ին կետով հանձնարարվել է մշտական հսկողություն սահմանել աշխատակիցների կարգապահության և նրանց կողմից կանոնակարգի պահպանման ուղղությամբ:

Վերոգրյալ համատեքստում հարկ է արձանագրել, որ պետությունը կրում է պոզիտիվ պարտականություն խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի գործադրման կապակցությամբ արդյունավետ և անաչառ քննություն իրականացնելու համար: Պետք է պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի իրագործման շնորհիվ հասնել նրան, որ վատ վերաբերմունքի յուրաքանչյուր դեպք բացահայտվելու է, իսկ այն կատարած անձինք ենարկվելուն են պատասխանատվության: Միայն այս սկզբունքը կարող կանխարգելել վատ վերաբերմունքի ցանկացած դրսևորում:

<u>Կանխարգելման մեխանիզմի գործունեությանը խոչընդոտելը</u>

Հատկանշական է Կանխարգելման մեխանիզմի 2016 թվականի գործունեության ընթացքում ակտիվ և արդյունավետ համագործակցությունը ՀՀ արդարադատության նախարարության, Քրեակատարողական վարչության, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկների վարչակազմի ներկայացուցիչների հետ:

Նրանց կողմից ցուցաբերվել է պատրաստակամություն քրեակատարողական հիմնարկներ անարգել մուտքի, առանձնազրույցների կազմակերպման, անհրաժեշտ նյութեր, փաստաթղթեր և տեղեկություններ տրամադրելու, ինչպես նաև այլ կերպ Կանխարգելման մեխանիզմի աշխատանքներին աջակցելու ուղղությամբ:

Առանձին խնդիրների շուրջ երկխոսության, ինչպես նաև աշխատանքային քննարկումների արդյունքում վեր են հանվել մի շարք խնդիրներ, նախանշվել դրանց համատեղ լուծման ուղիներ:

2016 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներ կատարված այցերի ընթացքում ստացվել են բողոքներ այն մասին, որ Պաշտպանին դիմելու կամ Պաշտպանի

ներկայացուցիչներին տեղեկություններ հայտնելու համար քրեակատարողական հիմնարկի աշխատակիցներն ազատությունից զրկված անձանց նկատմամբ գործադրել են սպառնալիքներ:

ՀՀ Սահմանադրության 52-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով սահմանված դեպքերում նաև կազմակերպությունների կողմից Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իր իրավունքների և ազատությունների խախտման դեպքում Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը ստանալու իրավունք:

Համաձայն «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ պարբերության[8]՝ «Պաշտպանին բողոք ներկայացնելը կամ նրա միջամտությունը չպետք է հանգեցնի բողոքողի նկատմամբ քրեական, վարչական կամ այլ պատժամիջոցի կիրառման կամ որևէ խտրականության»:

Ըստ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 15-րդ հոդվածի 5-րդ մասի՝ արգելվում է որևէ ձևով հետապնդումը դատապարտյալի նկատմամբ իր իրավունքների և օրինական շահերի խախտումների վերաբերյալ առաջարկություններ, դիմումներ, բողոքներ ներկայացնելու դեպքում: Նման հետապնդում իրականացնող անձինք կրում են օրենքով սահմանված պատասխանատվություն:

Այսպիսով, անընդունելի է ցանկացած միջամտություն անձի՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին կամ նրա ներկայացուցչին դիմում կամ բողոք ներկայացնելու սահմանադրական իրավունքի իրականացմանը: Դրանք վտանգում են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից իր սահմանադրական առաքելության իրականացումը և քրեորեն պատժելի են:

Հատկապես քննադատելի է ազատությունից զրկված անձանց նկատմամբ Պաշտպանին դիմելու համար իրականացվող հետապնդումը:

Այս կապակցությամբ պետք է կարևորել Պաշտպանի գրության հիման վրա ՀՀ արդարադատության նախարարի 2016 թվականի օգոստոսի 29-ի ցուցումը, որով ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետին հանձնարարվել է իրականացնել խիստ հսկողություն ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների կողմից ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին դիմած կամ նրա ներկայացուցիչներին տեղեկություններ հայտնած անձանց նկատմամբ ճնշումներ կամ սպառնալիքներ գործադրելու դեպքերը բացառելու կապակցությամբ:

2016 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներ իրականացված այցերի ընթացքում

[8] Ուժը կորցրել է 2017 թվականի փետրվարի 4-ին:

արձանագրվել են Կանխարգելման մեխանիզմի աշխատակիցների աշխատանքը խոչընդոտելու մի շարք դեպքեր:

Այսպես, քրեակատարողական հիմնարկ կատարված այցերի ընթացքում կալանավորված անձանց անձնական գործերից համապատասխան փաստաթղթերի պատճեններ, մասնավորապես՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից մի շարք կալանավորված անձանց տեսակցությունների և հեռախոսային խոսակցություններն արգելելու մասին որոշումների պատճենները տրամադրելու փոխարեն առաջարկվել է տեղում ծանոթանալ դրանց բովանդակությանը, իսկ մեկ այլ դեպքում պահանջված փաստաթղթերի պատճենները տրամադրելու համար պահանջվել է գրավոր դիմում ներկայացնել:

Նշված խնդրի կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետի հրամանով նշանակվել և անցկացվել է ծառայողական քննություն: Ծառայողական քննության արդյունքում քրեակատարողական հիմնարկի պետը խիստ նախազգուշացվել է և հանձնարարվել է բացառել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից պահանջվող նյութերը և փաստաթղթերը չտրամադրելու դեպքերը:

Մեկ այլ դեպքում քրեակատարողական հիմնարկում խոչընդոտել են Կանխարգելման մեխանիզմի աշխատանքը՝ նկարահանող սարքավորումը չհանձնելու պատճառով:

Սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Պաշտպանին ՀՀ Սահմանադրությամբ և նշված օրենքով վերապահված լիազորությունների իրականացմանը ցանկացած ձևով խոչընդոտելը, ինչպես նաև Պաշտպանին սպառնալը կամ նրան վիրավորանք հասցնելը կամ նրա նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելն առաջացնում են քրեական պատասխանատվություն:

ՀՀ քրեական օրենսգրքի 332.1-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու, այդ թվում՝ նրա գործունեությանը ցանկացած ձևով միջամտելու, Մարդու իրավունքների պաշտպանի՝ օրենքով սահմանված լիազորությունների իրականացման հետ կապված՝ նրա կամ նրա որոշմամբ հանդես եկող իրավասու անձի մուտքը ցանկացած վայր չթույլատրելու համար:

Հարկ է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների վարչակազմի ներկայացուցիչներին պատշաճ կերպով իրազեկել Սահմանադրական օրենքով Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությանն աջակցելու պետական մարմինների պարտականության, ինչպես նաև վերջինիս գործունեությանը խոչընդոտելու համար նախատեսված պատասխանատվության մասին:

ԳԼՈՒԽ 3. ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածը որպես կանխարգելման ազգային մեխանիզմ Պաշտպանի՝ ազատությունից զրկման վայրեր այցելելու լիազորության անարգել իրացումն ապահովելու նպատակով սահմանել է ազատությունից զրկման վայրերի շրջանակը՝ մատնանշելով նաև հոգեբուժական կազմակերպությունները:

Փորձը ցույց է տալիս, որ հոգեբուժական հաստատություններ մոնիթորինգային այցերը կարևոր նշանակություն ունեն հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների ապահովման, ինչպես նաև հնարավոր չարաշահումների կանխարգելման տեսանկյունից: Նման հաստատություններում մոնիթորինգի դերը շեշտադրվել է նաև տարբեր միջազգային պայմանագրերում (Կամընտիր արձանագրություն, Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոնվենցիա և այլն):

Հարկ է ընդգծել է հոգեբուժական հաստատությունների՝ համագործակցության պատրաստակամությունը և աջակցությունը Կանխարգելման մեխանիզմի աշխատանքներին՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների ապահովման կապակցությամբ:

2016 թվականի ընթացքում կատարված ուսումնասիրությունները, ինչպես նաև Առողջապահության նախարարության հետ համատեղ աշխատանքը հնարավորություն են տվել վեր հանելու մի շարք խնդիրներ, որոնք, մասնավորապես, հանգում են հետևյալին.

<u>Հաստիքների անբավարարություն</u>

Հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում մարդու իրավունքների իրացման պատշաճ ապահովման առումով ոչ ամբողջական լուծված է մնում թափուր հաստիքների համալրման հարցը: Դրա հետ մեկտեղ չկան համապատասխան չափորոշիչներ հիվանդների և սպասարկող բժշկական անձնակազմի հարաբերակցության վերաբերյալ:

Այսպես, ՀՀ առողջապահության նախարարության «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ում, որտեղ բժշկական և սպասարկող անձնակազմի թիվն ըստ լրակազմի՝ 185 աշխատակից է, իսկ թափուր աշխատատեղերի քանակը 10-ն է, որոնցից 7-ը հոգեբույժների թափուր հաստիքներ են:

Յուրաքանչյուր բաժանմունքում պահվում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող մինչև 70 անձ: Գիշերային ժամերին բաժանմունքում հերթապահում են 3 բուժաշխատող: Նախատեսված անձնակազմը բավարար չէ յուրաքանչյուր անձին անհատական մոտեցում ցուցաբերելու համար, հատկապես այն պարագայում, երբ բաժանմունքներում առկա են անկողնային կամ տեղաշարժման սահմանափակումներ

ունեցող անձինք: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ ծանրաբեռնված բաժանմունքներում 4 աշխատողը բավարար չէ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ պատշաճ հսկողություն և խնամք ապահովելու համար:

Միաժամանակ, թափուր հաստիքներ առկա են նաև այլ հոգեբուժական հաստատություններում: Այսպես, ՀՀ առողջապահության նախարարության «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲԸ-ում բժշկական և սպասարկող անձնակազմի թիվն ըստ լրակազմի՝ 285 է, որից 9-ը թափուր են, «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ թափուր են 109-ից՝ 19-ը, «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ -ում 20-ից՝ 2-ը:

Այսպիսով, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ պատշաճ հսկողություն և խնամք ապահովելու նպատակով անհրաժեշտ է հոգեբուժական հաստատություններում համալրել թափուր հաստիքները՝ միաժամանակ ավելացնելով բուժաշխատողների հաստիքների քանակը:

<u>Պահման պայմաններ. գերբնակեցում</u>

2016 թվականի ընթացքում ՀՀ առողջապահության նախարարության հոգեբուժական հաստատություններում վեր են հանվել ոչ պատշաճ պահման պայմաններ, այդ թվում՝ գերբնակեցում, սանիտարահիգիենիկ ոչ բարվոք վիճակ և այլն:

Այսպես, օրինակ՝ «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ում դիտարկված 4-րդ, 5-րդ և 6-րդ բաժանմունքները գերբնակեցված են եղել: Արձանագրվել է, որ սենյակների մակերեսները չեն համապատասխանում մահճակալների թվին և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար չեն ապահովում անձնական տարածք:

Այսպես, տղամարդկանց համար նախատեսված 4-րդ բաժանմունքում, որտեղ այցի պահին բուժում և խնամք էր ստանում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող 52 անձանց, 4 հիվանդասենյակներն էլ գերբնակեցված էին՝ 11 մահճակալ տեղադրված էր 30-36քմ տարածքում, 17 մահճակալ՝ 60քմ տարածքում, 15 մահճակալ՝ 55 քմ տարածքում: Գերբնակեցված է եղել նաև «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲԸ-ի 7-րդ՝ հատուկ տիպի բաժանմունքը և «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ն:

Վերոգրյալի համատեքստում հարկ է նշել, որ ԽԿԿ չափանիշների համաձայն՝ հոգեբուժական հաստատությունների բնակելի կացարաններում մեկ անձին հատկացվող բնակելի տարածության չափը չի կարող պակաս լինել 6 քառակուսի մետրից (տե՛ս ԽԿԿ-ի 2014 թվականի Մակեդոնիայի Հանրապետություն կատարած այցելության վերաբերյալ զեկույցը, կետ 145):

ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված չեն չափանիշներ հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում մեկ անձին

հատկացվող բնակելի տարածության չափի վերաբերյալ: ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի առողջապահական համակարգի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին» թիվ 1911-Ն որոշմամբ սահմանված է ՀՀ մարզերում գործող հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում մահճակալների թիվը, որը սակայն չի ներառում «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ն: Սակայն նման կարգավորումներ առկա չեն Երևան քաղաքի հոգեբուժական հաստատությունների պարագայում:

Այսպիսով, **պետությունը պետք է քայլեր ձեռնարկի հոգեբուժական հաստատություններում պահվող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար ներպետական և միջազգային չափանիշներին համահունչ անձնական տարածությամբ ապահովելու ուղղությամբ**: **Խնդիրը պետք է դիտարկել ինչպես հոգեկան առողջության խնդիրներ ունեցող յուրաքանչյուր անձի՝ նվազագույն բնակելի տարածության** (**վեց քառակուսի մետր**), **այնպես էլ մարդկային արժանապատվության հետ համատեղելի պայմաններով անձնական տարածության ապահովման տեսանկյունից**:

<u>Անհրաժեշտ կենսապայմաններ</u>

Հոգեբուժական բոլոր հաստատությունները հիմնականում կարիք ունեն վերանորոգման, պատշաճ կահավորման, անհրաժեշտ կենցաղային պարագաներով վերազինման, ինչպես նաև ջերմային ռեժիմի ապահովման:

«Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ իրականացված այցի ընթացքում հիվանդասենյակները չեն ունեցել դռներ, իսկ հատակը ցեմենտապատ (4-րդ բաժանմունք) կամ սալիկապատ է եղել (5-րդ բաժանմունքում): Միջանցքներում (4-րդ և 5-րդ բաժանմունք), որոնք միաժամանակ ծառայել են որպես հանգստի և ժամանցի սենյակ, տեղադրված են եղել նաև ճաշելու համար սեղաններ և աթոռներ, առանձին ճաշարան նախատեսված չի եղել:

«Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի հիվանդասենյակներում տեղադրված չեն եղել անհատական կողապահարաններ: Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց անձնական իրերը պահվել են քույր-տնտեսուհու սենյակում: Դրանց ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ շատ դեպքերում վերջիններս որևէ կերպ առանձնացված չեն միմյանցից և առանց որևէ տարբերանշանների են: Կողապահարան տեղադրված է եղել միայն վեցերորդ բաժանմունքի 2 հիվանդասենյակներում՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող 2 առանձին անձանց խնդրանքով, նրանցից մեկը կողպված է եղել: Կողապահարաններ առկա չեն եղել նաև ՀՀ Շիրակի մարզի Գյումրու հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ-ում՝ ֆինանսական անբավարար պայմանների պատճառով: Անձնական տարածքով և պահարաններով մասնակի են ապահովված Ակադեմիկոս Ա.

Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն» ՓԲԸ-ն և «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ն:

«Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ում բաժանմունքի հիվանդասենյակներում անկողնային պարագաները որոշ դեպքերում կեղտոտ են եղել, իսկ ներքնակները՝ հնամաշ և բարակ, երբեմն երկու կամ երեք ներքնակ միաժամանակ է տեղադրված եղել:

5-րդ բաժանմունքում (կանանց համար նախատեսված բաժանմունք) տարբեր հիվանդասենյակներում առաստաղից ջուր էր կաթում հենց անկողինների վրա և անկյունային 2 անկողիններն ամբողջովին թաց էին: Հիվանդասենյակներից մեկում մահճակալները տեղադրված են եղել իրար կից, և պահպանված չի եղել անձնական տարածությունը:

4-րդ բաժանմունքում հաշմանդամություն ունեցող անձանց հագուստը հնամաշ է եղել: Թեև բուժանձնակազմի ներկայացուցիչները նշել են, որ իրենք են հոգում նրանց կարիքները, սակայն հոգեկան առողջության խնդիրներ ունեցող մի շարք այլ անձանց պնդմամբ՝ իրենք են օգնում հաշմանդամություն ունեցող անձանց օգտվել սանհանգույցից, սնվել և բավարարել կենցաղային մյուս պահանջմունքները:

4-րդ բաժանմունքում եղել են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող գիշերամիզող 9 անձ, սակայն բաժանմունքում նրանց տրամադրելու նպատակով առկա է եղել թվով 3 տակդիր: Բժշկական պարագաների տրամադրման հաշվառման մատյանի համաձայն, վերջին անգամ 4-րդ բաժանմունքին տակդիր տրամադրվել է հոկտեմբեր ամսին՝ թվով 20 հատ: Անհրաժեշտ է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ապահովվել անհրաժեշտ քանակի տակդիրներով և(կամ) տրամադրել պոլիէթիլենապատ ներքնակներ:

Հարկ է նշել, որ նման անբարենպաստ կենցաղային պայմանները կարող են խոչընդոտել արդյունավետ բուժմանը:

Դեղորայքը խմելու համար նախատեսված է եղել դույլով ջուր (չնայած որ սանհանգույցում եղել է հոսող ջուր), մեկանգամյա օգտագործվող բաժակները ոչ բավարար քանակի են եղել և օգտագործվել են բազմակի անգամ՝ չպահպանելով հիգիենայի կանոնները:

«Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի բաժանմունքներում այցի պահին հիվանդասենյակներում 18°C էր, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք տարածքում շրջել են ձմեռային արտահագուստներով և երկարաճիթ կամ կիսաճթքավոր կոշիկներով:

Առողջապահության նախարարության տրամադրած պարզաբանումների համաձայն՝ «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ում կատարվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ. բարեկարգվել են 1-8 բաժանմունքները, արհեստանոցը, խոհանոցը և ընդունարանը, բակի զուգարանը, հաստատության տարածքը, սակայն առկա է մեծածավալ վերանորոգման աշխատանքների

կատարման անհրաժեշտություն, հատկապես՝ լոգասենյակում: «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲԸ-ում 2016 թվականի ընթացքում վերանորոգվել է կոյուղագիծը, «Նորք» հոգեբուժական կենտրոն» ՓԲԸ-ում՝ տանիքը, ջրատար խողովակները, ջեռուցման համակարգը (մասնակի): «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ում իրականացվել են տանիքի, գլխավոր մասնաշենքի արտաքին պատի, ընդունարանի մուտքի, արտթերապևտիկ բաժանմունքի մուտքի, հոգեբանի աշխատասենյակի, դահլիճի, բժիշկների աշխատասենյակի, գլխավոր մասնաշենքի տաք և սառը ջրամատակարարման ներքին ցանցի և կոյուղու ընթացիկ վերանորոգում, վերելակի մեքենայական սրահի, կտուրի ծածկի տեղային նորոգում: «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ում վերանորոգվել է ռենտգեն կաբինետը, ստեղծվել է արվեստի, երաժշտական, սպորտային վերականգնողական սրահ:

ՀՀ Շիրակի մարզի Գյումրու հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ-ում իրականացվել է մասնակի կոսմետիկ վերանորոգում: ՀՀ Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր ՊՓԲԸ-ում վերանորոգվել է հիվանդանոցային բաժանմունքի միջանցքը, 1 հիվանդասենյակ, ընդունարանի հատակը, նկուղային հարկի պատուհանները փոխարինվել են եվրո պատուհաններով: «Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն» ՓԲԸ-ում վերանորոգվել է 2 հիվանդասենյակ, տեղադրվել է 6 եվրո պատուհան:

Այսպիսով, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց արդյունավետ բուժմանը նպաստելու նպատակով անհրաժեշտ է ապահովել նրանց համար բարենպաստ կենցաղային պայմաններ, մասնավորապես՝

- **ննջասենյակներում նվազեցնել բնակեցվածությունը,**
- **կազմակերպել վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ՝ հիվանդասենյակներում բարեկեցիկ պայմաններ ապահովվելու նպատակով, այդ թվում՝ վերանորոգել «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի 5-րդ բաժանմունքի տանիքը,**
- **բաժանմունքներում նախատեսել առանձնացված ճաշարաններ,**
- **հոգեկան առողջության խնդիրներ ունեցող բոլոր անձանց տրամադրել կողպելու հնարավորություն ընձեռող անձնական տարածություն, որտեղ նրանք կարող են պահել իրենց անձնական իրերը,**
- **քայլեր ձեռնարկել գիշերամիզող անձանց պոլիէթիլենապատ ներքնակներ տրամադրելու ուղղությամբ, ինչպես նաև բաժանմունքներում ապահովվել անհրաժեշտ քանակի տակդիրներ,**
- **հոգեկան առողջության խնդիրներ ունեցող բոլոր անձանց ապահովել մաքուր և պատշաճ որակի անկողնային պարագաներով, ինչպես նաև պատշաճ հագուստով,**

- **ապահովել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հանգստի՝ քնի իրավունքը հիվանդասենյակներում գիշերային ժամերին անջատելով լույսերը**,
- **բացառել մեկանգամյա օգտագործման բաժակների բազմակի անգամ օգտագործումը**, **և(կամ) նախատեսել անհատական բաժակներ**,
- **բաժանմունքներում ապահովել ջերմային ռեժիմը**,
- **հաշվի առնել տարեց և(կամ) հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները**, **պատշաճ կերպով կազմակերպել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքը**, **այդ թվում՝ անձնական հիգիենան**:

<u>Լոգանքի և լվացքի կազմակերպում</u>

Հոգեբուժական հաստատություններում վեր են հանվել լոգանքի կազմակերպման հետ կապված խնդիրներ, մասնավորապես՝ «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ում այցի պահին լոգասենյակի պայմանները եղել են անբավարար՝ հանդերձարանում բացակայել են պահարանները, պատերը բորբոսած են եղել, հատակը՝ ցեմենտապատ, պատուհանները՝ հնամաշ, իսկ պատերի ծեփամածիկը՝ թափված: Լոգանքի կազմակերպման մասնաշենքն ունեցել է հիմնանորոգման կարիք: Լոգանքը կազմակերպվել է 10 օրը մեկ: Այս կապակցությամբ հարկ է ընդգծել, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող բոլոր անձանց համար պետք է ապահովել անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պայմաններ, լոգանքի հնարավորություն՝ առանց որևիցե սահմանափակման:

Արձանագրվել են նաև լվացքի պատշաճ կազմակերպման հետ կապված խնդիրներ: Օրինակ՝ «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի լվացքատունը վերանորոգված և հագեցված է եղել լվացքի մեքենաներով, չորանոցներով և արդուկի սարքով: Սակայն հագուստը, այդ թվում՝ ներքնազգեստը, լվացվել են բոլորինը միասին՝ առանց ապահովելու դրանց պատշաճ ախտահանումը:

Այսպիսով, **անհրաժեշտ է**.

- **վերանորոգել «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի լոգասենյակի մասնաշենքը**,
- **հոգեբուժական բոլոր հաստատություններում պահվող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ապահովել լոգանքից առանց սահմանափակման օգտվելու հնարավորություն**,
- **լվացքատանը կազմակերպել հագուստի**, **մասնավորապես՝ ներքնազգեստների պատշաճ տարանջատում և ախտահանում**, **ըստ անհրաժեշտության**, **սահմանել լվացքի կազմակերպման կարգ**:

<u>Ազատ տեղաշարժվելու հնարավորություն</u>

«Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի դիտարկված բոլոր բաժանմունքներում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք գտնվել են

միջանցքներում: 4-րդ և 6-րդ բաժանմունքներում մի քանի ծանր հիվանդներ իրենց հիվանդասենյակներում են եղել: Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց պնդմամբ՝ բացի ծանր հիվանդներից մյուսներին արգելվում է ցերեկային ժամերին գտնվել հիվանդասենյակներում, օգտվել մահճակալից, ինչը սահմանափակում է նրանց ազատ տեղաշարժը բաժանմունքներում, ինչպես նաև սեփական կամքով անձնական տարածքը տնօրինելու անձի հնարավորությունը:

Ուսումնասիրված բաժանմունքներում հաշմանդամություն ունեցող և սայլակներով տեղաշարժվող անձանց համար թեքահարթակներ առկա չեն եղել: Արտաքնոցները հիմնականում ասիական տիպի են եղել՝ չհարմարեցված տեղաշարժման սահմանափակումներ ունեցող անձանց համար և վերանորոգման կարիքն ունեցող:

Հոգեբուժական հաստատություններում թեքահարթակների և սանհանգույցներից օգտվելու համապատասխան հարմարությունների բացակայությունը խոչընդոտում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ազատ տեղաշարժը և բարեկեցիկ կյանքը:

Ըստ ՀՀ առողջապահության նախարարության՝ «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի 1-ին, 2-րդ, 8-րդ բաժանմունքներում տեղադրված է հարմարեցված սանհանգույց ՝ զուգարանակոնք և լվացարան: «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ում հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի է և հարմարեցված միայն ընդունարանը՝ մուտքի և ելքի համար: «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ում մասնակի է հարմարեցված ազատ տեղաշարժի և սանհանգույցներից օգտվելու համար: «Նորք» հոգեբուժական կենտրոն» ՓԲԸ-ում և «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ում միայն ընդունարանում է առկա թեքահարթակ: «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ում և «Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն» ՓԲԸ-ում առկա են թեքահարթակներ:

Այսպիսով, **անհրաժեշտ է**.

- **հոգեբուժական հաստատություններում պահվող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հնարավորություն ընձեռել իրենց կամքով տնօրինել իրենց անձնական տարածքը և ազատ տեղաշարժվել բաժանմունքներում**,
- **հոգեբուժական հաստատություններում տեղաշարժման սահմանափակումներ ունեցող անձանց ազատ տեղաշարժը և բարեկեցիկ կյանքն ապահովելու համար հոգեբուժական հաստատություններում կառուցել թեքահարթակներ**, **ինչպես նաև սանհանգույցներից օգտվելու համապատասխան հարմարություններ**:

<u>Բացթյա զբոսանք</u>

Մշտադիտարկման արդյունքում արձանագրվել են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց բացօթյա զբոսանքի կազմակերպման հետ կապված խնդիրներ:

Այսպես, «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք ձմռան ամիսներին հիմնականում չեն օգտվում բացօթյա զբոսանքի իրավունքից: Բուժանձնակազմն արգելում է նրանց դուրս գալ զբոսաբակ՝ ցուրտ եղանակային պայմանների պատճառաբանությամբ, ինչպիսի մոտեցումը խախտում է *«Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ կետի 15-րդ ենթակետի պահանջներն առ այն, որ հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձինք իրավունք ունեն հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի:*

Ուստի անհրաժեշտ է, օրենքով սահմանված կարգով ապահովել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող բոլոր անձանց ամենօրյա բացօթյա զբոսանքից օգտվելու հնարավորությունը:

Կապն արտաքին աշխարհի հետ

2016 թվականի ընթացքում ՀՀ առողջապահության նախարարության հոգեբուժական հաստատություններում վեր են հանվել արտաքին աշխարհի հետ կապի ապահովման հետ կապված խնդիրներ:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանցից շատերը հիվանդանոցում բնակվում են երկար տարիներ և ազգականների հետ կապ չեն պահպանում, մյուսներն ուղղակի լքված են, սոցիալական կապերը՝ խզված: Որոշ հոգեբուժական հիվանդանոցներում նախատեսված չեն սոցիալական աշխատողների հաստիքներ:

Մասնավորապես, «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ում բուժում և խնամք ստացող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց մի մասը տեղյակ չի եղել զանգեր կատարելու իրավունքի մասին, իսկ մյուսների պնդել են, որ կարող են զանգեր կատարել ամսվա կտրվածքով մեկ անգամ՝ մինչև մեկ որպես տևողությամբ:

Սոցիալական կապերը վերականգնելու նպատակով անհրաժեշտ է հոգեբուժական հաստատություններում ապահովել սոցիալական աշխատողների հաստիքներ, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, հեռախոսազանգից օգտվելու իրավունքի իրացումը:

Զսպման միջոցներ

Ըստ «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի տնօրինության՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ կիրառվում են միայն դեղորայքային հանդարտեցման միջոցներ, սակայն այդ կապակցությամբ առանձին գրանցամատյան չի վարվում, որի պատճառով դժվար է գնահատել դեղամիջոցների

(որպես հանդարտեցման միջոցներ) կիրառման հաճախականությունը, տևողությունը, անձի համաձայնությունը և այլ տվյալներ: Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց պնդմամբ՝ անհանգիստ անձանց նկատմամբ մինչև դեղորայքի ներարկումը կիրառվում է ֆիզիկական զսպում, իսկ ֆիզիկական զսպմանը երբեմն մասնակցում են նաև հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք:

Հարկ է նշել, որ դեղորայքային զսպան կիրառման դեպքերում անհրաժեշտ է վարել հաշվառում՝ ամրագրելով վերը նշված հանգամանքները: Ավելին, զսպման ֆիզիկական միջոցների կիրառման դեպքում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց երբեք չպետք է նշանակել դեղամիջոց՝ առանց նրանց համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ դեղամիջոց չընդունելը կարող է նրանց առողջությանը վտանգ սպառնացող լուրջ հետևանքներ ունենալ:

Այս կապակցությամբ ՀՀ առողջապահության նախարարությունը պարզաբանում է տրամադրել այն մասին, որ ԽԿԿ-ի 2015 թվականի հոկտեմբերի 5-ից 15-ը Հայաստան կատարած այցելության վերաբերյալ 2016 թվականի զեկույցում տեղ գտած առաջարկների կատարումն ապահովելու նպատակով ՀՀ առողջապահության նախարարի 2016 թվականի օգոստոսի 23-ի թիվ 2636-Ա հրամանով հաստատվել է «Հոգեբուժական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում հոգեկան խանգարումներ ունեցող անձանց նկատմամբ ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների և հանդարտեցման մեթոդների կիրառման կարգը» և տրամադրվել է հոգեբուժական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների տնօրեններին՝ ի ղեկավարումն:

Այսպիսով, անհրաժեշտ է սահմանել հոգեբուժական հաստատություններում դեղորայքային զսպման միջոցների կիրառման կարգ և նախատեսել դեղորայքային զսպման միջոցների հաշվառման գրանցամատյան:

<u>Վնասվածքների արձանագրում</u>

2016 թվականին վեր են հանվել խնդիրներ հոգեբուժական հաստատություններում վնասվածքների հաշվառման և այդ մասին իրավապահ մարմիններին տեղեկացնելու ընթացակարգերի հետ կապված:

ՀՀ առողջապահության նախարարության պարզաբանումների համաձայն՝ հոգեբուժական հաստատություններում ստացած վնասվածքների կամ այնտեղ վնասվածքով ընդունվելու բոլոր դեպքերում հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունները վնասվածքի մասին գրանցում են կատարում համապատասխան մատյանում, հիվանդության պատմագրում և անմիջապես հայտնում են ՀՀ ոստիկանության տարածքային բաժանմունք:

Մշտադիտարկման արդյունքում «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի բաժանմունքներում վարվող վնասվածքների հաշվառման, ինչպես նաև

Ոստիկանություն հայտնած վնասվածքների և մահվան դեպքերի հաշվառման մատյանների ուսումնասիրությունից պարզվել է, որ Ոստիկանություն հայտնվում են միայն այն դեպքերը, երբ վնասվածք ստացած անձը տեղափոխվում է առողջապահական մարմինների այլ հաստատություն կամ, երբ արձանագրվում է մահ: Հոգեբուժական հիվանդանոցներում ստացած վնասվածքների մասին իրավապահ մարմիններին հայտնելու վերաբերյալ օրենսդրական ընթացակարգ սահմանված չէ, ինչն էլ տարբերակված մոտեցման առիթ է հանդիսանում:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է մշակել կարգ՝ հոգեբուժական հաստատություններում վնասվածքների հաշվառման և այդ մասին իրավապահ մարմիններին տեղեկացնելու վերաբերյալ:

<u>Նեղ մասնագիտական բժշկական ծառայություններից օգտվելու հնարավորություն</u>

Շարունակում են խնդրահարույց մնալ հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում նեղ մասնագիտական խորհրդատվության կազմակերպման, այդ թվում՝ ատամնաբուժական ծառայությունից օգտվելու հնարավորության, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում առողջապահական մարմինների այլ հաստատություն՝ պատշաճ հետազոտություն և անհրաժեշտ բժշկական օգնություն ստանալու հարցերը:

ՀՀ առողջապահության նախարարության տեղեկությունների համաձայն՝ հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում ըստ անհրաժեշտության նեղ մասնագիտական խորհրդատվությունն իրականացվում է կազմակերպության գտնվելու վայրի տարածքային սպասարկման առողջապահական հաստատություններում՝ պայմանագրային հիմունքներով: Դրա հետ մեկտեղ որոշ հոգեբուժական հաստատություններ համալրված են բժիշկ-մասնագետներով՝ նյարդաբան, թերապևտ, ատամնաբույժ և այլն: Մասնավորապես, «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲԸ-ում աշխատում է նյարդաբան, թերապևտ, ատամնաբույժ, «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ում՝ նյարդաբան, թերապևտ, համաճարակաբան, ֆունկցիոնալ ախտորոշման մասնագետ, «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ում՝ նյարդաբան և թերապևտ, իսկ «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ում աշխատում է թերապևտ, վիրաբույժ, մանկաբարձ-գինեկոլոգ, սոնոգրաֆիստ:

«Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ում մշտադիտարկման ընթացքում արձանագրվել է, որ գրեթե բոլոր հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք ունեն ատամների հետ կապված խնդիրներ՝ մասնակի կամ լրիվ ադենտի, ատամների կամ լնդերի բուժման, պրոթեզավորման, ոմանք էլ՝ ակնաբույժի, մաշկաբանի կամ այլ նեղ մասնագետի խորհրդատվության կարիք:

Այսպիսով, **անհրաժեշտ է մշակել մեխանիզմներ և ապահովել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց**, **ըստ անհրաժեշտության**, **բժշկական նեղ մասնագիտական**, **այդ թվում՝ ատամնաբուժական ծառայություններից օգտվելու հնարավորությունը**:

Սկրինինգային հետազոտություններ

2015 թվականի հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում մեկնարկել են «Համաշխարհային բանկի» կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակում սկրինինգային հետազոտությունները, որոնք ուղղված են արյան մեջ շաքարի մակարդակի որոշմանը, արյան զարկերակային գերճնշման հայտնաբերմանը, արգանդի վզիկի քաղցկեղի կանխարգելմանը (ՊԱՊ թեստ): Սակայն հոգեբուժական հաստատություններում երկարատև բուժում և/կամ խնամք ստացող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք 2016 թվականի ընթացքում չեն ենթարկվել սկրինինգային հետազոտությունների, մինչդեռ դրանք ուղղված են հիվանդությունների վաղ հայտնաբերմանը և կանխարգելմանը:

Ուստի, **անհրաժեշտ է մշակել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում մեկնարկած սկրինինգային հետազոտությունների կատարման հնարավոր մեխանիզմներ**:

Անձը հաստատող փաստաթղթերով ապահովման խնդիրներ

Հոգեբուժական հաստատություններում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանցից ոմանք չունեն անձնագիր, ինչը խոչընդոտում է բժշկասոցիալական փորձաքննության կամ կենսաթոշակային տարիքին հասնելիս թոշակավորման կազմակերպման գործընթացը:

Այսպես, «Սևան» հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի վարչակազմի ջանքերն անձնագրերի ստացման հարցում որոշ դեպքերում անարդյունք են եղել՝ կապված անձնական տվյալների և հաշվառման բացակայության հետ: Ի պատասխան Մարդու իրավունքների պաշտպանի միջնորդության՝ ՀՀ ոստիկանությունը տեղեկատվություն է տրամադրել այն մասին, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանցից 2-ին անձնագիր տրամադրելու համար արդեն իսկ ձեռնարկվել են միջոցներ, իսկ մնացած 17-ի հաշվառման և անձնագրավորման համար պահանջվել է լրացուցիչ տեղեկատվություն:

Հարկ է վեր հանել հոգեբուժական հաստատություններում գտնվող և անձը հաստատող փաստաթղթեր չունեցող անձանց քանակը և հետևողականություն դրսևորել նրանց անձնագրավորման գործընթացի նկատմամբ:

Քաղաքային տրանսպորտի հասանելիություն

Որոշ հոգեբուժական հաստատություններ տեղակայված են բնակելի գոտիներին հարող տարածքներում, որի արդյունքում քաղաքային տրանսպորտային միջոցները հասանելի չեն:

Այսպես, բացակայում է «Սևան» հոգեբուժական հիվանդանոց» հասանելի քաղաքային տրանսպորտային միջոց, և Սևան քաղաքից հոգեբուժական հաստատություն հասնելու համար պետք է ոտքով անցնել 2 կմ ճանապարհ կամ օգտվել հարևան գյուղ գնացող տաքսիներից: Այս կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը համապատասխան գրություն է ուղարկել ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն, ինչի արդյունքում Սևանի քաղաքապետի որոշմամբ հաստատվել է Սևան համայնքի ներքաղաքային միկրոավտոբուսային երթուղու նոր չվացուցակ, որը ներառում է Սևանի հոգեբուժական հիվանդանոցի սպասարկումը:

<u>Դիմում-բողոքներ գրելու հնարավորություն</u>

Մշտադիտարկման արդյունքում արձանագրվել են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կողմից դիմում-բողոքների ներկայացման հնարավորության խնդիրներ:

Մասնավորապես, «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ում դիմումներ և բողոքներ ներկայացնել հնարավոր է միայն բանավոր կերպով՝ աշխատակիցների միջոցով: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է, որ որևէ բաժանմունքում դիմում-բողոքների արկղիկ տեղադրված չէ:

Այսպիսով, **ապահովված չէ գաղտնիության պահպանմամբ դիմում-բողոք գրելու հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հնարավորությունը**:

Այդ մասին է վկայում նաև ՀՀ առողջապահության նախարարության տրամադրած տեղեկատվությունն այն մասին, որ նախարարությունը 2016 թվականի ընթացքում որևէ դիմում-բողոք չի ստացել հոգեբուժական հաստատությունում բուժում կամ խնամք ստացող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանցից:

Հարկ է նշել, որ ԽԿԿ-ն 2015 թվականի հոկտեմբերի 5-ից 15-ը Հայաստան կատարած այցի վերաբերյալ զեկույցի 112-138-րդ կետերում նույնպես անդրադարձ է կատարել ՀՀ հոգեբուժական հաստատություններում առկա վերոշարադրյալ խնդիրներին:

ԳԼՈՒԽ 4. ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐ

2016 թվականի ընթացքում ՀՀ ոստիկանությունն ակտիվ համագործակցել է Կանխարգելման մեխանիզմի հետ, մասնավորապես՝ ապահովել է անարգել մուտք ՀՀ ոստիկանության բաժիններ և ձերբակալված անձանց պահելու վայրեր, աջակցել այնտեղ պահվող անձանց հետ առանձնազրույցների կազմակերպմանը, տրամադրել անհրաժեշտ նյութեր, փաստաթղթեր և տեղեկություններ, ինչպես նաև այլ կերպ աջակցել Կանխարգելման մեխանիզմի աշխատանքներին:

2016 թվականի սեպտեմբերին այցեր են իրականացրել ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության՝ Կապանի, Գորիսի, Մեղրիի, Սիսիանի և ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչության՝ Վայքի և Եղեգնաձորի բաժիններ և ձերբակալված անձանց պահելու վայրեր (այսուհետ նաև՝ ՁՊՎ-ներ): Բացի այդ, 2016 թվականի ընթացքում պարբերաբար այցեր են իրականացվել Հայաստանի Հանրապետության ձերբակալված անձանց պահելու մի շարք այլ վայրեր:

Այցերի ընթացքում իրականացվել է անազատության մեջ պահվող անձանց պահման պայմանների, նրանց իրավունքների և հիմնարար ազատությունների պահպանման վիճակի ուսումնասիրություն, որի արդյունքում վեր են հանվել մի շարք խնդիրներ: Մասնավորապես, արձանագրվել են ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապի ապահովման, այդ թվում նաև ապակե միջնորմով և հատուկ հեռախոսակապով տրամադրվող տեսակցությունների, պահման պայմանների, նյութակենցաղային ապահովվածության, լոգանք ընդունելու հնարավորության, զբոսանքի պատշաճ ապահովման, ինչպես նաև ձերբակալված և (կամ) կալանավորված անձանց փոխադրող հատուկ տրանսպորտային միջոցների ոչ բավարար պայմանների հետ կապված խնդիրներ:

<u>Ապակե միջնորմով և հատուկ հեռախոսակապով տրամադրվող տեսակցությունների հետ կապված խնդիրներ</u>

Այցերի ընթացքում տեղի ունեցած առանձնազրույցների ժամանակ ազատությունից զրկված անձինք իրենց դժգոհությունն են արտահայտել ապակե բաժանարարով տրամադրվող տեսակցությունների (այսպես կոչված՝ «փակ» տեսակցությունների) վերաբերյալ: Այդ պայմաններում տրամադրվող տեսակցությունները բացառում են ֆիզիկական շփումն ազատությունից զրկված անձի և տեսակցողի միջև:

ԽԿԿ-ն, անդրադառնալով «փակ» տեսակցությունների տրամադրման կարգին, ընդգծել է, որ դրանք կազմակերպվում են այնպիսի սենյակներում (խցիկներում), որտեղ առկա է ֆիզիկական շփումը բացառող բաժանարար: Այդ իսկ պատճառով

նման տեսակցությունները ենթադրում են բացառապես բանավոր հաղորդակցություն՝ բաժանարարում առկա փոքր անցքերի կամ հատուկ հեռախոսակապի միջոցով:

Հատկանշական է, որ այդպիսի տեսակցությունների վերաբերյալ *ԽԿԿ-ի ձևավորած իրավական դիրքորոշումների ուսումնասիրությունը վկայում է, որ «փակ» տեսակցությունները թույլատրելի են միայն բացառիկ դեպքերում՝ հաշվի առնելով ազատությունից զրկված անձի վտանգավորության աստիճանը: Այս դեպքում ազատազրկման վայրի վարչակազմը պետք է իրականացնի ազատությունից զրկված անձանց վարքագծի անհատական ռիսկային գնահատում (տե՛ս ԽԿԿ-ի 2008 թվականի ապրիլի 21-30-ը Լիտվա կատարած այցի վերաբերյալ զեկույցի 88-րդ կետը, 2011 թվականի հունվարի 20-27-ը Հունաստան կատարած այցի վերաբերյալ զեկույցը, կետ 78):*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ազգականների հետ ապակե միջնորմով և ներքին հեռախոսակապով հաղորդակցվելու վերաբերյալ գործով արձանագրել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի խախտում (տե՛ս Մոիսեևն ընդդեմ Ռուսաստանի գործով 2008 թվականի հոկտեմբերի 9-ի վճիռը, գանգատ թիվ 62936/00, կետեր 80, 257-259):

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում արդեն իսկ միջոցներ են ձեռնարկվել տեսակցության սենյակները բարելավելու ուղղությամբ, որոնք անհրաժեշտ է իրականացնել նաև ՀՀ ոստիկանության բոլոր ՁՊՎ-ներում:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ ՀՀ ոստիկանությանն առաջարկվել է վերափոխել տեսակցության սենյակները, ապամոնտաժել ապակե միջնորմը՝ ապահովելու համար տեսակցողների և ազատազրկված անձանց միջև մարդկային անմիջական շփման հնարավորությունը:

Նշվածի կապակցությամբ ՀՀ ոստիկանությունը տեղեկացրել է, որ ելնելով անվտանգության նկատառումներից՝ ազատությունից զրկված անձի և տեսակցության եկած անձանց միջև շփումը սահմանափակվում է, այդ ընթացքում ՁՊՎ ծառայողից աննկատ արգելված իրեր փոխանցելը կանխելու և դրանից բխող հետևանքներից խուսափելու համար:

Վերոշարադրյալ միջազգային չափանիշների լույսի ներքո նշված փաստարկը կարող է ողջամիտ համարվել միայն բացառիկ դեպքերում՝ ազատությունից զրկված կոնկրետ անձի վարքագծի անհատական ռիսկայնության գնահատմամբ:

Այսպիսով, անհրաժեշտ է ՁՊՎ-ներում պահվող ազատությունից զրկված անձանց ապահովել տեսակցությունների համար նախատեսված սենյակների բավարար պայմաններ՝ այդ թվում տեսակցողների և ազատազրկված անձանց միջև մարդկային անմիջական շփման հնարավորությունն ապահովելու համար

վերափոխել տեսակցության սենյակները՝ ապամոնտաժելով ապակե միջնորմները:

<u>Նյութակենցաղային ապահովվածության և լոգանքի կազմակերպման հետ կապված խնդիրները</u>

Սիսիանի բաժնի ձերբակալված անձանց պահելու վայր Կանխարգելման մեխանիզմի այցի ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ ազատությունից զրկված անձանց տրամադրվել է պիտանելիության ժամկետը լրացած ատամի մածուկ, օգտագործված ատամի խոզանակ և օճառ:

Բացի այդ, խցերից դուրս բերման գրանցամատյանների ուսումնասիրությունից պարզվել է, որ ձերբակալված և կալանավորված անձինք լոգանքի իրավունքից օգտվում են միայն Կապանի բաժնի ձերբակալված անձանց պահելու վայրում:

Հարկ է նաև նշել, որ ձերբակալված անձանց պահելու բոլոր վայրերի խցերի դռների վրա տեսանելի հատվածում փակցված են ազատությունից զրկված անձանց իրավունքների իրազեկման պաստառներ, որոնք ներառում են նաև լոգանք ընդունելու հնարավորությունը (*ՀՀ կառավարության 2008 թվականի հունիսի 5-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 574-Ն որոշման 28-րդ կետի համաձայն՝ անձնական հիգիենայի համար ձերբակալված անձանց պահելու վայրում պահվող անձինք ապահովվում են տաք ջրով և մինչև 15 րոպե տևողությամբ ցնցուղով լոգանք ընդունելու հնարավորությամբ*):

Նման պայմաններում օրինաչափորեն հարց է առաջանում, թե ինչու նշված անձինք չեն օգտվում լոգանքի իրենց հնարավորությունից:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ ՀՀ ոստիկանությանն առաջարկվել է պարզել ստեղծված իրավիճակի պատճառներն և դրանց ուղղությամբ ձեռնարկել գործուն քայլեր:

Նշվածի կապակցությամբ ՀՀ ոստիկանությունը պարզաբանել է, որ ՀՀ ոստիկանության ենթակա ստորաբաժանումների բոլոր ՁՊՎ-ներն ապահովված են տաք ջրով, սակայն պահվող անձինք հաճախ կաշկանդված են լինում և չեն ցանկանում լոգանք ընդունել, չնայած որ տեղեկացվում են իրենց այդ իրավունքի մասին: ՀՀ ոստիկանության համակարգում գործող բոլոր ՁՊՎ-ներն ապահովվել են հիգիենայի անհրաժեշտ նոր պարագաներով, որոնք տրամադրվում են անձանց՝ ՁՊՎ-ներ ընդունվելիս:

Չնայած վերոնշյալ հիմնավորումներին՝ լոգանքի իրավունքի ապահովման նպատակով անհրաժեշտ է ՁՊՎ-ներում պահվող ազատությունից զրկված անձանց պատշաճ իրազեկել լոգանքից օգտվելու իրենց հնարավորության վերաբերյալ՝ միաժամանակ, ազատությունից զրկված անձանց կողմից յուրաքանչյուր անգամ լոգանքից օգտվելու դեպքում այդ մասին գրառում

կատարելով «Խցերից դուրս բերման» մատյանում: Անհրաժեշտ է նաև բացառել ՁՊՎ-ում պահվող ազատությունից զրկված անձանց պիտանելիության ժամկետը լրացած անձնական հիգիենայի պարագաների տրամադրումը:

<u>Պահման պայմանների հետ կապված խնդիրներ</u>

Այցերի ընթացքում ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության՝ Գորիսի և ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչության՝ Եղեգնաձորի ձերբակալված անձանց պահելու վայրերում արձանագրվել են խցերի պայմանների հետ կապված խնդիրներ, մասնավորապես՝ խցերի պատերն ունեցել են անհարթ մակերևույթ, լուսավորությունը կարդալու համար եղել է անբավարար, առկա են եղել օդափոխության հետ կապված խնդիրներ: Նման պայմաններն ազատությունից զրկված անձանց մոտ կարող են առաջացնել ագրեսիվություն և լարվածություն:

Վերոգրյալի հետ մեկտեղ արձանագրվել է, որ երկու հոգու համար նախատեսված խցերն ապահովված են մեկ աթոռով, որպիսի պայմաններում սննդի ընդունման ժամանակ անձը զրկվում է նստելու հնարավորությունից: Այցերից մեկի ժամանակ ձերբակալված անձը բողոքել է, որ խցում չկա սեղան: Պաշտպանի ներկայացուցչի կողմից հարցը բարձրացվել և տեղում լուծում է ստացել *(ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ձերբակալված անձանց պահման վայր)*:

Ձերբակալված անձանց պահելու որոշ վայրերի խցերն ապահովված չեն եղել կանչի կոճակներով, այդ իսկ պատճառով ազատությունից զրկված անձինք վարչակազմի ներկայացուցիչներին դիմելու համար ստիպված են եղել բարձրաձայն կանչել վերջիններիս կամ դա անել դռանը հարվածելու միջոցով *(ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Բերդի, Դիլիջանի, Իջևանի, Նոյեմբերյանի բաժինների, ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Թալինի, Աշտարակի բաժինների, ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության Արարատի բաժնի և ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Արմավիրի բաժնի)*: Որոշ ՁՊՎ-ների քննչական սենյակները նույնպես ապահովված չեն եղել կանչի կոճակներով:

Որոշ ՁՊՎ-ների խցերում բացակայել են ռադիոընդունիչ սարքերը *(ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի ՁՊՎ)*:

*Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2008 թվականի հունիսի 5-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 574-Ն որոշման 27-րդ կետի համաձայն՝ ՁՊՎ-ի մենախցերն ապահովվում են՝ սեղանով, աթոռով, սանիտարական հանգույցով, խմելու ջրի ծորակով (բաքով), կենցաղային իրերի դարակով, **ռադիոընդունիչով** և աղբամանով:*

Նկատի ունենալով վերոգրյալը՝ Պաշտպանը ՀՀ ոստիկանությանն առաջարկել է ձերբակալված անձանց պահելու վայրերի խցերում նախատեսել կանչի կոճակներ,

ինչպես նաև համապատասխան թվով աթոռներ՝ սննդի ընդունումը հարմարավետ դարձնելու նպատակով:

Այսպիսով, անհրաժեշտ է ՀՀ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերի խցերն ու քննչական սենյակներն ապահովել կանչի կոճակներով, խցերում ապահովել սեղան և համապատասխան թվով աթոռներ՝ սննդի ընդունումը հարմարավետ դարձնելու նպատակով, ռադիոընդունիչ սարքեր, գրելու և կարդալու համար անհրաժեշտ լուսավորություն, ինչպես նաև պատշաճ օդափոխության համակարգեր:

<u>Ձերբակալված և (կամ) կալանավորված անձանց փոխադրող հատուկ տրանսպորտային միջոցների համապատասխանությունը միջազգային չափանիշներին</u>

Այցերի ժամանակ տեղի ունեցած առանձնազրույցների ընթացքում ՁՊՎ-ներում պահվող ձերբակալված և կալանավորված անձինք հայտնել են իրենց դժգոհությունը փոխադրող հատուկ տրանսպորտային միջոցների անհարմարավետության մասին:

Ազատությունից զրկված անձանց պնդմամբ՝ փոխադրման ժամանակ երկու հոգու համար նախատեսված նստարաններին[9] իրենք, որպես կանոն, տեղավորվում են չորս հոգով՝ մեկը մյուսի ծնկներին նստելով: Դրա հետ մեկտեղ հայտնել են, որ հատուկ տրանսպորտային միջոցների խցիկներն ապահովված չեն օդափոխման և ապահովության տարրական համակարգերով (օրինակ՝ մեքենայի թափքածածկի օդանցքով, անվտանգության գոտիներով): Փոխադրման ընթացքում առկա չէ նաև հավասարակշռությունը պահելու հնարավորություն:

Վերջիններս նշել են նաև, որ որոշ դեպքերում հատուկ տրանսպորտային միջոցների խցիկների դռների ապակիների թաղանթապատվածության պատճառով լուսաթափանցելիությունը նվազում է: Նման պայմանները հոգեճնշող վիճակ են առաջացնում:

Վերոգրյալից բացի, ձերբակալված և կալանավորված անձինք հայտնել են, որ սահմանափակ նստատեղերի պատճառով փոխադրման ընթացքում հաճախ ստանում են վնասվածքներ՝ գլխով հարվածելով հատուկ տրանսպորտային միջոցի սրահը խցիկից բաժանող երկաթե միջնորմին: Ազատությունից զրկված անձանց պնդմամբ՝ տեղի ունեցած նման միջադեպի արդյունքում վնասվածքներ ստացած անձը տեղափոխվել է բժշկական հաստատություն:

---

[9] Հատուկ տրանսպորտային միջոցի տեխնիկական տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ նստատեղերը տեղադրված են «5+2» եղանակով (այս մասին տե՛ս http://uaz.am/models/uaz-hunter կայքէջը 30.03.2017թ.-ի դրությամբ): Այսինքն՝ սրահի 5 նստատեղերը նախատեսված են ուղեկցող ստորաբաժանման կազմի համար, իսկ խցիկի 2 փայտե նստելու հարմարանքները՝ նույն թվով ձերբակալված և կալանավորված անձանց համար:

Նշվածի վերաբերյալ ՀՀ կառավարության 2009 թվականի ապրիլի 2-ի «Ձերբակալված և կալանավորված անձանց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից ուղեկցման և պահպանման կարգը հաստատելու մասին» թիվ 351-Ն որոշման 19-րդ կետում սահմանվում է, որ ձերբակալված և (կամ) կալանավորված անձն ուղեկցման ժամանակ պետք է ունենա նստելու հնարավորություն:

Նման պայմանները չեն բխում նաև *«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին պարբերության պահանջներից, որոնց համաձայն՝ (…) կալանավորված անձին կալանքի տակ պահելը (հասկացության բովանդակության մեջ մտնում է նաև փոխադրելը) իրականացվում է (…) մարդասիրության, անձի արժանապատվությունը հարգելու սկզբունքների հիման վրա:*

Ազատությունից զրկված անձանց արժանապատիվ պայմաններում փոխադրումը կարևորվում է նաև միջազգային մի շարք փաստաթղթերում: *Այսպես, Եվրոպական բանտային կանոնների 32.2-րդ կետի համաձայն՝ ազատությունից զրկված անձանց փոխադրումն անբավարար օդափոխության կամ լուսավորման կամ ցանկացած այլ ֆիզիկապես ծանր պայմաններում արգելվում է:*

Նմանատիպ կարգավորում առկա է նաև Միավորված ազգերի կազմակերպության առաջին կոնգրեսի կողմից 1955 թվականի օգոստոսի 30-ին ընդունված Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների 45-րդ կետի 2-րդ ենթակետում:

Բարձրացված խնդրի առնչությամբ լրացուցիչ ուսումնասիրություններ կատարելու նպատակով Կանխարգելման մեխանիզմի աշխատակիցներն առանձնազրույց են ունեցել ուղեկցող ստորաբաժանման ծառայողների հետ, ինչպես նաև պարզել հատուկ տրանսպորտային միջոցի խցիկի տեխնիկական տվյալները:

Առանձնազրույցի ընթացքում ուղեկցող ստորաբաժանման ծառայողները հայտնել են, որ իրենք միաժամանակ ուղեկցում են 3-4 ձերբակալված և (կամ) կալանավորված անձի: Նշել են նաև, որ ուղեկցումը, որպես կանոն, իրականացնում են «ՈՒԱԶ» մակնիշի հատուկ տրանսպորտային միջոցներով:

Այդ մեքենայի խցիկի ընդհանուր ծավալն ըստ տեխնիկական տվյալների՝ կազմում է 400 լիտր[10]: Այլ կերպ՝ խցիկի մակերեսն կազմում է 0.4 քմ:

Հատուկ տրանսպորտային միջոցի խցիկի չափերին անդրադարձել է նաև ԽԿԿ-ն: Վերջինս անընդունելի է համարել 0.4, 0.5 և նույնիսկ 0.8 քմ տարածություն ունեցող խցիկներում անձանց փոխադրելը՝ անկախ դրա տևողությունից *(տե՛ս ԽԿԿ-ի 2002 թվականի նոյեմբերի 24-ից դեկտեմբերի 6-ն Ադրբեջան կատարած այցի վերաբերյալ*

[10] Տե՛ս http://avto-russia.ru/autos/uaz/uaz_31514.html կայքէջում՝ 30.03.2017թ.-ի դրությամբ:

զեկույցի 152-րդ կետը, 2000 թվականի փետրվարի 14-ից 23-ը Լիտվա կատարած այցի վերաբերյալ զեկույցի 117-րդ կետը, 2000 թվականի սեպտեմբերի 10-ից 26-ն Ուկրաինա կատարած այցի վերաբերյալ զեկույցի 129-րդ կետը, 1996 թվականի հունիսի 30-ից հուլիսի 12-ը Լեհաստան կատարած այցի վերաբերյալ զեկույցը, կետ 68):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ազատությունից զրկված անձանց վերը նշված պայմաններում փոխադրելը Եվրոպական դատարանը համարում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում (տե՛ս Իդալովն ընդդեմ Ռուսաստանի գործով 2012 թվականի մայիսի 22-ի վճիռը, գանգատ թիվ 5826/03, կետեր 54, 61 և 103, Խուդոյորովն ընդդեմ Ռուսաստանի գործով 2005 թվականի նոյեմբերի 8-ի վճիռը, գանգատ թիվ 6847/02, *կետ 117):*

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանը, ՀՀ ոստիկանությանն ուղղված գրությամբ, առաջարկել է հատուկ տրանսպորտային միջոցների պայմանները համաձայնեցնել ընդունված միջազգային չափանիշներին:

Նշվածի կապակցությամբ ՀՀ ոստիկանությունը տեղեկացրել է, որ ՀՀ ոստիկանության ուղեկցող ստորաբաժանումներում շահագործվում են տարբեր մակնիշի հատուկ տրանսպորտային միջոցներ: ՀՀ ոստիկանության կողմից ուղեկցման ժամանակ, կապված տրանսպորտային միջոցի մոդելից, ձերբակալված կամ կալանավորված անձանց հատուկ տրանսպորտային միջոցների խցիկներում նստեցնում են ըստ նստատեղերի քանակի: ՀՀ ոստիկանությունը բացառել է տրանսպորտային միջոցի մեջ նախատեսված քանակությունից ավելի անձ նստեցնելը:

Նշվել է նաև, որ համաձայն «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի՝ «Փոխադրման ընթացքում կալանավորված անձը պետք է հնարավորինս պաշտպանված լինի հասարակական հետաքրքրությունից» ինչով էլ պայմանավորված է հատուկ տրանսպորտային միջոցների ապակիների թաղանթապատվածությունը, բացի այդ ավտոմեքենայում առկա են լուսավորության սարքեր, որոնք բավարար լուսավորություն են ապահովում:

Ինչ վերաբերվում է սահմանափակ տեղի պատճառով ուղեկցման ընթացքում ձերբակալված և կալանավորված անձանց կողմից գլխով հատուկ տրանսպորտային միջոցի սրահը խցիկից բաժանող երկաթե միջնորմին հարվածելուն և վնասվածք ստանալուն, ապա նշվել է, որ նմանատիպ դեպքեր չեն արձանագրվել և այդ կապակցությամբ դիմում-բողոքներ չեն ստացվել:

ՀՀ ոստիկանությունը նաև նշել է, որ սահմանված չափանիշներին համապատասխան ուղեկցող հատուկ ավտոմեքենաները համալրելիս հաշվի կառնվեն Մարդու իրավունքների պաշտպանի առաջարկությունները:

ԳԼՈՒԽ 5. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Նույնականացման քարտերի տրամադրման հետ կապված խնդիրներ

Թեև դատապարտյալներին անձնագրերով (նույնականացման քարտերով) փաստաթղթավորման գործընթացը գտնվում է Քրեակատարողական վարչության ղեկավարության ուշադրության կենտրոնում և միջոցներ են ձեռնարկվում այն արագ և արդյունավետ կազմակերպելու համար, այնուամենայնիվ նույնականացման քարտերի տրամադրման հետ կապված, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2016 թվականի ընթացքում ստացել է մի շարք բողոքներ:

Մասնավորապես՝ ազատությունից զրկված մի շարք անձինք նշել են, որ լրացել է անձնագրի վավերականության ժամկետը, մյուս դեպքում նշվել է անձը հաստատող փաստաթղթի առհասարակ բացակայության մասին: Ներկայացվել են նաև նույնականացման քարտի տրամադրման համար սահմանված պետական տուրքի վճարման համար ազատությունից զրկված անձի մոտ բավարար միջոցների բացակայության, ինչպես նաև նույնականացման քարտերի տրամադրման գործընթացի անհարկի ձգձգումների կամ դրանք չտրամադրելու վերաբերյալ բողոքներ:

Այսպես, օրինակ՝ որոշ դատապարտյալներ հնարավորություն չունեն վճարել նույնականացման քարտերի տրամադրման համար սահմանված պետական տուրքը: Որոշ դեպքերում այս հարցը լուծվում է քրեակատարողական հիմնարկի պետի, աշխատակիցների և խցակիցների անձնական ֆինանսական միջոցների հաշվին:

ՀՀ արդարադատության նախարարության պարզաբանումների համաձայն՝ 2016 թվականի ընթացքում 76 կալանավորված անձանց և դատապարտյալների անձնագրերի վավերականության ժամկետը երկարացվել է, 185 անձի տրամադրվել են նույնականացման քարտեր և անձնագրեր, ՀՀ քաղաքացիության ճանաչման նպատակով 36 անձի համար միջնորդություն է ներկայացվել, ինչպես նաև 48 անձի տրամադրվել է հանրային ծառայության համարանիշ:

Անձնագրավորման հետ կապված մեկ այլ խնդիր է արձանագրվել «Հրազդան» քրեակատարողական հիմնարկում, որտեղ կալանավորված անձանցից մեկը հայտնել է, որ ՀՀ քաղաքացու նույնականացման քարտ ստանալու խնդրանքով դիմել է քրեակատարողական հիմնարկի վարչակազմին, սակայն նրանց կողմից միջոցներ չեն ձեռնարկվել իրեն նույնականացման քարտ կամ ժամանակավոր վկայական տրամադրելու ուղղությամբ:

ՀՀ արդարադատության նախարարությունը նշված խնդիրը պատճառաբանել է այն հանգամանքով, որ հաշվի է առնվել օրենքի այն պահանջը, որ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից միջոցներ կարող են ձեռնարկվել միայն դատապարտյալի կարգավիճակ ունեցող անձին նույնականացման քարտ տրամադրելու ուղղությամբ, իսկ տվյալ դեպքում վերջինս կալանավորված անձ է, ոչ թե՝ դատապարտյալ:

«Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքով սահմանվում է դատապարտյալին նույնականացման քարտի կամ ժամանակավոր վկայականի տրամադրման գործընթացը, սակայն կալանավորված անձանց վերաբերյալ որևէ կարգավորում նախատեսված չէ: *«Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «(...) Ժամանակավոր վկայական կարող է տրվել նաև ազատազրկման դատապարտված քաղաքացուն քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջոցով, իսկ կարճաժամկետ մեկնում ստացած դատապարտյալին՝ ընդհանուր հիմունքներով (...):»:*

Նշված իրավակարգավորմամբ սահմանվում է ինչպես դատապարտյալի ժամանակավոր վկայական ստանալու իրավունքը, այնպես էլ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից այդ գործընթացը կազմակերպելու պարտականությունը: Իրավական որոշակիությունն ապահովելու նպատակով և ելնելով այն հանգամանքից, որ քննարկվող ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտը ՀՀ քրեակատարողական օրենսգիրքն է՝ անհրաժեշտություն է առաջանում դատապարտյալի վերը նշված իրավունքի վերաբերյալ դրույթ ամրագրել նաև օրենսգրքի՝ նրա իրավունքները սահմանող համապատասխան հոդվածում՝ հղում կատարելով «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին:

Քրեակատարողական օրենսգրքում համապատասխան լրացում կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է նաև գործնականում օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով ամրագրված՝ դատապարտյալի՝ քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելու իրավունքի պատշաճ իրականացմամբ, քանի որ նման գործարքներ կնքելու դեպքում անհրաժեշտություն է առաջանում ունենալ անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, նույնականացման քարտ, ժամանակավոր վկայական և այլն):

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ ձերբակալված կամ կալանավորված անձը նույնպես իրավունք ունի մասնակցել քաղաքացիաիրավական գործարքներին:

Ձերբակալված կամ կալանավորված անձանց դեպքում նույնպես քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելու ընթացքում անհրաժեշտություն է առաջանում ունենալ անձը հաստատող փաստաթուղթ և

գործնականում կարող են լինել դեպքեր, երբ քաղաքացին, չունենալով նման փաստաթուղթ, ցանկանում է դիմել իրավասու պետական մարմնին այն ստանալու և վերը նշված գործարքներին մասնակցելու համար:

«Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը ժամանակավոր վկայական ստանալու իրավունք է նախատեսում ազատազրկման դատապարտված քաղաքացիների համար՝ նման իրավունք չնախատեսելով կալանավորված անձանց համար: Այսպես, գործնականում կարող են լինել դեպքեր, երբ այն կալանավորված անձը, ով չունի անձը հաստատող փաստաթուղթ, դրա վավերականության ժամկետը լրանալու, այն կորցնելու կամ այլ պատճառով, զրկվում է իր՝ քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելու իրավունքից:

«Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե օրենքով սահմանված հիմքերով քրեակատարողական հիմնարկի վարչակազմն ազատազրկման դատապարտված քաղաքացուց վերցրել է ժամանակավոր վկայականը կամ նույնականացման քարտը, ապա, դատապարտյալի կողմից քաղաքացիաիրավական գործարքներ կնքելու խնդրանքով պայմանավորված, պարտավոր է ժամանակավոր վկայականը կամ նույնականացման քարտը տրամադրել դատապարտյալին:

Նշված կարգավորումից հետևում է, որ քրեակատարողական հիմնարկում դատապարտյալների կողմից քաղաքացիաիրավական գործարքներ կնքելու դեպքում, վերջինս իրավունք ունի քրեակատարողական վարչակազմից խնդրել և ստանալ իր ժամանակավոր վկայականը կամ նույնականացման քարտը: Չնայած այն հանգամանքին, որ ձերբակալված կամ կալանավորված անձը նույնպես ունի քաղաքացիաիրավական գործարքներ կնքելու իրավունք, համանման իրավակարգավորում նրա վերաբերյալ ամրագրված չէ, ինչը գործնականում կարող է հանգեցնել վերջինիս իրավունքների սահմանափակմանը:

Ելնելով վերոգրյալից անհրաժեշտություն է առաջանում «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի 6-**րդ հոդվածի** 2-**րդ մասով նախատեսված ազատազրկման դատապարտված անձանց իրավունքները նախատեսել նաև կալանավորված անձանց համար**, **իսկ նույն հոդվածի** 3-**րդ մասում՝ ձերբակալված անձի համար**:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ <u>ձերբակալված</u> կամ կալանավորված անձն իրավունք ունի մասնակցել քաղաքացիաիրավական գործարքներին: Նույն օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ <u>ձերբակալված անձանց արգելվում է մասնակցել քաղաքացիաիրավական գործարքներին</u>: Ակնհայտ է նույն օրենքի տարբեր դրույթների միջև հակասությունը. դրանցից մեկի ուժով ձերբակալված անձն իրավունք ունի մասնակցել քաղաքացիաիրավական գործարքներին, իսկ մյուսով նա այդ իրավունքից զրկված է:

Ավելին, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի կամ նույն իրավական ակտի տարբեր մասերի միջև հակասության դեպքում պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ֆիզիկական ու իրավաբանական անձանց հետ հարաբերություններում պետք է կիրառեն ֆիզիկական և իրավաբանական անձանց համար նախընտրելի նորմատիվ իրավական ակտը կամ դրա մասը:»: Ելնելով նշվածից ակնհայտ է դառնում, որ ներկայիս իրավակարգավորումների առկայության պայմաններում կիրառվելու է «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը:

Այս կապակցությամբ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից մշակվել է կալանավորված անձանց և դատապարտյալներին նույնականացման քարտի տրամադրման ոլորտը կանոնակարգող իրավական ակտերում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու վերաբերյալ օրենքի նախագիծ, որը կներկայացվի շրջանառության՝ սահմանված կարգով:

Համաներման ակտի կիրառման հետ կապված խնդիրներ

Ազատությունից զրկման վայրեր այցերի ընթացքում կատարված դիտարկումները, ինչպես նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքների ուսումնասիրությունը ցույց են տալիս, որ դատապարտյալների նկատմամբ Համաներման ակտի[11] կիրառման կապակցությամբ առաջանում են մի շարք խնդիրներ:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկի բովանդակային ուսումնասիրությամբ պարզվել է, որ քրեակատարողական հիմնարկի պետը կայացրել է որոշում անձի նկատմամբ Համաներման ակտը կիրառելու մասին, որը, սակայն, որոշ ժամանակ անց պետի մեկ այլ որոշմամբ վերացվել է:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը պահանջել է ներկայացնել տեղեկություններ՝ քրեակատարողական հիմնարկի պետի կողմից անձի նկատմամբ Համաներման ակտը կիրառելու մասին կայացված որոշումը վերացնելու իրավական հիմքերի վերաբերյալ:

Պատասխան գրությամբ ՀՀ արդարադատության նախարարությունը հայտնել է, որ 2015 թվականի հոկտեմբերի 28-ին կայացված և օրինական ուժի մեջ մտած ՀՀ

[11] Սույն հաղորդման իմաստով Համաներման ակտ են համարվում ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» 2011 թվականի մայիսի 26-ի ԱԺՈ-277-Ն և ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ԱԺՈ-080-Ն որոշումները:

վերաքննիչ քրեական դատարանի որոշմամբ անձի նկատմամբ 2015 թվականի հուլիսի 1-ին կայացված դատավճիռը փոփոխվել է և նա մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: Պատիժ է նշանակվել ազատազրկում 6 տարի 6 ամիս ժամկետով, անձնական գույքի բռնագրավմամբ, բայց ոչ ավելի քան (…) ՀՀ դրամ: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիմքով 2012 թվականի հուլիսի 4-ի դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նշանակված պատիժը մասնակի գումարելով վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում 7 տարի ժամկետով: Նշանակված 7 տարի ժամկետով ազատազրկման ձևով պատժին հաշվակցելով 2008 թվականի դեկտեմբերի 3-ից մինչև 2009 թվականի հունվարի 1-ն արգելանքի տակ գտնվելու 1 ամիս 25 օր նախնական կալանքը՝ վերջնական թողնվել է կրելու 6 տարի 10 ամիս 5 օր, անձնական գույքի բռնագրավմամբ՝ (…) ՀՀ դրամ և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով 3 տարի ժամկետով: Դատավճիռը մնացած մասով թողնվել է անփոփոխ:

Վերոգրյալի հետ մեկտեղ ՀՀ արդարադատության նախարարությունը տեղեկացրել է, որ ըստ 2015 թվականի հոկտեմբերի 28-ի ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի որոշման՝ հանցանքը կատարվել է 2005-2011թթ. հոկտեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում և երկու դատավճիռներով կատարած հանցանքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից դիտվել է որպես մեկ միասնական դիտավորությամբ կատարված մեկ հանցավոր արարք՝ տալով տարբեր քրեաիրավական որակումներ, իսկ Համաներման ակտը կիրառվում է այն անձանց նկատմամբ, ովքեր հանցանքը կատարել են մինչև 2011 թվականի մայիսի 1-ը ներառյալ:

Պաշտպանին ներկայացված մեկ այլ բողոքով դիմումատուն նշել է, որ դատարանը դատավճիռ կայացնելիս չի անդրադարձել իր նկատմամբ Համաներման ակտի կիրառելիության հարցին: Խնդրի առնչությամբ 2016 թվականի մայիսի 16-ին դիմել է դատարան, որն իր որոշման մեջ 2012 թվականի մայիսի 30-ի դատավճռի եզրափակիչ մասը լրացրել է հետևյալ բովանդակությամբ, նոր պարբերությամբ. «կիրառել Համաներման ակտի 8-րդ կետի 5-րդ ենթակետը՝ պատժաչափը կրճատելով մեկ քառորդով: Պատժաչափի չկրած մասի կրճատելու հաշվարկը կատարել ՀՀ արդարադատության նախարարության համապատասխան քրեակատարողական հիմնարկում:»:

Քրեակատարողական հիմնարկի պետի որոշմամբ անձի նկատմամբ կիրառվել է Համաներման ակտը և պատժի չկրած մասը կրճատվել է 1 տարի 2 ամիս 1 օրով: Դիմումատուի պնդմամբ՝ պատժի չկրած մասը սխալ է հաշվարկվել, քանի որ հաշվարկը պետք է կատարվեր ոչ թե դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից, այլ 2012 թվականի մայիսի 30-ից, այսինքն՝ դատավճիռը կայացնելու պահից:

Ըստ դիմումատուի՝ ճշգրիտ հաշվարկի դեպքում պատժի չկրած մասը կկրճատվեր ոչ թե 1 տարի 2 ամիս 1 օրով, այլ 1 տարի 4 ամիս 3 օրով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը հարցում է ուղարկել ՀՀ արդարադատության նախարարություն՝ պահանջելով ներկայացնել դիմումատուի նկատմամբ նշանակված պատժի չկրած մասի կրճատելու հաշվարկի վերաբերյալ տեղեկություններ:

ՀՀ արդարադատության նախարարության պատասխան գրության բովանդակային ուսումնասիրությունից պարզվել, որ այն բավարար չափով պատճառաբանված չէ: Այլ կերպ՝ այն չի պարունակում բարձրացված էական՝ առանցքային նշանակություն ունեցող հարցի պատասխանը, այն է՝ ի՞նչ իրավական հիմքերով (օրենսդրական կարգավորումներով) է ղեկավարվել քրեակատարողական հիմնարկի պետը Համաներման ակտի հաշվարկը դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու, այն է՝ 2013 թվականի փետրվարի 8-ից, այլ ոչ թե 2012 թվականի մայիսի 30-ից, այսինքն՝ դատավճիռը կայացնելու պահից հաշվարկելիս:

Խնդրահարույց է նաև համաներում կիրառելու գործընթացն արհեստականորեն ձգձգելու հետ կապված խնդիրը: 2016 թվականի ընթացքում նշված խնդրի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացվել են մի շարք բողոքներ, որոնց քննարկման արդյունքում դրանք բոլորը ստացել են դրական լուծում:

Շարունակում է արդիական մնալ նաև խոշտանգում հանցագործության կատարման համար համաներում կիրառելու արգելքի օրենսդրական ամրագրման հարցը: Նշված խնդրի հիմնավորումները ներկայացված են «2014 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին»[12] և 2015 թվականի բռնությունների կանխարգելման ազգային մեխանիզմի տարեկան զեկույցներում[13]:

Վերոգրյալի համատեքստում անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել խոշտանգում հանցագործության կատարման համար համաներում կիրառելու արգելքի օրենսդրական ամրագրման հարցը:

Ապագայում համաներման մասին օրենք ընդունելիս անհրաժեշտ է նաև հաշվի առնել գործնականում առաջացած խնդիրները և տարամեկնաբանությունները:

---

[12]Տե՛ս http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/206d2af54f5149a560ed7a616830d107.pdf կայքէջը, 30.03.2017թ. դրությամբ, էջեր, 39-40 էջերը:

[13]Տե՛ս http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/a42b07b145e69f9193cda108ef262d7c.pdf կայքէջը, 30.03.2017թ. դրությամբ, էջեր 392-394:

<u>Ներքին կանոնակարգի խախտում կատարելու հետևանքով ազատությունից զրկված անձին 24 ժամով ժամանակավոր մեկուսացումը</u>

2016 թվականի ընթացքում արձանագրվել են Ներքին կանոնակարգի խախտում կատարելու հետևանքով ազատությունից զրկված անձանց մինչև 24 ժամով ժամանակավոր մեկուսացնելու հետ կապված մի շարք խնդիրներ:

Պաշտպանին ներկայացված բողոքով «Հրազդան» քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող դատապարտյալը հայտնել է, որ 2016 թվականի մայիսի 28-ից հունիսի 3-ը, եղել է մեկուսացված, ապա հունիսի 3-ին քրեակատարողական հիմնարկի պետի որոշմամբ իր նկատմամբ 15 օրով պատժախուց տեղափոխելու ձևով տույժի միջոց է կիրառվել:

Նշված դիմումի ուսումնասիրությամբ պարզվել է, որ Ներքին կանոնակարգի միևնույն խախտումը կատարելու համար մեկուսացման յուրաքանչյուր օրվա համար կազմվել են նույնաբովանդակ որոշումներ:

Այսպիսով՝ դատապարտյալը փաստացի մեկուսացման մեջ է եղել շուրջ 20 օր, իսկ 2016 թվականի մայիսի 28-ից մինչև հունիսի 3-ը մեկուսացման մեջ է եղել պատժախցում պահվելու համար նախատեսված պայմաններում:

«Հրազդան» քրեակատարողական հիմնարկում նշված խնդիրն արձանագրվել է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես բռնությունների կանխարգելման ազգային մեխանիզմի 2015 թվականի տարեկան զեկույցում[14]:

ՀՀ արդարադատության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության անվտանգության ապահովման կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 194-Ն հրամանի 24-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ կարգապահական խախտման, դրա պայմանները վերացնելու անհրաժեշտության, կալանավորված անձի կամ դատապարտյալի համապատասխան դիմելու դեպքերում քրեակատարողական հիմնարկի պետի բացակայության ժամանակ անվտանգությունն ապահովող հերթապահ խմբի կամ քրեակատարողական հիմնարկի այլ ծառայողի գրավոր զեկուցագրի հիման վրա կալանավորված անձին կամ դատապարտյալին ***առավելագույնը*** *24* ***ժամով ժամանակավոր մեկուսացնում է մինչև քրեակատարողական հիմնարկի պետի ժամանելը՝ կազմելով համապատասխան արձանագրություն:***

Միավորված ազգերի կազմակերպության ազատությունից զրկված անձանց նկատմամբ վարվեցողության նվազագույն կանոնների 43-րդ կանոնի 1-ին մասի համաձայն՝ ոչ մի դեպքում սահմանափակումներն ու կարգապահական տույժերը

[14]Տե՛սhttp://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/a42b07b145e69f9193cda108ef262d7c.pdf կայքէջը, 30.03.2017թ. դրությամբ, էջ 348:

չպետք է հավասարվեն խոշտանգումների կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Մասնավորապես, ի թիվս այլնի, պետք է արգելվի ազատությունից զրկված անձանց անորոշ ժամկետով կամ երկարաժամկետ մեկուսացումը:

Նույն փաստաթղթի 44-րդ կանոնի համաձայն՝ ազատությունից զրկված անձանց մեկուսացում դիտարկվում են այն դեպքերը, երբ անձն օրվա ընթացքում 22 ժամ և ավելի պահվում է միայնակ՝ առանց բավարար մարդկային շփման: Երկարաժամկետ մեկուսացման տակ պետք է հասկանալ 15 օրը գերազանցող ժամանակով ազատությունից զրկված անձի մեկուսացումը:

Միացյալ Թագավորության ազգային կանխարգելման մեխանիզմի կողմից 2017 թվականի հունվար ամսին մշակված ազատությունից զրկման ընթացքում մեկուսացման վերաբերյալ ուղեցույցի համաձայն[15]՝ երկարաժամկետ մեկուսացման դեպքում՝ ազատությունից զրկված անձի 15 օրը գերազանցող ժամանակով մեկուսացումը պետք է անհապաղ դադարեցվի: Մեկուսացումը կիրառելու դեպքում այն պետք է նախատեսվի հնարավոր ամենասեղմ ժամանակահատվածի համար:

Ըստ նույն ուղեցույցի ազատությունից զրկված անձին մեկուսացնելու մասին որոշման կայացնելու համար պետք է լինի հստակ, թափանցիկ ընթացակարգ և այն կիրառվի միայն բացառիկ հանգամանքներում:

Նշված դրույթի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ազատությունից զրկված անձանց մեկուսացման հետ կապված մի շարք կարգավորումներ խնդրահարույց են, մասնավորապես՝

1. **ազատությունից զրկված անձանց մեկուսացման մասին որոշում կայացնելը և նրանց պատժախցային պայմաններում պահելն այն պարագայում, երբ պատժախուց տեղափոխելու վերաբերյալ որոշում կայացնելու իրավասությունն օրենքով վերապահված է միայն քրեակատարողական հիմնարկի պետին**.

2. **կալանավորված անձին կամ դատապարտյալին մինչև քրեակատարողական հիմնարկի պետի ժամանելն առավելագույնը** 24 **ժամով ժամանակավոր մեկուսացնելու մասին իրար հաջորդող որոշումներ կայացնելու առավելագույն սահմանաչափի բացակայությունը**.

3. **մեկուսացման ժամանակ ազատությունից զրկված անձը պահելու պայմանների հստակ ամրագրման բացակայություն** (**օրինակ՝ պատժախի կամ հասարակ խցային պայմաններին համապատասխան**).

4. **պատժախցային պայմաններում ազատությունից զրկված անձին պահելու դեպքում, մեկուսացման մեջ գտնվելու ժամանակահատվածը պատժախուցը տեղափոխելիս որպես տույժի միջոց կիրառված ժամանակահատվածի մեջ հաշվանցելու հարցը**:

---

[15] Տե՛ս http://www.nationalpreventivemechanism.org.uk/wp-content/uploads/2017/02/NPM-Isolation-Guidance-FINAL.pdf կայքէջում, 30.03.2017թ. դրությամբ:

Ներկայացված խնդիրներն անհրաժեշտ է կարգավորել համապատասխան օրենսդրական փոփոխությունների միջոցով:

<u>Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում</u>

Ազատությունից զրկված անձանց պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու գործող կառուցակարգը տարիներ շարունակ չի ապահովել այդ ինստիտուտի հետապնդած նպատակը և կարիք ունի սկզբունքային վերանայման ու բարեփոխումների:

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի (այսուհետ՝ Անկախ հանձնաժողով) գործունեությունը կարգավորվում են ՀՀ Նախագահի 2006 թվականի հուլիսի 31-ի ՆՀ-163-Ն հրամանագրով:

Նշված իրավական ակտը պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի միջնորդագրին հավանություն չտալու մասին որոշումը հիմնավորելու կամ պատճառաբանելու պահանջ Անկախ հանձնաժողովի համար չի սահմանում: Ըստ նույն հրամանագրի 21-րդ կետի՝ Անկախ հանձնաժողովի որոշումները բողոքարկման ենթակա չեն, բացառությամբ այն դեպքերի, երբ որոշումները կայացվել են այդ կարգի խախտմամբ:

Նույնանման կարգավորում է բովանդակում ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 4-րդ մասը, համաձայն որի՝ (…) Անկախ հանձնաժողովի որոշումները ենթակա չեն բողոքարկման, բացառությամբ օրենքին հակասելու, ինչպես նաև ՀՀ Նախագահի հրամանագրով սահմանված կարգի խախտմամբ ընդունվելու դեպքերի:

2016 թվականի մարտի 22-ին ՀՀ արդարադատության նախարարության կողմից շրջանառվել է օրենսդրական փոփոխությունների փաթեթի նախագիծ՝ ուղղված պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի փոփոխությանը:

Նախագծի վերաբերյալ կարծիքում Պաշտպանի կողմից ներկայացվել են առաջարկություններ՝ հաշվի առնելով պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման գործընթացի հետ կապված Պաշտպանի աշխատակազմ մուտքագրված բազմաթիվ բողոքների ուսումնասիրության և դրանց քննարկման ընթացքում վերհանված օրենսդրական թերի կարգավորումներն ու բացերը: Մասնավորապես՝ ապահովված չեն պայմանական վաղաժամկետ ազատման մատչելի և կանխատեսելի ընթացակարգեր և չափանիշներ, որոնք պատշաճ կերպով կծանուցեն դատապարտյալին Անկախ հանձնաժողովի նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին, հնարավորություն կտան անձին այդ կապակցությամբ ստանալ իրավաբանական օգնություն, ծանոթանալ իր վերաբերյալ Անկախ հանձնաժողովին

ներկայացված նյութերին և անվճար ստանալ դրանց պատճենները, հայտնել բացարկներ, դատական կարգով բողոքարկել վերջինիս որոշումները և այլն:

Նշված առաջարկությունները քննարկվել են նաև 2016 թվականի դեկտեմբերի 6-ին Պաշտպանին առընթեր Խոշտանգումների կանխարգելման փորձագիտական խորհրդի ընդլայնված նիստի ընթացքում, որին մասնակցել են նաև ներկայացուցիչներ ՀՀ արդարադատության նախարարությունից, Քրեակատարողական ծառայությունից, ՀՀ գլխավոր դատախազությունից, ՀՀ քննչական կոմիտեից, մի շարք հասարակական կազմակերպություններից, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցներից:

Կալանավորված անձին և ազատազրկման ձևով պատիժը կրող դատապարտյալին ծանր հիվանդության հիմքով համապատասխանաբար՝ կալանքից և պատժից ազատելու իրավական ընթացակարգերի օրենսդրական կարգավորման բացեր

2016 թվականի ընթացքում արձանագրվել են մի շարք գործնական և օրենսդրական խնդիրներ, որոնք կապված են ծանր հիվանդության հիմքով պատժի կրումից (իսկ կալանավորված անձի դեպքում կալանքից) ազատվելու գործընթացի հետ:

Մասնավորապես.

- Խնդրահարույց են պատժի կրման հետ անհամատեղելի համարվող հիվանդությունների ցանկում հիվանդությունների ընտրության հիմնական սկզբունքներն ու չափորոշիչները:

Հաճախ գործնականում լինում են դեպքեր, երբ ազատությունից զրկված հիվանդ անձը, թեև չի տառապում ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման (այսուհետ՝ 825-Ն որոշում) № 2 հավելվածով սահմանված պատիժը կրելուն (իսկ կալանավորված անձի դեպքում կալանքի տակ գտնվելուն) խոչընդոտող ծանր հիվանդություններով, սակայն, դրա հետ մեկտեղ տառապում է այլ հիվանդությամբ և կարիք ունի ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 28-ի № 57-Ն հրամանով հաստատված պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում չընդգրկված նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող բժշկական ծառայությունների: Նշված խնդրի լույսի ներքո անհրաժեշտ է վերանայել 825-Ն որոշմամբ սահմանված ծանր հիվանդությունների ցանկը:

- 825-Ն որոշումն ընդունվել է 2006թ. մայիսի 26-ին, իսկ «Հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասակարգիչը» 10-րդ վերանայմամբ սահմանվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի

սեպտեմբերի 19-ի 871-Ն հրամանով: Ուստի, անհրաժեշտություն է առաջանում Ցանկում ընդգրկված հիվանդությունները համապատասխանեցնել վիճակագրական դասակարգչին:

Խնդրահարույց է նաև հիվանդությունների մեխանիկական համապատասխանեցումը «Հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասակարգչին (ՀԴ-014-2013)», սակայն պրակտիկայում անհրաժեշտ է նաև հիվանդությունները սահմանել ըստ կլինիկական դասակարգման: Ավելին, մի շարք հիվանդությունների կլինիկական դասակարգումներն ըստ հեղինակների տարբեր են, և հարկ է դրանք մատնանշելիս հղում կատարել հեղինակին:

- 825-Ն որոշման 17-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ Բժշկական աշխատանքային հանձնաժողովն իրականացնում է **դատական որոշման կատարման հետաձգման ներկայացնելու ենթակա** հիվանդ դատապարտյալներին ՀՀ կառավարության՝ 2003 թվականի դեկտեմբերի 4-ի «Միջգերատեսչական բժշկական հանձնաժողովներ ստեղծելու կարգը հաստատելու մասին» N 1636-Ն որոշմամբ հաստատված կարգով ստեղծված համապատասխան միջգերատեսչական բժշկական հանձնաժողովին ներկայացնելու գործընթացը՝ սույն որոշման 1-ին կետի «բ» ենթակետով հաստատված պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկին համապատասխան: Սակայն հստակ չէ, թե որ դատական որոշման կատարման մասին է խոսքը և ինչ պետք է հասկանալ «հետաձգել» եզրույթի ներքո: Բանն այն է, որ ՀՀ քրեական օրենսգիրքը ծանր հիվանդությունների հիմքով պատիժը հետաձգելու կարգավորում չի նախատեսում:
- 825-Ն որոշմամբ չի սահմանվում նաև թե ինչպես, ում կողմից և ինչ ժամկետներում է հիվանդ դատապարտյալի գործը քրեակատարողական հիմնարկից ներկայացվում բժշկական աշխատանքային հանձնաժողովին: Նշված որոշմամբ չի սահմանվում նաև թե արդյոք դատապարտյալն իրավունք ունի ինքնուրույն կամ օրինական ներկայացուցչի միջոցով դիմել հանձնաժողովին: Այլ կերպ՝ անհրաժեշտ է վերանայել իրավասու մարմնների լիազորությունները և սահմանել վերջիններիս գործունեության առավել հստակ իրավական ընթացակարգեր:
- Խնդրահարույց են բժշկական աշխատանքային հանձնաժողովի կողմից որոշում կայացնելու ժամկետները և այն հարցերի շրջանակը, որոնց վերաբերյալ բժշկական աշխատանքային հանձնաժողովը կարող է որոշումներ կայացնել: Սահմանված չէ նաև որոշումների հիմնավորման հստակ պահանջ:
- Հարկ է կարգավորել նաև բժշկական աշխատանքային հանձնաժողովի որոշումների առարկան և հասցեատերերի շրջանակը: 825-Ն որոշման 18-րդ կետի համաձայն՝ բժշկական աշխատանքային հանձնաժողովի որոշումները ենթակա են պարտադիր կատարման: Մինչդեռ պարզ չէ, թե ում համար են այդ որոշումները պարտադիր, և ով պետք է դրանք կատարի: Միջգերատեսչական հանձնաժողովի

համար պարտադիր լինելու պարագայում, վերջինս չի կարող դրանց հակասող որոշում կայացնել:

- 825-Ն որոշման հավելված 2-րդը սահմանում է՝ պատիժը կրելուն խոչընդոտող հիվանդությունները, սակայն ցանկում առկա հիվանդությունները գործնականում հաշվի են առնվում նաև ծանր հիվանդությամբ տառապող կալանավորված անձանց նկատմամբ կալանքը՝ որպես խափանման միջոց կիրառելու հարցի քննարկման համար: Նման պրակտիկան պայմանավորված է նրանով, որ ծանր հիվանդության հիմքով կալանքից ազատելու հարցի քննության գործընթացը և ժամկետները որևէ իրավական ակտով կարգավորված չեն:
- 825-Ն որոշման 1-ին հավելվածի 17-րդ կետի համաձայն՝ բժշկաաշխատանքային հանձնաժողովն իրականացնում է դատական որոշման կատարման հետաձգման ներկայացման ենթակա հիվանդ դատապարտյալներին թիվ 1636-Ն որոշմամբ հաստատված կարգով ստեղծված համապատասխան բժշկական հանրապետական հանձնաժողով ներկայացնելու գործընթաց: Այսինքն, նշված 17-րդ կետի համաձայն՝ բժշկաաշխատանքային հանձնաժողովի գործառույթների մեջ չի մտնում պատժից ազատման ենթակա հիվանդ դատապարտյալին միջգերատեսչական հանձնաժողովին ներկայացնելը, այլ ներառում է միջգերատեսչական հանձնաժողովին այն անձանց ներկայացնելը, որոնց նկատմամբ կայացված դատական ակտը ենթակա է հետաձգման: Սակայն գործնականում բժշկաաշխատանքային հանձնաժողովին ներկայացվում են նաև հիվանդ դատապարտյալներ, ովքեր իրենց հիվանդության պատճառով կարող են ազատվել պատժից, և այդ նպատակով նրանց գործը բժշկական աշխատանքային հանձնաժողովի որոշմամբ ներկայացվում է բժշկական փորձաքննություն իրականացնող միջգերատեսչական հանձնաժողովին: Ստացվում է, որ բժշկական աշխատանքային հանձնաժողովը հիվանդ դատապարտյալին պատժից ազատելու նպատակով բժշկական եզրակացությամբ միջգերատեսչական հանձնաժողովին ներկայացնելու լիազորություն չունի, սակայն իրականացնում է նման գործառույթ:
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. դեկտեմբերի 4-ի թիվ 1636-Ն որոշմամբ ստեղծվել են համապատասխան միջգերատեսչական հանձնաժողովներ, սակայն դրանց աշխատանքի կանոնակարգումն ամրագրված չէ նշված որոշման մեջ կամ այլ իրավական ակտում: Մասնավորապես, առավել խնդրահարույց են միջգերատեսչական հանձնաժողովում որոշումների կայացման կարգը, չափանիշները, ժամկետները, որոշումները հիմնավորելու պարտականությունը, դրանք պարտադիր կերպով գրավոր կազմելու և դատապարտյալին տեղեկացնելու պահանջները: Հստակ չէ, թե ինչպիսի գիտելիքների կիրառմամբ կատարված փորձաքննությունների արդյունքում է միջգերատեսչական հանձնաժողովը բացասական որոշում կայացնում բժշկաաշխատանքային հանձնաժողովի դրական որոշման պարագայում:

- Անհրաժեշտ է վերանայել վերոնշյալ հանձնաժողովների կազմերը և կազմավորման սկզբունքները, ինչպես նաև դրանց լիազորություններն ու գործունեության իրավական կարգավորումները:
- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե անձը հանցանք կատարելուց կամ դատավճիռ կայացնելուց հետո հիվանդացել է այլ ծանր հիվանդությամբ, որը խոչընդոտում է պատիժը կրելուն, ապա դատարանը **կարող է** նրան ազատել պատիժը կրելուց՝ հաշվի առնելով կատարված հանցանքի ծանրությունը, դատապարտյալի անձը, հիվանդության բնույթը և այլ հանգամանքներ: Նշված նորմի վերլուծությունից ակնհայտ է, որ այն ունի հայեցողական բնույթ:

Վերոգրյալից հետևում է, որ ՀՀ քրեական, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքերի համապատասխան նորմերով նույնպես անհրաժեշտ է սահմանել հստակ և որոշակի կարգավորումներ՝ նախատեսելով դատական քննության սեղմ ժամկետներ, դատապարտյալի և նրա ներկայացուցչի մասնակցության պայմաններ, դատական քննության, դատական նիստի անցկացման, ինչպես նաև դատական ակտի հրապարակման ընթացակարգեր: